Էջմիածին



1966

АЖ140

ՌՆԺԵ
ԻԳ ՏԱՐԻ
Յունուար

ԷՋՄԻԱԾԻՆ

ՍԱ-6516

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ա

1966

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Հայկական քարեգործական ընդհանուր միության հիմնադրման վաթսունամյակի առթիվ 3

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Կոստանդնուպոլսում Գալֆյան որբանոցի հիմնադրման ճարյուրամյակի առթիվ 5

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Կիպրոսի Մելոնյան կրթական հաստատության հիմնադրման հարյուրամյակի առթիվ 7

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Մարսելի և Հարավային Ֆրանսիայի հայոց 9

Ամանորի և Փրկչի հարշափառ և Սուրբ Մեծդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Երվանդյանի Կայսր նորին Վեհափառություն Հայլի Սելասիե Ա-ի միջև փոխանակված հեռագրերը 11

Փրկչի հարշափառ և Սուրբ Մեծդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Բույր եկեղեցիների ճոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները 12

Ամանորի և Փրկչի հարշափառ և Սուրբ Մեծդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Եվրոպական Աթոռների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները 21

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Ամանոր և Սուրբ Մեծդյան 24

Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ և քարոզ Մայր Տաճարում, Փրկչի հարշափառ Մեծդյան տոնի առթիվ 26

Հայկական քարեգործական ընդհանուր միության վաթսունամյակը 29

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 31

Ամանոր Մայր Աթոռում 35

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ճամակը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս նորին Ս. Օծություն Տ. Տ. Խորեն Ա-ին 37

Գեղագույն Հոգևոր խորհրդի ճամակը Մարսել, Հ. Պապիկյանին և Կ. Ճանճիկյանին . 39

Հայտարարություն 41

ՆԵՐՍԵՍ Ե. ՎՐԴ. ՊՈՂՈՍՅԱՆ— Մեր առաջին երկու լուսավորիչները 43

Վատիկանի երկրորդ ժողովի չորրորդ նստաշրջանի աշխատանքները 46

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊՅԱՆ— Եկեք բոլորդ էջմիածնի ճովանիին տակ 49

ՆՈՐԱՅՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԾՈՎԱԿԱՆ— «Թույլ առ Ցիզիիրուզ» 50

Հ. Ա. ԱԻՐՈՒՆԻ— Կոմիտասին հետ 51

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ 61

Խմբագրության հասցեն՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»

Rédaction de la revue „Etchmiadzine", Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1986 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՂԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՎԱԹՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՎԱՉԳԷՆ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՉԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ, ՅԱՐԳԱՐԺԱՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՄԱՍՆԱՃԻՒՂՈՅ ԵՒ ՀԱՄԱՅՆ ԲԱՐԵՍԷՐ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՊԱՇՏ ԱՆԴԱՄՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ, Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ ՈՂՋՈՒՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Քսաներորդ դարը հայ ժողովուրդի կեանքին վրայ բացուեցաւ նախախնամական ընծայով մը։ 1908 թուականին Նեղոսի արևոտ ափերուն ծնունդ առաւ բարի գործի նուիրուած հայկական կազմակերպութիւն մը, զոր յղացաւ ու գլխաւորեց մեծ սրտի տէր պայծառատես հայ մարդ մը՝ Պօղոս Նուպար, իր նման ազնիւ հոգիներու անմիջական գործակցութեամբ։

Անցնող վաթսուն տարիները կը վկայեն, թէ սոյն կազմակերպութիւնը եղաւ հարազատօրէն հայկական, ճշմարտապէս բարեգործական, համազգային իմաստով ընդհանուր, եղբայրական սիրով գօտեպինդ միութիւն մը, իբրև առաջնորդող ոգի ունենալով քրիստոնէական գութի զգացումը և հայ ժողովուրդին ու հայրենիքին նեցուկ հանդիսանալու գիտակցութիւնը։

Հայկական բարեգործական ընդհանուր միութիւնը ծառայութեան և զոհաբերութեան ուխտ մըն է, որ անա վեց տասնամեակներէ ի վեր կը գործէ

հայ ժողովուրդի ծոցին մէջ ամէն տեղ: Այս ամբողջ ժամանակաշրջանին, հայ ազգային կեանքին սէջ չկայ կարևոր ու բախտորոշ իրադարձութիւն մը, շինարար մեծ ձեռնարկ մը՝ կրօնական, կրթական կամ հայրենասիրական, որուն կենսագործման, ամբողջապէս կամ մասամբ, օժանդակած չըլլայ Հայկական բարեգործական ընդհանուր միութեան բարի ձեռքը, գիտակցական հաստատութեամբ մեր ժողովուրդի անցեալէն մեզի հասած ժառանգութեան և անայլայլ հաստատքով անոր ներկայի ու ապագայի նկատմամբ:

Այսպիսի միութիւն մը կոչուած է յաւէտ ապրելու, վասնզի ան կը մարմնաւորէ հայ ժողովուրդի ապրելու, գոյատևելու և ստեղծագործելու վաւերական կերպերէն մին, ու կը գործէ հայ ժողովուրդի յաւէրժութեան համար:

Ս. Էջմիածնէն, իբրև Հայոց Հայրապետ, անհուն մխիթարութեամբ կը շնորհաւորենք ու կ՚օրհնենք Հայկական բարեգործական ընդհանուր միութիւնը և իր բոլոր բարեսէր անդամները և անոր կեդրոնական վարչութեան իմաստուն և ազնուասիրտ ղեկավարները՝ հայցելով բոլորին համար Սուրբ Հոգիին օգնականութիւնը, որպէսզի նոյն ոգիով, նոյն եռանդով և նոյն արդիւնաւէտութեամբ շարունակեն իրենց բարեգործական առաքելութիւնը մեր ազգային կեանքէն ներս, հետզհետէ առաւել համախմբելով երիտասարդ ու կենսունակ ուժեր և հետզհետէ առաւել տարածելով իրենց կենարար հովանին Սփիւռքի հայութեան լայն զանգուածներուն վրայ:

Ամէն հայու նուիրական պարտքն է գնահատել Հայկական բարեգործական ընդհանուր միութիւնը ու զօրավիգ կանգնիլ անոր, ամրակուռ ու անսասան պահել զայն և սատարել բարոյապէս և նիւթապէս անոր ազգաշէն աշխատանքին:

Ողջոյն և յարգանք և հայրենապետական օրհնութիւն Հայկական բարեգործական ընդհանուր միութեան, անոր երջանկայիշատակ հիմնադիրներուն, անոր վաթսունամեայ փառաւոր գործունէութեան և անոր ներկայ իմաստուն ու անձնուէր ղեկավարութեան:

Թող ապրի, զօրանայ ու բարգաւաճի բարեգործութեան կոչուած հայոց մեծ կազմակերպութիւնը՝ ի փառս հայ ազգի բարոյական հանճարի:

«Այսուհետև զօրացարուք Տերամբ, և կարողութեամբ զօրութեան Նորա. և զգեցարուք զսպառազինութիւնն Աստուծոյ» (Եփես. Զ 10—11), և **«Ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս և Աստուած և Հայր մեր..., մխիթարեսցէ զսիրտս Ձեր և հաստատեսցէ յամենայն բանս և գործս բարութեան»** (Բ Թեսաղ. Բ 15—16):

Ամէն:

ԵՒՍԹՐԱԳՈՍՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 1-ն յունուարի
1966 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԾԵ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ ԳԱԼՖԱՅԱՆ ՈՐԲԱՆՈՑԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՎԱՋԳԷՆ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԵՒ ԲԱՐԵԳՈՐԾ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԱՆԴԱՄՈՑ ՈՒԽՏԻՆ ԳԱԼՖԱՅԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ, ՀԱՐԱՋԱՏ ԴՍՏԵՐԱՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ՅԱՐԳԱՐԺԱՆ ԱՆԴԱՄՈՅ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՍԱՆՈՒՀԵԱՑ ՀՆՈՅ ԵՒ ՆՈՐՈՅ, ՈՂՋՈՒՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ

«Քանզի գլուխ պատուիրանին սէր է, ի սուրբ սրտէ և ի մտաց բարեաց և յանկեղծաւոր հաւատոց» (Ա Տիմոթ. Ա 5):

Աստուծոյ ողորմութեամբ, ահա հարիւր տարի կը լրանայ երանելի այն օրէն, երբ սիրոյ մեծ պատուիրանին նուիրուած բարեպաշտ ու առաքինի հոգի մը՝ Սրբուհի մայրապետ Գալֆայեան, հիմնեց իր որբանոցը, որուն սեղանէն հաց և լոյս բաշխուեցան առատապէս, Վոսփորի ափերուն անտէր ու անմխիթար մնացած մեր ազգի զաւակներուն:

Լուսաբնակ Սրբուհի մայրապետ և իր ձեռակերտը եղան տևապէս իրաւ մարմնացումը քրիստոնէական մարդասիրական ոգիի, սուրբ սրտի, բարի մտածումի և անկեղծաւոր հաւատքի:

Այսօր մեր Ս. Եկեղեցին և մեր ազգը երախտագիտութեամբ կը յիշեն անունը Սրբուհի մայրապետին ու կը փառաւորեն զայն և իր հիմնած հաստատութիւնը՝ Գալֆայեան որբանոցը: Երախտագիտութեամբ կը յիշեն նաև անուն-

ները հոգելոյս հիմնադրի յաջորդներուն և բոլոր անոնց, որոնք սուրբ արտով, անձնուրաց աշխատանքով և ջերմ եռանդով մէկ ամբողջ դար շարունակ կանգուն ու շէն պահած են Գալֆայեան հաստատութիւնը:

«Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն» (Մատթ. Ե 8):

Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն օրհնութիւն Սրբուհի մայրապետի լուսափայլ յիշատակին և իր աստուածահաճոյ գործին: Օրհնութիւն Գալֆայեան որբանոցի բոլոր ուխտապահ ու առաքինազարդ մայրապետներու և քարերարներու յիշատակին:

Օրհնութի՜ւն նաև որբանոցի ներկայ բարեջան միաբանութեան, խնամակալութեան և նուիրատուներուն, գլխաւորութեամբ Մայր Մարիամ աւագ տարկաւագ Ջէօսէեանի, որոնք նոյնքան սուրբ արտով, քարի մտածումներով և անկեղծաւոր հաւատքով վառ կը պահեն նուիրական այն ջահը, զոր սուրբ ձեռք մը վառեց հարիւր տարիներ առաջ, արևոտ օր մը:

Թող Աստուած Իր պահպան ամենազօր Աջը տարածեալ պահէ Գալֆայեան որբանոցի վրայ և զայն պահպանէ միշտ խաղաղութեան ու բարօրութեան մէջ, միշտ շրջապատուած հայ բարեպաշտ ժողովուրդի յարգանքով ու գուրգուրանքով:

«Այսուհետև հաստատուն եղերուք, անշարժ կացէք, առաւել լերուք ի գործ Տեառն յամենայն ժամ. գիտասջիք զի վաստակքն ձեր ո՛չ են ընդունայն առաջի Տեառն» (Ա Կորնթ. ԺԵ 58):

Ամէն:

ԵՒՍԹԱԹՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 14-ն յունուարի
1966 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԵ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԿԻՊՐՈՍԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՔԱՌԱՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՎԱՉԳԷՆ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՑՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ, ԿՐԹԱՆՈՒԷՐ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՑՉՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ՄԵԼՔՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ, ՈՂՋՈ՞ՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ, Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ

Աստուածակառոյց Ս. Էջմիածնէն ողջո՛յն և օրհնութի՛ւն Հայկական բարեգործական ընդհանուր միութեան Մելքոնեան կրթական հաստատութեան։ Անհունօրէն մխիթարուած է Մեր սիրտը, որ հայ ժողովուրդի մեծ եղեռնէն յետոյ տարիներ յետոյ, կը տեսնենք ահա անոր վերածնունդի ստոյգ վկայութիւնները ոչ միայն Մայր Հայրենիքէն ներս, ուր այդ վերածնունդը ամբողջական է և փառաւոր, այլ նաև Սփիւռքի տարածքին վրայ, երբեմն ծանր ու դժուարին պայմաններու մէջ իսկ։

Ստոյգ իրողութիւն է, այո, նաև արտասահմանի հայոց հոգևոր, ազգային, մշակութային կեանքի վերընձիւղումը, իբրև կենդանի արձագանքը Մայր Երկրի վերածնունդի։ Այդ մեծ ճշմարտութեան կենսագործման մէջ, բախտորոշ եղաւ ու կը շարունակէ ըլլալ նաև նախախնամական դերը Հայկական բարեգործական ընդհանուր միութեան՝ իր հզօր կազմակերպութեամբ, իր ամրակուռ կրթական, մշակութային, բարեսիրական հաստատութիւններով և իր իմաստուն ու նուիրեալ ղեկավարներով և մշակներով։

Ազգային բարերարներ Մելքոնեան եղբայրներու նուիրատուութեամբ հիմնուած կրթական հաստատութիւնը անոնցմէ մին է, լաւագոյններէն և ամենաբեղմնաւորներէն։ Քառասուն տարիներէ ի վեր ան մեր ազգի նոր սերունդներուն մայրենի քաղցր լեզուով կը բաշխէ հաւատքի ջերմութիւնը, գիտութեան լոյսը և հայոց պատմութեան շունչը, կերտելով հայ հոգիներ, հայ նկարագիրներ։

Ինչքա՜ն յոյս, ինչքա՜ն ուրախութիւն և ինչքա՜ն լաւատեսութիւն կը ներշնչէ մեզի ամէնուս այս իրողութիւնը։ Եւ ինչքա՜ն հաւատք՝ դէպի մեր ժողովուրդի ապագան։

Ցանուն Հայաստանեայց Եկեղեցւոյ և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Մենք կը շնորհաւորենք Մելքոնեան կրթական հաստատութեան հոգաբարձութիւնը, անօրէնութիւնն ու ուսուցչական կազմը, ողջունելով և օրհնելով անոնց ազգաշէն առաքելութիւնն ու վաստակը։

Կը մաղթենք բոլորին անսպառ եռանդ ու յարատևութեան ոգի, որպէսզի նոր ներշնչումներով ու տեսիլքներով խանդավառ, անոնք շարունակեն իրենց նուիրական աշխատանքը, հայազգնին սնեռած դէպի վերածնած աշխարհը մեր Հայաստան, դէպի անմար կանթեղը Ս. Լուսաւորչի և լոյս շիրիսը Օշականի մեծ Վարդապետին։

Վերստին ողջո՜յն և օրհնութի՜ւն Մելքոնեան կրթական հաստատութեան ղեկավարութեան, դասախօսներուն և աշակերտութեան։

«Այսուհետև զօրացարուք Տերամբ, և կարողութեամբ զօրութեան Նորա», «Եւ ի վերայ ամենայնի առէք զվահանն հաւատոց» (Եփես. Զ 10, 16)։

Ամէն։

Կարեկին Բ.

ԾԱՌԱՅԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս 1-12-ն յունուարի
1966 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԵ,
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՄԱՐՍԵԼԻ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ

ՎԱՂԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՀԱՄԱՅՆ ԵԿԵՂԵՑԵԱՑ ՄԱՐՍԻԼԻՈՅ ԵՒ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՅՈՑ ԵՒ ԲԱՐԵՊԱՇՏ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՍԷՐ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՄԵՐՈՅ, ՈՂՋՈՒՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ի ԳԱՀԷ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ

Փա՜ռք Աստուծոյ Ամենակալին, որ իր անբաւ ողորմութեամբ ու սիրով կը մնայ պահապան և օգնական մեր Ս. Եկեղեցիին ու ազգին, լուսաւորելով անոնց կեանքի ճամբան ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի, իր իսկ հիմնած Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սեղաններէն բաշխուող լոյս շնորհներով:

Ահա՛, սիրելի՛ և հարազատ զաւակներ Մեր, Միածնաէջ այդ Ս. Տաճարէն Ձեզի կը բերենք այսօր հայրական ողջոյն և աստուածային օրհնութիւն, աղօթելով, որ Տէրը միշտ անշարժ ու շէն պահէ Ձեր եկեղեցիները, միշտ խաղաղ ու սիրով միաբան Ձեր քրիստոնէական եղբայրութիւնը, և միշտ վառ ու կենդանի Ձեր հայկական հոգին:

Ուր խաղաղութիւնն ու եղբայրական սէրը կը ծաղկին, այնտեղ կ'իջնէ Աստուծոյ օրհնութիւնը: Երբ Մեր զաւակները կը գործեն համերաշխ միասնութեամբ, հաւատարմօրէն ամուր կանգնած մեր նախնեաց նուիրական կարգաց ու աւանդութեանց վէմին վրայ, կը զօրանայ և կը պայծառանայ մեր ամբողջ Եկեղեցին, կ'ուրախանայ Ս. Էջմիածինը, առաւել կը փայլի ու կը ճառագայթէ հայ անունը յաչս քոյր եկեղեցիներու և ազգերու:

Այս խոհերով ահա կ'ողջունենք Ձեզ սոյն Մեր գրով և Ձեզի բոլորիդ անխտիր աւետիս կը բերենք, թէ ընդառաջելով Ֆրանսայի հայրապետական պատուիրակ գերաշնորհ Տ. Սերովբէ արքեպիսկոպոսի առաջարկութեան և Մարսիլիոյ Մայր Եկեղեցւոյ վարչութեան խնդրանքին, Ձեզի կ'առաքենք նո-

բապսակ Տ. Յակոբ եպիսկոպոս Վարդանեանը, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց միաբանութեան ուխտէն, որ իբրև Մարսիլիոյ և Հարաւային Ֆրանսայի Հայրապետական պատուիրակի փոխանորդ, կոչուած է հոգեւոր մխիթարելու և առաջնորդելու Ձեր շրջանի հայ հաւատացեալ ժողովուրդը, սերտ գործակցութեամբ Հայրապետական սրբազան պատուիրակի և Ձեր եկեղեցիներու վարչութիւններու, և համաձայն մեր Ս. Եկեղեցւոյ կնարգաց և կանոնաց և Ձեր բարեխնամ պետութեան օրէնքներուն:

Մենք կը հաւատանք, որ գերաշնորհ Տ. Յակոբ եպիսկոպոս իր իմաստուն և խաղաղաբար ոգիով, իր բարի ու ժրաջան աշխատանքով ու իր հոգևոր հեղինակութեամբ, կրօնական շինարար կեանքի նոր շրջան մը պիտի սկզբնաւորէ Հարաւային Ֆրանսայի հայոց մէջ, շէնցնելով եկեղեցիները, ծաղկեցնելով հոգևոր կեանքը, մխիթարելով բարեպաշտ մեր ժողովուրդը և ամրապնդելով անոր մէջ եղբայրական սէրը և անբաժան միութիւնը քրիստոնէական ու հայկական:

Մենք միշտ պիտի մնանք աղօթող Ձեզի ամէնուդ համար, Ձեր կեանքին, Ձեր բարօրութեան և Ձեր խաղաղութեան համար:

«Այսուհետև, եղբարք, ողջ լերուք, հաստատուն կացէք, մխիթարեցարուք, միաբան լերուք, խաղաղութիւն արարէք. և Աստուած խաղաղութեան և սիրոյ եղիցի ընդ Ձեզ» (Բ Կորնթ. ԺԳ 11):

ԾԱՌԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի-30-ն դեկտեմբերի
1965 Փրկչական ամի,
և ի տուժարիս Հայոց ՌՆԺԵ,
ի վայրավանս Սրբոյ Էջմիածնի:

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆԱ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ԵԹՈՎՊԻԱՅԻ ԿԱՅՍՐ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ Ա-Ի ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ Ա-ԻՆ

ԱԴԴԻՍ-ԱԲԵԲԱ

Մեծ ուրախությամբ ներկայացնում ենք Ձերդ Կայսերական Վեհափառության Մեր շնորհավորանքները և օրհնությունները նոր տարվա և Աստվածահայտնության Ձեր սուրբ տոների առթիվ:

Թո՛ղ Աստված քաջառողջ կյանք պարգևի Ձերդ Վեհափառության, գահակալության փառավոր տարիներով:

Թո՛ղ ապրի ու ծաղկի խաղաղության մեջ քրիստոսասեր մեծ Եթովպիան:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

*

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Շնորհապարտ ենք Ձերդ Ս. Օծության նոր տարվա և Ս. Ծննդյան տոնի առթիվ Ձեր շնորհավորանքի և պատգամի համար:

ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ
ԿԱՅՍՐ ԵԹՈՎՊԻԱՅԻ

ԱԴԴԻՍ-ԱԲԵԲԱ

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ Նորին Սրբություն
Տ. Տ. ՊԱՎԼՈՍ Զ ՊԱՊԻՆ (Հռոմ),
Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն
ԱԹԵՆԱԳՈՐԱՍԻՆ (Ստամբուլ),
Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն
ԱԼԵՔՍԻԻՆ (Մոսկվա),
Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի Պատրիարք Նորին Սրբություն
ՔՐԻՍՏԱՓՈՐ Բ-ԻՆ (Ալեքսանդրիա),
Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
Աբունա ԿՅՈՒՐԵՂ Զ-ԻՆ (Ալեքսանդրիա),
Երուսաղեմի Հունաց Պատրիարք Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏՈՍԻՆ (Երուսաղեմ),
Անտիոքի և Համայն Արևելքի Պատրիարք Նորին Սրբություն
ԹԵՈԴՈՍԻՈՍ Զ-ԻՆ (Դամասկոս),
Սիրիական Օրթոդոքս Եկեղեցու և Համայն Արևելքի Պատրիարք Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԿՈԲ Բ-ԻՆ (Դամասկոս),
Համայն Եթովպիայի Պատրիարք Նորին Սրբություն
ԲԱՍԻԼԻՈՍԻՆ (Ադդիս-Աբեբա),
Հնդկաստանի և Արևելքի Մալաբար Եկեղեցու Կաթողիկոս Նորին Սրբություն ՏԻՄՈԹԵՈՍԻՆ (Կերալա),
Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն
ԵՓՐԵՄ Բ-ԻՆ (Թբիլիսի),
Ռումեն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
ԺՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (Բուխարեստ),

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն
ԿԻՐԻԼԻՆ (Սոֆիա),
Լիբանանի Մարոնիտ Պատրիարք Նորին Սրբություն
ՊՈԼ-ՊԻԵՌ ՄԵՈՒՇԻԻՆ (Բեյրութ),
Քենտրբերիի Արքեպիսկոպոս, Համայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և
Միտրոպոլիտ Նորին Սրբություն դոկտ. ՄԱՅՔԼ ՌԵՄՋԻԻՆ
(Լոնդոն),
Աթենքի և Համայն Հելլադայի Միտրոպոլիտ Նորին Սրբություն
ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍԻՆ (Աթենք),
Սերբիայի և Համայն Հարավսլավիայի Պատրարք Նորին Սրբություն
ՀԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
Հայ Կաթողիկե Եկեղեցու Պատրիարք Նորին Ամենապատվություն
ԻԳՆԱՏԻՈՍ ՊԵՏՐՈՍ ՊԱՊԱՆՅԱՆԻՆ (Բեյրութ),
Կիպրոսի Արքեպիսկոպոս Նորին Սրբություն
ՄԱԿԱՐԻՈՍԻՆ (Նիկոզիա),
Նորին Ամենապատվություն Կարդինալ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ (Վատիկան),
Եկեղեցիների հաճաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար
դոկտ. ՎԻԼՅԱՄ ՎԻՍՍԵՐ ԴԷ ՀՈՒՖՏԻՆ (Ժընև),
Արևմտյան Նյու-Յորքի Եպիսկոպոսական Եկեղեցու Առաջնորդ
ԼՈՐԻՍՏՈՆ ԼԵՎԻՆԳՍՏՈՆ ՍՔԵՅՖ Եպիսկոպոսին
(Նյու-Յորք),
Լատվիական ՍՍՌ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս
Նորին Սրբազնություն ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒԲՍԻՆ (Ռիգա),
Էստոնական ՍՍՌ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս
Նորին Սրբազնություն ՅԱՆ ԿԻՅՎԻՏԻՆ (Տալլին),
Միջին Արևելքի Հայ Ավետարանական Եկեղեցիների միության նախագահ
Վերապատվելի ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ
(Բեյրութ),
Ֆրանչիսկյան միաբանության Կուստոդ
Հ. ԼԻՆՈՒՍ ԿՈՊՊԻԵԼԼԻԻՆ (Երուսաղեմ),
ԱՄՆ-ում Քրիստոսի Եկեղեցիների Ազգային Խորհրդի նախագահ
Գերարժանապատիվ Հայր ՌՈՒԲԵՆ ՄՅՈՒԼԼԵՐԻՆ
(Նյու-Յորք),
Մխիթարյան ուխտի Աբբահայր Գերհարգելի Հայր
ՀՄԱՅԱԿ Վարդապետ ԿԵՏԻԿՅԱՆԻՆ (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի Աբբահայր Գերապայծառ Հայր
ՄԵՍՐՈՊ Վարդապետ ՀԱՊՈՋՅԱՆԻՆ (Վիեննա):

Մեզ համար հոգեկան մեծ ուրախություն է Ս. Էջմիածնից ողջույն բերել Ձեզ, Մեր Տիրոջ և Փրկչի Ս. Ծննդյան տոնի առթիվ, և աղոթել Ձեզ հետ միասին, աշխարհի խաղաղության և մարդկանց ու ժողովուրդների միջև փոխադարձ սիրո և հաճության ամրապնդման համար:

Բեթղեհեմի անմար լույսը և երկնքի հրեշտակների երգը թո՛ղ քաղցրությամբ իջնեն աշխարհի վրա և բոլոր մարդկանց հոգիներից ներս, որպեսզի մարդկությունը հասնի խաղաղության ու արդարության ափին, և Աստուծո կամքը կատարվի երկրի վրա:

Այդ լուսաբաշխ ավետիսով գալիս ենք նաև մաղթելու Ձեզ քաջառողջ կյանք և բարի ու առատ արդյունքներ Ձեր հովվապետական սուրբ առաքելության մեջ:

Եղբայրական հարգալից սիրով ի Քրիստոս,

ՎԱՉԳԵՆ Ա
ԵԱՎՐԱԳՈՒՄՅԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

*

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա, ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Մեր ջերմ շնորհակալությունն ենք հայտնում Ձերդ Սրբությանը Մեզ հղած Իր մաղթանքների և աղոթքների համար՝ այն սուրբ օրվա տոնակատարության առթիվ, երբ հայտնվեց Աստուծո բարությունն ու սերը մարդկանց նկատմամբ:

Մենք ևս Մեր հերթին հայցում ենք Աստուծուց՝ մեր Փրկչից, որ Իր առատաբուխ շնորհներն ու ուրախությունը բաշխի Ձերդ Սրբությանը, Ձեր հոգևոր դասին և Ձեր հավատացյալներին:

Գոհություն ենք մատուցում Աստուծո՝ անցած տարում Էջմիածնի պատկառելի Կաթողիկոսությանդ հետ Մեզ շնորհված շփումների առիթների համար, որոնք արտահայտվեցին ինչպես Վատիկանի տիեզերական ժողովում Ձեր դիտորդների ներկայությամբ, այնպես էլ կաթողիկե բազմաթիվ հոգևոր առաջնորդների Հայաստան այցելելով: Հուսով ենք, որ նոր սկսվող այս տարին վկա կլինի այս եղբայրական հարաբերությունների ծաղկմանն ու զարգացմանը՝ քրիստոնեական ճշմարիտ սիրո ոգով, որն անհրաժեշտ կապ ու աղբյուր է խաղաղության ու հաշտության համար:

Այս ոգով է, որ Ձերդ Սրբությանը վերստին հայտնում ենք հարգալից ու եղբայրական սիրո մեր զգացումները ի Հիսուս Քրիստոս:

ՎԱՏԻԿԱՆ ՊԱՊ ՊԱՎՂՈՍ Զ

*

Եղբայրական ջերմ ողջույններ և սրտաբուխ բարեմաղթություններ ենք ուղղում Ձերդ Սրբության, Փրկչի Ծննդյան ուրախ տոնի առթիվ, տոն, որն այս տարի դիմավորում և տոնում ենք, շնորհիվ Աստուծո, Արևելքի և Արևմուտքի քույր եկեղեցիների միջև աճող բարեկամության առաջացրած խորունկ ուրախության մթնոլորտում:

Աստված, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Հայրը, հաճեցավ օրհնել այն փոխադարձ բարի կամեցողությունը, որը վերջերս հանդես բերվեց խաղաղասիրական արարքներով, և որը քրիստոնյա աշխարհի կողմից ողջունվեց ջերմ ելույթներով և ցնծությամբ:

Ջերմագին գոհություն և փառք մարդացյալ Քրիստոսին, մեր Աստուծուն, որ դարբնեց մեր հաղթությունն ու խաղաղությունը Աստուծո և միմյանց հետ, երբ սուրբ համբույրով ողջագուրում ենք Ձերդ Սրբությանը այս մեծ տոնի առթիվ, մաղթելով մանկացյալ Փրկչի առատ օրհնությունները և Նրա ծննդյան խորհրդից բխող հավիտենական խնդությունը Ձեզ, Ձեր հոգևորական դասուն և Ձեր Ս. Եկեղեցու բարեպաշտ հոտին:

Աղոթում ենք նաև առ Աստված, որ առաջիկա նոր տարին լինի բարիքներով լի Ձեզ և ամբողջ աշխարհի համար, որով մնում ենք միշտ եղբայրական սիրով և մասնավոր հարգանքներով՝

Ձերդ Սրբության սիրող եղբայր ի Քրիստոս՝

ԱԹԵՆԱԳՈՐԱՍ
Տիեզերական Պատրիարք Հունաց

ՍՏԱՄԲՈՒԼ

*

Եղբայրական սիրով ի Քրիստոս ողջունում եմ Ձերդ Սրբությանը մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Ծննդյան պայծառ և ուրախ տոնի շնորհիվ մարդկանց պարգևված աստվածային խաղաղության և հաճության մեծ տոնի առթիվ:

Թո՛ղ մեր փրկության համար ծնված Տերը պարգևի մեզ հոգեկան ուրախություն և հրեշտակների կողմից ավետված Նրա խաղաղությունը, և թո՛ղ Նրա ծննդյան բարիքները լուսավորեն մեր երկիրը առաջիկա և հետագա բոլոր տարիներին ու ժամանակներին:

Եղբայրական սիրով ի Քրիստոս,

ՄՈՍԿՎԱ

ԱԼԵՔՍԻ
Պատրիարք Մոսկվայի և Համայն Ռուսաստանի

*

«Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Հոգեկան խորին ուրախությամբ և սրտագին եղբայրական սիրո զգացումներով, որոնք թելադրված են մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի հրաշափառ ծննդյան ավետիսով, ջերմագին շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը մեր փրկության այս մեծ տոնի, ինչպես նաև ամանորի առթիվ և անկեղծորեն մաղթում Ձերդ Սրբության երկար կյանք, քաջառողջություն և բարգություն խաղաղությամբ, ի փառս և ի պայծառություն Ս. Եկեղեցու:

Ձերդ Սրբության սիրող եղբայր՝

ԴԱՄԱՍԿՈՍ

ԹԵՈԴՈՍԻՈՍ Զ
Պատրիարք Անտիոքի և Համայն Արևելքի

*

Սրտագին բարեմաղթություններ Ձեզ Ս. Ծննդյան և նոր տարվա առիթներով, Աստուծո շնորհներով լեցուն:

ԵՐՈՒՍԱՂԵՄ

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ
Պատրիարք Երուսաղեմի Հունաց

*

Ծննդյան տոնի առթիվ մենք մեծապես հրճվում ենք Աստուծո անչափելի շնորհի համար, մարդեղությամբը Իր սիրելի Որդու, որպեսզի մարդիկ ևս բաժանեն Իր հավիտենական փառքը: Ամեն տարի այս տոնը կրկնվում է և ամեն անգամ ավելի է ջերմացնում, որովհետև մարդեղությամբ է, որ խաղաղության ու հաշտության օրհնությունները իջնում են մարդկության վրա: Թո՛ղ մարմնացյալն Աստված շնորհի Ձերդ Սրբության ու առաջնորդներին Իր օրհնությունները և պահպանի Ձեր կյանքը առողջության, խաղաղության և Իր գիտության մեջ: Թո՛ղ Նա օրհնի Ձեր պատվական Եկեղեցին՝ Իր պատգամները աշխարհի բոլոր ծագերում քարոզելու գործում:

Ձերդ ի Քրիստոս,

ԴԱՄԱՍԿՈՍ

ԻԳՆԱՏԻՈՍ ՀԱԿՈԲ Գ
Պատրիարք Անտիոքի և Համայն Արևելքի

*

Ամեն տարի, բոլոր քրիստոնյա մարդկանց սրտերը բերկրանքով են լցվում, երբ տոնում են Բեթղեհեմի մսուրի մեծագույն հրաշքը:

Ի լուր հրեշտակների երկնային երգի՝ **«Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»**, աղերսում ենք.

«Եղիցի, Տեր, եղիցի խաղաղութիւն ի վերայ երկրի»:

Մաղթում ենք Ձերդ սիրելի Եղբայրության, Ձեր Եկեղեցու հոգևոր դասուն և հավատացյալ հոտին նոր, 1986 տարում բարօրություն, արևշատություն, խաղաղություն և աստվածային առատ շնորհներ:

Շնորհավոր Ս. Ծնունդ և նոր տարի:

Եղբայրական սիրով ի Քրիստոս,

ԵՓՐԵՄ Բ

ԹԲԻԼԻՍԻ Կաթողիկոս-Պատրիարք համայն Վրաստանի

*

«Շնորհք և խաղաղութիւն յԱստուծոյ ի Հօրէ և ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ»:

Ծննդյան այս սուրբ օրերին, քրիստոնյա մարդիկ ամբողջ աշխարհում, ուրախանում են Հայր Աստուծո Որդի և մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի կատարյալ հայտնության միջոցով, **«Որ է լոյս փառաց և նկարագիր էութեան նորա, որ կրէ զամենայն բանիւ զօրութեան իւրոյ»** (Եբր. Ա 3):

Մեր սիրեցյալ Փրկչի մարդեղությունը մեզ թույլ է տալիս ճանաչելու ոչ միայն Աստվածության փառքը, այլ նաև մեր մարդկային բնության պատիվը, որին մասնակից դարձավ Նա: Արդարև, սաղմոսերգուն գրում է. **«Ո՞վ է մարդ, զի յիշես Դու զնա, կամ որդի մարդոյ, թէ այց ինչ արասցես Դու նմա: Փոքր ինչ խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս քո, փառաւք և պատուով պսակեցեր զնա. և կացուցեր զնա ի վերայ ամենայն ձեռակերտաց քոց. զամենայն ինչ հնազանդ արարեր ի ներքոյ ոտից նորա»** (Սաղմ. Ը 5—7):

Ինչպես որ պատարագի և սուրբ պաշտամունքի ժամանակ հիշատակում ենք մեր հավատի այս խոր խորհուրդները, փառք տանք ամենակարող Աստուծուն և աղոթենք Իրենով մեր եղբայրության ամրապնդման համար, որպեսզի Աստված Ինքը փութացնի քրիստոնեության հատվածներին և աշխարհի բոլոր ազգերին հաշտեցնելու Իր գործը:

Թո՛ղ ամենակարողն Աստված օրհնի Ձեզ, իմ սիրեցյալ Եղբայր, Ծննդյան առթիվ, Ձեր հոգևորականության և հավատացյալ ժողովրդի հետ միասին:

Ձեզ սիրող եղբայր ի Քրիստոս,

ՄԱՑԳԼ ՌԵՄԶԻ

Արքեպիսկոպոս Քենտրբերիի,

ԼՈՆԴՈՆ **Եպիսկոպոսապետ և Միտրոպոլիտ համայն Անգլիայի**

*

Ռումեն Ուղղափառ Եկեղեցու և Մեր անունից ներկայացնում ենք Ձերդ Սրբության եղբայրական ողջույններ, գոչելով.

«Փա՜ռք հրաշափառ ծննդեան քո, Տէ՛ր»:

Աստվածորդու մարդեղությունը եղբայրական սիրո և հաշտության մի իրողություն է:

Իրոք Աստված սեր է և այն ամենը, ինչ ստեղծել է Նա, աստվածային Իր սիրո արգասիքն է:

Քրիստոս աշխարհ եկավ, որպեսզի ծառայի մարդկանց: Նա Իր երկրավոր կյանքը ավարտեց զոհվելով մարդկանց համար:

Համոզված ենք, որ սիրո և խաղաղության Աստվածը պիտի օրհնի նաև Ձերդ Սրբության ճիգերը, որպեսզի առավել ամրապնդվի եղբայրական սերը, բոլոր քրիստոնեական եկեղեցիների միջև:

Այս մտածումներով, մաղթում ենք Ձեզ, Հայաստանյայց Եկեղեցուն և նրա սպասավորներին և համայն հավատացյալներին՝ Ս. Ծնունդը տոնել կատարյալ առողջությամբ, հոգևոր ուրախությամբ և առաջադիմությամբ:

Մաղթում ենք նաև, որ նոր տարվա առթիվ Խաղաղության Իշխանը Քրիստոս, պարգևի Իր Ս. Եկեղեցուն և համայն մարդկության Բեթղեհեմի այրից ավետված խաղաղությունը և «ի մարդիկ հաճութիւն»-ը:

Եղբայրական սիրո ողջունիվ,

ԲՈՒԽԱՐԵՍՏ

ԺՈՒՍՏԻՆԻԱՆ
Պատրիարք Ռումինիայի

*

Փառք և գոհություն Աստուծո, որ նորից ուրախությունն ունենք սիրով և սրտագին ողջունելու Ձեզ Քրիստոսի Ծննդյան մեծ տոնի և առաջիկա ամանորի առթիվ:

«Փառք ի բարձունս Աստուծոյ»,— երգում էին ծննդյան գիշերը հրեշտակները երկնքի, որոնք անմիջական վկաներն էին աստվածային մեծության և ամենակարողության: Փառք ենք տալիս Նրան՝ Հավիտենականին, նաև մենք, որ ամենուր այս երկրի վրա և ամեն ինչում տեսնում ենք Նրա զորությունը՝ իբրև Արարչի և մարգարեությունը Նրա, իբրև մտածողի:

«Եւ յերկիր խաղաղութիւն»,— շարունակում էին հրեշտակները հոնեն երգը և այս բառերով ավետում, թե Կույսից ծնված Փրկիչը կգա նորից, որպեսզի խաղաղություն և սեր սերմանի երկրի վրա: Եվ մենք, որ կյանք մտանք Նրա անունը մեր շրթներին ու կոչված ենք լինելու լուսո զավակներ, մեր հավատի և գիտակցության ամբողջ ուժով ընդդիմանում ենք եղբայրասպան պատերազմին և կանգնած ենք խաղաղության պաշտպանության դիրքերում:

«Ի մարդիկ հաճութիւն»,— այս բաղձալի բառերով ավարտվեց հրեշտակների ծննդյան երգը երկնային տարածություններում, Բեթղեհեմի քարայրի վերևում, նոր աստղի ճաճանչների ներքո: Եվ մենք գիտենք, հավատում ենք և դավանում, որ բարի կամեցողության այդ պատգամը վերաբերում է երկրի բոլոր բնակիչներին, որպես մի, ընդհանուր և երկնային Հոր զավակների:

Աղոթում ենք առ Աստված՝ Տիրոջը ժամանակների և կյանքի, որը մեր ուրախությունն է ու բերկրանքը, Իր ողորմությամբ պարգևելու Ձերդ Սրբությանը առողջություն, ուժ և ամենայն բարիք ու շնորհ՝ Ձեր քրիստոսասեր հոգևոր դասին և հավատացյալներին:

ՍՈՖԻԱ

ԿԻՐԻԼ
Պատրիարք Բուլղարիայի

*

Եղբայրական սիրով ողջունում ենք Ձերդ Սրբությանը և շնորհավորում մեր Տիրոջ Ս. Ծննդյան տոնի առթիվ, ավետելով՝ **«Քրիստոս ծնա՞ւ և յայտնեցա՞ւ»:**

Ջերմորեն աղոթում ենք նորածին Փրկչին՝ պարգևելու երկնային խաղաղություն աշխարհին և մարդկանց հաճություն, որոնք այնքան կարևոր են մեր օրերում՝ սփոփելու մարդկային հոգիները և մխիթարելու ողջ մարդկությունը:

Անկեղծորեն մաղթում ենք Ձերդ Սրբությանը և քույր Հայ Եկեղեցու հոգևոր դասին՝ աստվածային շնորհներ և օրհնություններ առաջիկա 1966 տարում:

Այս մաղթանքներով և աղոթքներով առ Աստված, մնամք Ձերդ Սրբության եղբայր ի Քրիստոս և լծակից,

ԲԵԼԳՐԱԴ

ՀԵՐՄԱՆ
Պատրիարք Համայն Սերբիայի

*

ՊԱ-4519

ՀԱՅԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԽԱԼԾՄԻՆ

Թույլ տվեք իմ անունից, ինչպես և Չեխոսլովակյան Եկեղեցու անունից, սրտագին շնորհավորել Ձեզ Քրիստոսի Ս. Ծննդյան լուսաբաշխ տոնի և 1966 թվականի ամանորի առթիվ: Աղոթող ենք առ Աստված Բեթղեհեմի՝ շնորհելու Ձեզ ուժ Ձեր աստվածահաճո գործերի հաջողության համար, ինչպես և պարգևելու քաջառողջություն և բարօրություն:

Ձերդ Սրբության նվիրյալ սիրով ի Քրիստոս,

ԴՈԿՏ. ՄԻՐՈՍԼԱՎ ՆՈՎԱԿ

ՊՐԱԳԱ **Պատրիարք Չեխոսլովակյան Եկեղեցու**

*

Քրիստոսի Ծննդյան տոնի ուրախ առիթով, փոխանցում ենք Ձեզ հրեշտակների ավետած խաղաղությունն ու հանությունը, ջերմապես աղոթելով, որ մարդացյալ Փրկիչը պահպանի Ձեզ քաջառողջությամբ, անվիշտ, աստվածասեր գործերով փառավորված, հովվելու Ձեր հայրական խնամքին հանձնված Քրիստոսի հոտը, Իր անունով, Իր փառքի համար:

«Վասն որոյ և Աստուած առաւել բարձրացոյց և շնորհեաց նմա անուն, որ ի վեր է քան զամենայն անուն» (Փիլ. Բ 9):

Ողջունում ենք սրտանց Ձերդ սիրելյալ Սրբությանը և մնում ի Քրիստոս եղբայր,

ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍ

ԱԹԵՆՔ **Արքեպիսկոպոս Աթենքի և համայն Հունաստանի**

*

Շնորհավորում ենք Ձեր նոր տարին և Փրկչի Ս. Ծնունդը, Աստվածահայտնության խորհրդի շնորհներով եղբայրացած:

«Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի, զի յայց ել մեզ և արար փրկութիւն ժողովրդեան իւրում» (Ղուկ. Ա 68):

Սրտեռանդն աղոթում ենք մարդացյալ Փրկչին՝ շնորհելու Ձեզ քաջառողջություն և օրհնելու Ձեր հոգևոր գործերն ու ջանքերը՝ ի բարօրություն Եկեղեցու, ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի:

Նոր տարվա առթիվ թո՛ղ Տերը անպակաս անի Իր երկնային օրհնություններն ու շնորհները:

Ձերդ սրբության սիրող եղբայր ի Քրիստոս՝

ՄԱԿԱՐԻՈՍ

ՆԻԿՈՍԻԱ **Միտրոպոլիտ Կիպրոսի**

*

Մենք՝ Անտիոքի և համայն Արևելքի Պատրիարք, Կարդինալ Պոլ-Պիեռ Մեուշի, Մեր շնորհակալությունն ենք հայտնում Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Վազգեն Ա-ին այն բարեմաղթությունների համար, որ Նա բարեհաճեց հղել Մեզ Ս. Ծննդյան առթիվ: Հայցում ենք մարդացյալ Աստվածորդուց, որ օրհնի Նրա ջանքերը՝ հիշեցնելու Իրեն վստահված հոգիներին, թե հավիտենական ճշմարտություններն են միայն, որոնք կենսագործվելով, կարող են մարդուն տալ այն երջանկությունը, որ նա իզուր փնտռում է այլուր:

Մաղթում ենք Ձերդ Սրբությանը բարի, սուրբ և շնորհաշատ մի տարի և հայտնում ենք մեր հարգալից զգացումները ի Տեր:

ԲԿԵՐԿԵ ԿԱՐԴԻՆԱԼ ՊՈԼ-ՊԻԵՌ ՄԵՈՒՇԻ

Պատրիարք Անտիոքի և համայն Արևելքի

*

Ջերմորեն շնորհակալ եմ Ձերդ սիրեցյալ Սրբությունից:

Խնդրում եմ Ձեզ ընդունել իմ ջերմ և սրտաբուխ մաղթանքները: Աղոթում եմ, որ երկնային Փրկիչը երջանկություն և բարօրություն պարգևի մեր սիրեցյալ ժողովրդին և խաղաղություն ամբողջ աշխարհին:

ՎԱՏԻԿԱՆ

ԿԱՐԴԻՆԱԼ ԱՂԱՋԱՆՅԱՆ

*

Այսօր՝ քրիստոնեական բոլոր ժողովուրդները հավախմբվում են հոգեպես մանկացյալ Աստուծո շուրջ և հովիվների նման ծնրադրում, աղերսելով բարություն մարդկանց և խաղաղություն աշխարհի ժողովուրդների համար: Թո՛ղ սերն ու եղբայրությունը տիրեն նաև մեր երկու՝ հայ և լատվիացի ժողովուրդների միջև:

Շնորհավորում եմ Ձեզ և Ձեր գործակից հոգևորականներին, Քրիստոսի Ծննդյան լուսաբաշխ տոնի և 1966 թվականի նոր, խաղաղաբեր տարվա առթիվ:

ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ
Լատվիայի Ավետարանական-Լութերական
Եկեղեցու Արքեպիսկոպոս

ՌԻԳԱ

*

Քրիստոնեական համատարած ուրախության այս օրերին, երբ մեր Տեր Հիսուս Քրիստոսը Իր ծնունդով աշխարհին բերեց խաղաղություն, սրտագին ողջունում եմ Ձեզ: Ընդունեցեք իմ անկեղծ բարեմաղթությունները: Թո՛ղ Տերը օգնական լինի Ձեր բոլոր սուրբ գործերի մեջ:

Շնորհավորում եմ նաև Ձեզ նոր տարվա առթիվ և մաղթում, որպեսզի մեր Տեր Հիսուս Քրիստոսի բերած խաղաղությունն ու հանությունը միշտ անպակաս լինեն Ձերդ Սրբությունից և Ձեր Եկեղեցուց:

ՅԱՆ ԿԻՑՎԻՏ
Էստոնիայի Ավետարանական-Լութերական
Եկեղեցու Արքեպիսկոպոս

ՏԱԼԼԻՆ

*

Թո՛ղ Տերը, որ մեր խաղաղությունն է, լինի Ձեզ և Ձեր Եկեղեցու հետ:

ՎԻՍԵՐ 'Դ ՀՈՒՖՏ
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի
ընդհանուր քարտուղար

ԺԵՆԵՎ

*

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՇԵՅԽՈՒԼԻՍԼԱՄ ՀԱՋԻՄՋԱԴԵԻՆ,
ՄՈՒՖՏԻ ՎԱԼԻՋԱԴԵԻՆ

ԲԱՔՈՒ

1966-ի նոր տարվա առթիվ հղում ենք Ձեզ Մեր անկեղծ շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները Ձեր քաջառողջության և աստվածահաճո գործունեության հաջողությանց համար:

Աղոթում ենք առ Աստված՝ բաշխելու Իր շնորհները Ադրբեջանի հավատացյալ ժողովրդին և մաղթում խաղաղություն ու բարօրություն Ձեր ժողովրդին՝ մեր Երկրի ժողովուրդների մեծ ընտանիքում:

Եղբայրական սիրով,

ՎԱԶԳԵՆ Ա
ԵՎԱՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

*

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Արտագինս շնորհավորում ենք Ձեզ նոր՝ 1986 տարվա առթիվ, մաղթում ենք քաջառողջություն և երջանկություն:

Շեյխուլիսլամ՝ ՀԱՔԻՄԶԱԴԵ
Մուֆտի՝ ՎԱԼԻԶԱԴԵ

ԲԱՔՈՒ



Ա Մ Ա Ն Ո Ր Ի Ե Վ Փ Ր Կ Չ Ի
ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա-ԻՆ (Անթիլիաս),
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Երուսաղեմ),
ԹՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Ստամբուլ),
ԲԱՐԵԽՆԱՄ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ
ԵՎ ԳԵՐԱՊԱՏԻՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ։

Այսօր, երբ Փրկչի Իշխան Ս. Տաճարեն Հայոց, վերստին կավետվի մեզի ամենուս Ս. Ծնունդը և Աստվածահայտնությունը աշխարհի լույս Հիսուսի Քրիստոսի, Մենք ջերմագին խնդությամբ կբերենք Մեր սիրո ողջույնը և օրհնությունը և ամենաբարի մաղթանքները Ձեզ, Ձեր հոգևոր դասուն, թեմական և եկեղեցական Ձեր կազմակերպությանց բոլոր հարգարժան անդամներուն և համայն Մեր հավատացյալ զավակներուն, աղոթելով, որ մարդիկ ու ազգերը բոլոր բանան իրենց հոգիները ու տեսնեն ճշմարտապես փառքը լույսին, որ երկինքեն կիջնե, որպեսզի աշխարհն ու մարդկությունը համայն հասնին տևական խաղաղության ու արդարության ափին։

«Փառք ի բարձունս Աստուծոյ, յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»։

Որդվոյն Աստուծո խաղաղարար կամքով, թող ապրի ու ծաղկի նաև Հայաստանյայց մեր Մայր Եկեղեցին, եղբայրական սիրո և միության մեջ, այժմ և հավիտյան:

Շնորհավոր նոր տարի և Ս. Ծնունդ:

Սիրով և օրհնությամբ,

ՎԱՉԳԵՆ Ա
ԵՒՍՐԱԳՈՒՅՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

*

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական վարչությանց և խորհուրդներին, Հայկական բարեգործական ընդհանուր միության կենտրոնական վարչության նախագահ պր. Ալեքս Մանուկյանին (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության կենտրոնական խնամակալության մեծահարգ նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգանին (Լիսաբոն), Արգաղյան ավանդի և Ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), Ս. Էջմիածնի հանձնախմբի նախագահ պր. Կ. Այթունյանին (Բեյրութ), Վարդանանց ասպետներին (Ռոտերտաուն), Կալկաթայի հայկական ընկերության վարչության (Կալկաթա), գաղութային վարչություններին, հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի և Հոգևոր Ճեմարանի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:

*

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Շնորհազարդ Եղբայր ի Քրիստոս.

Նոր տարվան և Ս. Ծննդյան տոնին առթիվ Ձերդ Վեհափառության կներկայացնենք Մեր սրտալից ջերմ շնորհավորությունները:

Ի խորոց սրտի Մեր մաղթանքն է, որ ամենաբարին Աստված պարգևե Ձեզի մշտատև առողջություն և երջանկալից երկար կյանք:

Կաղոթենք, որ Խաղաղության Իշխանը, Տեր Հիսուս Քրիստոս, խաղաղություն շնորհե աշխարհի համայն մարդկության և անշարժ ու անսասան պահե ու պահպանե Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, մեր նվիրապետական Ս. Աթոռները և հավատացյալ հայ ժողովուրդը՝ ի խնամս մարդասիրության յուրո:

Մնամ եղբայրական սիրո ջերմ ողջունիվ, աղոթակից՝

ԹՈՐԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

ԱՆԹԻԼԻԱՍ

*

Նոր տարվան և Ս. Ծննդյան տոներու երջանիկ առիթով, մեր և Սրբոց Հակոբյանց մեր միաբանության կողմե, խոնարհաբար կներկայացնենք մեր սրտագին բարեմաղթությունները և կաղոթենք, որ Ամենակալը Ձերդ Ս. Օծության շնորհե մնայուն առողջություն և երկար, երջանիկ տարիներ՝ հաջողություններով և բարօրությամբ, ի հաստատություն և ի պայծառություն մեր Մայր Եկեղեցիին՝ Ս. Էջմիածնին:

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Պատրիարք հայոց Երուսաղեմի

ԵՐՈՒՍԱՂԵՄ

*

Ամանորի և Ս. Ծննդյան տոնի երջանիկ առիթներով, կուգանք մեր կողմե և հանուն Պատրիարքությանս հոգևորական դասուն, պաշտոնական բոլոր մարմիններուն և համայն հավատացյալ հոտին, շնորհավորել Ձերդ Ս. Օծությունը և մաղթել Վեհիդ և Մայր Աթոռի միաբանության երջանիկ տոնակատարություն: Կաղոթենք այս առթիվ, որ Աստված շնորհե Սրբությանդ երկար ու քաջառողջ կյանք և արդյունաշատ պաշտոնավարություն:

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Պատրիարք հայոց Թուրքիո

ՍՏԱՄԲՈՒԼ

*

Ամանորի և Ս. Ծննդյան տոների առթիվ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով, ստացվեցին նաև ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ այլ շնորհավորական հեռագրեր և նամակներ արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերի թեմական առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Պատմության գիրկն անցավ 1965 թվականը։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ, մեր հայրենիքն ու ժողովուրդը, թե՛ Մայր Հողում և թե՛ Սփյուռքի բոլոր հյուրընկալ ափերի վրա, իրադարձություններով հարուստ անցնող տարին ճանապարհեցին երախտագիտությամբ և ազնիվ զգացմունքներով, վառ երազներով և անկոտրում հավատով բացեցին **նոր կյանքի, գալիքի, նոր ժամանակների** խոստումնալից դռները։

Նոր տարին մարդու մեջ վերանորոգվող ու անփոփոխ, հավերժական ժամանակի տոնն է, Քրիստոսի ծնունդը՝ հավիտենական կյանքի տոնը ժամանակի մեջ։

Ժամանակի և **կյանքի** այս հավերժական աղերսը, ամանորի և Ծննդյան տոների այս հաջորդականությունը քրիստոնեական մտածողության սկզբունքներից և իմացական նվաճումներից մեկն է։

Անցնող ժամանակը ստիպում է մեզ անսալ մեր խղճմտանքի ձայնին և պատասխանատվության խորունկ զգացումով խորհրդածել, հանրագումարի բերել մեր կյանքից խլված օրերի հաշիվը. **«Ցուր զհամար տնտեսութեան քո»** (Ղուկ. ԺԶ 2)։

Նոր տարին բացվում է մարդու գործունեության, կարելիության առաջ՝ որպես նոր կյանքի և հնարավորությունների մատյան։

Մարդու գերագույն կոչումն է հավերժական այդ ժամանակի և կյանքի մատյանը լցնել ազնիվ, բարի, աստվածահաճո, մարդասիրական գործերով։ Մարդն է տերը ժամանակի։ Մարդն է հավիտենապես անփոփոխ ժամանակը բաժանում հանգրվանների՝ ժամերի, օրերի, տարիների, և իշխում ժամանակի վրա, իրեն ենթարկում հավիտենականությունը, հորինում իր տեղը, իր դերը հավերժության թագավորության մեջ և իմաստ տալիս նրան։

Ի՞նչ է մարդը, փոքրիկ այդ տիեզերքը, Աստուծո և հավիտենականության համար։ «Կեանք մեր անկայուն են, շարժական է և ոչ մնացական, ամենայն ինչ փոփոխի և գնայ որպէս հին տարին գնաց»,— հաստատում է Գրիգոր Տաթևացին։

Այսօրվա կյանքի վաղանցիկ բնույթի և գալիքի նկատմամբ մարդու վառ հույսերի մեջ ավելի է գեղեցկանում աշխարհը և իմաստավորվում «առատել կեանք»-ի ըմբռնումը։

Իբրև Եկեղեցի և ժողովուրդ, **ժամանակի** և **կյանքի** մեծ խորհրդի առաջ կանգնած հայ ժողովուրդը հինը ճանապարհում է երախտագիտությամբ և բացում նոր ժամանակների անծանոթ դռները. **«Զի հինն անց և արդ նոր եղև ամենայն»** (Բ Կորնթ. Ե 17)։

Հին տարվա մայրամուտին և ամանորի լուսաբացին, որպես Եկեղեցի և ժողովուրդ, մեր մտածմունքներն ու զգացմունքները առաջին հերթին կենտրոնանում են երկու հիմնական, հավերժական իրականությունների, սրբությունների վրա, որոնք են **Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը** և վերածնված մեր **Մայր Հայրենիքը**, որոնք գոյության իմաստ, նպատակ ու գեղեցկություն են տալիս մեր ազգին, կյանքին ու պատմության։

Անցնող տարին, որպես հավերժական ժամանակի փոքր միավորը, մեր Եկեղեցու, մեր ժողովրդի և հայրենիքի համար եղավ հարուստ՝ բարի և արի արդյունքներով։

Եկեղեցական տեսակետից 1965 թվականը եղավ Մայր Աթոռի և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու համար ներքին խաղաղ աշխատանքի, հոգևոր շինության, աղոթքի և ուխտի տարի: Ս. Էջմիածնի օրհնության և ղեկավարության տակ, Մայր Աթոռում, հայրենի ներքին և Սփյուռքի բոլոր թեմերում խաղաղ և բարգավաճ պայմանների մեջ ընթացավ մեր ազգային-եկեղեցական կյանքը:

Հայաստանյայց Եկեղեցին, Հայոց Հայրապետի, 1964 օգոստոս 17 թվակիր կոնդակի ոգով և թելադրությամբ, միասնականությամբ, ազգային արժանապատվության խորին գիտակցությամբ նշեց մեր հավաքական մարտիրոսագրության հիսնամյակը:

Արդարև, անցնող տարին եղավ բովանդակ հայ ժողովրդի համար աղոթքի, ուխտի տարի և Ս. Էջմիածնի նվիրական հողի վրա կառուցվեց մեր անմոռանալի նահատակների հիշատակին, աղոթքի և ուխտի հավերժական Հուշարձան-խաչքարը:

Անցնող տարին մեր վերածնված Մայր Հայաստանի համար նաև եղավ ոգեշունչ աշխատանքի, նվաճումների, երգի, կառուցումների տարի: Իզուր չանցավ տարին: Նա իր ետին թողեց գեղեցիկ հիշատակներ, «արութեան» բազմաթիվ գործեր: Հայ ժողովուրդը ամենուրեք, համազգային ոգևորությամբ, նորանոր նվաճումներով և աշխատանքային սխրանքներով նշեց իր հայրենիքի ազատագրության, ազգային վերածննդյան քառասունհինգամյակը:

Անցնող տարում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և մեր ժողովուրդը սիրով և երախտագիտությամբ նշեցին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության տասնամյակը, որին իրենց եղբայրական խնդակցությունը բերեցին նաև քույր եկեղեցիների ներկայացուցիչներ:

Պատմական ու հիշարժան օրեր հանդիսացան 1965 թվականի հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 9 օրերը մեր ազգային-եկեղեցական տարեգրության մեջ և խանդավառ մի հանգրվան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և նրա Գահակալի եկեղեցաշեն և հայրենանվեր գործունեության ճանապարհի վրա:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, մեր վերածնված Մայր Հայրենիքը, նոր տարվա սեմին, հայ կյանքում իրենց առաքելությամբ հանդիսանում են ոչ միայն փրկության լաստ Սփյուռքի ալեկոծությանց մեջ ծփացող մեր եղբայրների և քույրերի համար, այլ նաև ամուր պատնեշ, խաղաղության նավահանգիստ՝ ոուլման նզոր հոյծանքների դեմ, լույս՝ մութի դեմ, միություն՝ բաժանման դեմ, անխորտակ ամբարտակ՝ ներքին և արտաքին բոլոր հարձակումների դեմ:

Նոր տարվա սեմին, Մայր Հայրենիքը և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հզոր են և հավերժական կենսունակությամբ լի:

Նոր տարվա լուսաբացին, քրիստոնեական Եկեղեցու զանգերը ավետում են «մեծ և սքանչելի խորհուրդ»-ը, Խաղաղության Իշխանի ծնունդը:

Պատմության մեջ մի անգամ ծնված Խաղաղության Իշխանը, «որ բնակեաց ի մեզ», կարող է ծնվել բոլոր մարդկանց սրտերում, նրանց բարոյական և հոգևոր կյանքում, ամեն օր, եթե գտնի Բեթղեհեմի մսուրի մաքուր ու խաղաղ մթնոլորտը:

Արդարև, մեր օրերին, մարդիկ ավելի անձկությամբ, անհամբերությամբ, կարոտով սպասում են ամբողջական և ճշմարիտ խաղաղության լուսաբացին:

Անցնող տարում խաղաղության ուժերը է՛լ ավելի աճեցին և համախմբվեցին, միջազգային բեմերից դատապարտվեցին պատերազմը, ցեղասպանությունը՝ որպես ոճիր Աստուծո, մարդկության և քաղաքակրթության դեմ:

Նոր տարին եկավ կյանքի, խաղաղության և արդարության երգը շրթներին. **«Ես խօսիմ զարդարութիւն և իրաւունս փրկութեան»** (Եսայի ԿԳ 1):

Նոր տարվա գալուստով, Փրկչի հրաշափառ ծննդյան շնորհներով, թո՛ղ երկրագնդի վրա հաղթանակեն խաղաղության, եղբայրության, բարեկամության վեհ գաղափարները: Թո՛ղ 1966 թվականը լինի օրհնյալ և երջանիկ տարի բոլորի համար, բոլոր հորիզոնների տակ: Թո՛ղ 1966 թվականը մեր ժողովրդի և հայրենիքի համար լինի նոր նվաճումների տարի:

Թո՛ղ սիրո, խաղաղության և ճշմարիտ, ազգային միության ոգին թագավորի նաև Հայ Եկեղեցու կամարների տակ, և բոլոր հայ կրծքերի տակ, ապրելու համար, որպես մի և անբաժան Եկեղեցի ու ժողովուրդ, Ս. Էջմիածնի աստվածային օրհնության ներքո, հայության համար և հայությամբ:

Շնորհավո՛ր նոր տարի:
«Քրիստոս ծնա՛ւ և յայտնեցա՛ւ»:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ, ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Հունվարի 6-ին, ճինգշաբթի, «Տօն ծնընդեան և մկրտութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Մայր Աթոռում, ավանդական շուքով և հանդիսությամբ, տոնվեց Աստվածահայտնության տոնը։

Առավոտյան ժամերգությունը պաշտվեց Մայր Տաճարում, ամբողջ միաբանության և ճեմարանի ուսանողության մասնակցությամբ։

Ժամը 11-ին, օրվա մեծ խորհրդի ներշնչման տակ, Մայր Տաճարի զանգերը հնչում են տոնական ու ավետավոր, մինչ հինավուրց Տաճարի խնկարույր կամարների տակ, աղոթքի մրմունջների, զվարթ լույսերի հեղեղի մեջ, թնդում է Ծննդյան հոգեզմայլ շարականը՝ «Խորհուրդ մեծ և սքանչելի»։

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»։

Օրը՝ գարնանային, հաճելի և արևոտ։

Մայր Տաճարը լիքն է աղոթավոր հավատացյալներով և ուխտավորների բազմությամբ։ Աջակողմյան ու ձախակողմյան դասերում տեղ են գրավել պաշտոնական անձինք։

Ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը, Վեհարանում զգեստավորված, եկեղեցական թափորով, ամպհովանու տակ, առաջնորդվում է Մայր Տաճար, Ս. Ծննդյան հանդիսավոր պատարագը մատուցելու։

Ս. Սեղանին սպասարկում են Տ. Ներսես ծայրագույն վարդապետը, Տ. Արսեն վարդապետը, Տ. Հովհաննես և Տ. Նշան քահանա հայրերն ու սարկավագները։

Մայր Տաճարի երգեցիկ խումբը շնորհալիորեն կատարում է սուրբ պատարագի եկմալյան և Կոմիտասյան հոգեզմայլ երգեցողությունը։

«Տեր ողորմեա»-յից առաջ, Վեհափառ Հայրապետը Փրկչի Ս. Ծննդյան մեծ խորհրդի ավետիսը տալով Հայ Եկեղեցուն և բովանդակ հայությանն, խոսում է բովանդակայից և ոգեշունչ հետևյալ քարոզը, օրվա տոնի համամարդկային հոգևոր, բարոյական նշանակության մասին, համեմված կրոնարույր և հայրենաշունչ խոհերով.

«Փառք ի բարձունս Աստուծոյ,
և յերկիր խաղաղութիւն,
ի մարդիկ հաճութիւն»։

(ՂՈՒԿԱՍ Բ 14)

Բեթղեհեմ... երկու հազար տարիներ առաջ...։

Խաղաղ ու պայծառ գիշեր էր։ Հոգնած ու տառապած մարդիկ կնիրհեին, հույսի տեսիլքներ պինդ ծրարած իրենց սրտերուն մեջ։ Աշխարհ լեցուն էր արցունքով ու վշտով։ Ծանր էր և տխուր՝ ապրիլ գոռոզ ու դաժան կեսարներու լուծին տակ։ Ո՞ւր էր արդարությունը։ Ե՞րբ պիտի հնչեր փրկության ժամը։ Մարդիկ ու ժողովուրդներ ե՞րբ պիտի շնչեին ազատ։ Ե՞րբ պիտի իջներ խաղաղությունը հոգիներուն և աշխարհին վրա։ Այս սուրբ սպասումները կաճեին ամեն օր, ամեն ժամ, և մարմին ու հոգի կստանային հրեղեն տեսիլքներու ջերմությամբ։ Ինչքան ծանր էր լուծը կյանքին և դաժան՝ կարգն ու օրենքները բռնակալներուն, այնքան ջերմ ու կախարդիչ կդառնային երազները Իսրայելի խոնարհ ու տկար զավակներուն։ Եվ երազը ավելի էր իրական ու տիրական։ Ամբոխները կհուսային, կսպասեին, կհավատային։ Եվ Աստված էր անոնց գերագույն ապավենը, գերագույն հզորիչը, գերագույն ստուգությունը։

Եվ ահավասիկ այդ գիշեր, մարդասերն Աստված բացավ Աշխարհի վրա դռները Իր ողորմության և ավետեց ծագումը Արդարության Արեգակին, Խաղաղության Իշխանին՝

ծնունդովը Իր Որդվույն: Արարչագործության այդ սուրբ պահուն, երկնքի հրեշտակները երազ երգը երգեցին, ավետիքը փրկության՝ «**Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն**»:

Այսպես ահա ծնավ Մանուկն Հիսուս, իբրև պատասխան երկնային գթության և արդարության, զոր աշխարհի բոլոր հուսացյալ հոգիները և բոլոր դարերը ընդունեցին որպես Փրկիչ ազգի մարդկան:

Մարդացավ Աստուծո Որդին, տնօրինաբար հաստատելու համար սիրո և խաղաղության ուխտը մարդոց աշխարհին մեջ և ցույց տալու բոլոր մահկանացուներուն ճանապարհը ճշմարիտ փրկության և հավիտենական կյանքին:

«**Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին Իւր Միածին ետ. զի ամենայն որ հաւատայ ի Նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս**» (Յովհ. Գ 16):

Հիսուս ծնավ և աշխարհի մեջ ապրեցավ, պատգամելու համար մարդուն, թե խաղաղության ու փրկության ճամբան կանցնի անոր հոգիին մեջեն: Մարդկային պայմանեն իսկ կրնար այս ճշմարտությունը, իբրև արարչագործության հիմքերեն մին:

Մարդը ինք պիտի սորվի ընդունիլ ու բնակեցնել իր հոգիին մեջ Աստուծո պատգամները, մարդը ինք իր հոգիով պիտի կերպարանափոխվի՝ պիտի վանե իր սրտեն գոռոզությունը, իշխանամոլությունն ու նախանձը և տենչը հափշտակելու, ոսկի և արծաթ դիզելու, որպեսզի իր և իր նմաններուն աշխարհին մեջ արդարություն և խաղաղություն ըլլա և ինք դառնա ժառանգորդ երկնքի արքայության:

Աստված մարդացավ, որպեսզի մարդը մոտենա աստվածային կատարելության և հասնի փրկության ափին:

Հիշեցե՛ք Հիսուսի խոսքը՝ «**Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս**». «**Ցայսմ գիտասցեն ամենեքեան եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս**» (Յովհ. ԺԳ 34—35):

Եթէ մարդիկ չսորվին զիրար սիրել, չեն կրնար զԱստված սիրել: Փոխադարձ սերը և հաճությունը մարդոց միջև. ահա՛ իրավ նշանը աստվածսիրության:

Սիրո և խաղաղության երկնային պատգամի իրագործումը երկրի վրա. ահա՛ ճանապարհը երկնային արքայության: Մարդու հոգիի մեջ է սկիզբը բոլոր բարիքներուն, ինչպես և բոլոր չարիքներուն: Նորեն հիշենք Հիսուսի խոսքը, թե «**Արքայութիւնն Աստուծոյ ի ներքս ի ձեզ է**»:

Արդարությունը և խաղաղությունը մարդկային կյանքի մեջ կրնան ճշմարտապես կենսագործվիլ մարդոց հոգիներու խաղաղությամբ ու գործերու արդարությամբ:

Հիսուսի ծնունդեն հետո, երկու հազար տարիներու ընթացքին, շատ անգամներ մարդիկ ու ժողովուրդներ ապրեցան և լուսավորվեցան Աստվածորդվույն ծննդյան պատգամներով, իրենց կյանքին մեջ իրականացնելով բավարար չափով մը՝ սիրո և խաղաղության պատվիրանը: Բայց եղան ժամանակներ շատ հաճախ, երբ մարդիկ ո. ազգություններ հեռացան աստվածադիր պատվիրաններեն, և կյանքը վերածվեցավ արցունքի և տառապանքի հովիտի, հուրն ու սուրը լափեցին բյուր-բյուրավոր անմեղ կյանքեր, կործանեցան շեն քաղաքներ ու ոստաններ, փչացան ու հողմացրիվ եղան անթիվ անհամար քաղաքակրթական արժեքներ: Եղան, այո՛, անգթության և խելագար չարագործության շրջաններ, երբ գազանային կույր կրքերը սանձարձակ փոթորկված, աշխարհը վերածեցին դժոխքի: Քաոսը հոգիներուն՝ աշխարհն ու կյանքը վերածեց քաոսի: Եղան, այո՛, բազում անգամներ Հողոփեռնեսներ, մահվան գործիքներ, ավերակներու ճարտարապետներ: Եվ քանի՜-քանի՜ անգամներ մեր այս տառապած երկրագունդի վրա սերունդներ, բազմություններ և նույնիսկ ամբողջ ցեղեր բնաջինջ եղան, ինչպես պատահեցավ մե՛ր ժողովուրդին, հայ ժողովուրդին հիսուն տարի առաջ, սուլթանական Թուրքիո խավար ու դաժան, մահածին օրերուն:

Այսօր, երբ մարդու իմացական հանճարը հաջողած է տիրանալու նյութի ահեղ ուժերու ամբողջական սանձաձերծման միջոցներուն, արդյոք նույն մարդը պիտի կարողանա՞ իր հոգիին մեջ բարոյական բավարար զորություն ունենալ, սիրո և խաղաղության ոգի, կարենալու համար իրապես տերը դառնալ նյութին և անոր ուժերուն: Արդյոք մարդը բարոյապես արժանի պիտի դառնա՞ իր իմացական հանճարին:

Նյութի հյուլեական ուժերու սանձաձերծումը այսօր իրողություն է: Արդ, մեծագույն հարցը կդրվի՝ մարդը ինչպիսի՞ դաշինք պիտի կնքե անոնց հետ: Արդյոք ան իր իսկ հայտնաբերած ուժերով պիտի խորտակվի՞, թե պիտի տիրակալե ու օգտագործե զանոնք՝ իր կյանքի խաղաղության ու երջանկության համար: Ո՞վ դաշինք պիտի կնքե մարդու իմացական հանճարին հետ, մարդու բարոյական հանճա՞րը, թե նույն մարդու կույր կիրքերն ու վայրագ մղումները: Ո՞վ դաշինք

պիտի կնքե հյուլեական ուժերուն հետ, պատերա՞զմը, թե խաղաղ աշխատանքը:

Այսօր, ավելի քան երբեք պատմության ընթացքին, չկա ավելի ըղձալի գաղափար, ավելի փրկարար պատգամ, քան երկնքի հրեշտակներուն ավետիսը, որ մեզի կբաշխվի Հիսուսի Ս. Ծննդյան շնորհներով.

«Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Աստված նյութական տիեզերքը ստեղծեց լույս սփռելով և ներդաշնակ խաղաղություն հաստատելով ժամանակի և տարածության մեջ: Այսպես է, որ **Քաոսը** վերածվեցավ **Կոզմոսի**, այսինքն խավարի անդունդներուն մեջ աներևույթ և անպատրաստ երկիրը դարձավ ներդաշնակ, օրինաչափ, լուսավոր գոյություն մը:

Նույն Արարաչը Իր Որդին Հիսուս երկիր առաքեց, այս անգամ սիրո լույսը ծաթեցնելու և խաղաղության ոգին հաստատելու համար մարդոց հոգեկան աշխարհին մեջ:

Աստվածային արարչագործությունը խաղաղությամբ սկիզբ առավ ու ներդաշնակ տիեզերք մը ստեղծեց: Սկզբունքը խաղաղության և ներդաշնակության՝ պայման է նաև մարդկային հասարակական կյանքի, մարդկային բարոյական կյանքի, շինարար ու ստեղծագործ աշխատանքի:

Տոնախմբելով և փառաբանելով մեր Տիրոջ ու Փրկչի Ծննդյան և Աստվածահայտնության հիշատակը, Մենք, իբրև բազմադայլյան Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո առաջին սպասավորը, կխոնարհինք Միածնաէջ այս նվիրական Տաճարի Սեղանի առաջ և կուխտենք անգամ մը ևս հավատարիմ մնալ **«կենաց և խաղաղութեան ուխտ»**-ին (Մաղաքիա Բ 5):

Կաղոթենք աշխարհի խաղաղության և ժողովուրդներու միջև բարի կամեցողության զարգացման համար:

Կաղոթենք քրիստոնեական եկեղեցիներու և աշխարհի բոլոր կրոնների եղբայրակցության և խաղաղ ու համերաշխ գործակցության համար:

Կաղոթենք խաղաղության, հոգևոր-եկեղեցական միության և ազգային միասնության ամրապնդման համար, մեր Մայր Եկեղեցվո և մեր հարազատ ժողովուրդի ծոցին մեջ, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Փրկչի Ս. Ծննդյան շնորհներով, նոր տարին, որ սկիզբ առավ անցա, թող ըլլա խաղաղության, բարեկամության և շինարար աշխատանքի տարի ամբողջ մարդկության համար, հայ ժողովուրդի համար, մեր վերածնած Մայր Հայրենիքի համար:

«Սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ ընդ ամենեսեանդ»:

Շնորհավոր նոր տարի և Ս. Ծնունդ»:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է Քրիստոնյաց սրբազան կարգը, Ավագ Սեղանի բեմի առաջ, ի հիշատակ Քրիստոսի մկրտության Հորդանան գետում։

Եկեղեցական արարողության ավարտին Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան։

Լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոսը շնորհավորում է Վեհափառ Հայրապետի Ս. Ծննդյան տոնը հանուն Մայր Աթոռի միաբանության, Գերագույն Հոգևոր խորհրդի, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի, Մայր Աթոռի պաշտոնեության և բոլոր նեղկաներին։

Վերջում օրհնության խոսք է ասում Վեհափառ Հայրապետը, Իր շնորհակալությունը հայտնում եղած ջերմ շնորհավորանքների և բարեմաղթությունների համար, ապա օրհնում բոլորին, բարեմաղթելով անսասանություն Մայր Աթոռին, պայծառություն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն, բարօրություն հայրենիքին և խաղաղություն աշխարհին։

Ժամը 4-ին, Վեհարանում, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամները և այլ պաշտոնական անձինք սեղանակից են լինում Վեհափառ Հայրապետին։ Հյուրերի թվումն էին Նյու-Յորքի հայոց Մայր Տաճարի շինության կենտրոնական հանձնաժողովի քարտուղար, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող արժանապատիվ Տ. Լևոն քահանա Առաքելյանը, ընկերակցությամբ ճարտարապետ Վալկեր Կաինի և կառուցող ինժեներ Ռոբերտ Բարրի։

Ժամը 6-ին, խմբովին երգված Տերունական աղոթքով, ավարտվում է ընդունելությունը։

ՍՈՒՐԲ ԸՆՏԱՆԻՔԸ

(Գործ՝ պատանի խոստումնալից նկարիչ Վահան Քոչարի)

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ, ՎԱԹՍՈՒՆԱՄՅԱԿԸ

Լրացավ Հայկական բարեգործական ընդհանուր միության հիմնադրման 60-ամյակը։ «Էջմիածին» ամսագրի սույն համարում հրատարակվում է Վեհափառ Հայրապետի հունվար 1 թվակիր հայրապետական կոնդակը, Հայկական բարեգործական ընդհանուր միության վաթսունամյակի առթիվ։

Հայոց Հայրապետը, գեղեցկորեն բնութագրելով Հայկական բարեգործական ընդհանուր միության նպատակը, ոգին և գործունեությունը, գրում է.

«Հայկական բարեգործական ընդհանուր միությունը ծառայության և զոհաբերության ուխտ մըն է..., ճարտարատորեն հայկական. ճշմարտապես բարեգործական, համազգային իմաստով ընդհանուր, եղբայրական սիրով գոտեպինդ միություն մը»։

Վաթսուն տարի առաջ, 1906 թվականի ապրիլին, Նեղոսի ափին ծնունդ էր առնում Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ և մի շարք բարեսեր, հայրենասեր հայորդիների սրտագին բաջալերությամբ և մասնակցությամբ։

«Մեծատանց որ են յայսմ աշխարհի, պատուէր տուր՝ մի՛ հպարտանալ և մի՛ յուսալ ի մեծութիւն սնոտի, այլ յԱստուած... զբարիս գործել, մեծանալ գործովք բարութեան» (Ա Տիմոթ. Զ 17—18)։

Հայկական բարեգործական ընդհանուր միությունը նախապես կազմակերպվում էր Արևմտյան Հայաստանի գավառների հայության նյութական օժանդակություն անելու հայրենանվեր մտածումով։

Այնուհետև, սակայն, միությունը հայ ժողովրդի գլխին տեղացող թշվառությունների և բաղմապիսի ծովացած կարիքների դիմաց, որդեգրում էր նաև եկեղեցական, կրթական և հայրենասիրական գործունեություն։

Վաթսուն տարի շարունակ բարիք և օրհնություն եղավ նա հայ կյանքում, հասավ միության բարի և նախախնամական ձեռքը Սփյուռքում Հայ եկեղեցու կարիքներին, հայ գաղթական ժողովրդի զրկանքին, վշտին, հայ մշակույթի, հայ դպրոցի մտահոգություններին, պետքերին։

Մեր ժողովուրդը ի բնե բարեսեր, առատաձեռն ժողովուրդ է։ Նա միշտ իր «այրի կնոջ երկու լումա»-ն սիրով տվել է եկեղեցու և ազգի կարիքների համար։

«Վաւ է տալն քան զառնուլն» (Գործք Ի 35)։ Իրապես հայկական, համազգային և միջհարանվանական և զուտ մարդասիրական ոգով կազմակերպված Հայկական բարեգործական ընդհանուր միությունը մարմնացումն է մեր ժողովրդի քրիստոնեական գութի, հավատի, նրա աղնվագույն, մարդասիրական զգացմունքների և արտահայտու-

թյուններից մեկը միաժամանակ մեր համազգային միության։

Ոսկու դեզերի մոտ՝ ոսկի սիրտ, առողջ միտք և մարդասիրական վերաբերմունք հանրային-հասարակական պարտքի գիտակցությամբ։ Ահա՝ ճշմարիտ բարեգործությունը, որը գործունեության սկզբունքն է եղել Հայկական բարեգործական ընդհանուր միության։

Հայկական բարեգործական ընդհանուր միության գործունեության դաշտը ընդարձակ է, ոգին՝ անխտրական։

Այս իրապես մեծ ու պատվական միության անդամ են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, հայ կաթողիկե և հայ ավետարանական համայնքների զավակները։

Այս բարեգործական միությունը ծառայում է հայ քրիստոնեական հավատին, մեր ժողովրդին, մշակույթին և հայրենիքին։

Ահա թե ինչո՞ւ միության հիմնադրության առաջին իսկ օրից, Ամենայն Հայոց Հայրապետները, Խրիմյան Հայրիկից մինչև Վազգեն Ա, ջերմորեն, սրտաբուխ զգացմունքներով, օրհնության կոնդակներով, կոչերով քաջալերել են Հայկական բարեգործական ընդհանուր միության գործունեությունը։ Որովհետև,— «Այսպիսի միություն մը,— գրում է Վեհափառ Հայրապետը Իր կոնդակում, կոչված է ճավնտ ապրելու, վասնզի ան կմարմնավորե ճայ ժողովուրդի ապրելու, գոյատևելու և ստեղծագործելու վալերական կերպարեն մին, ու կգործե ճայ ժողովուրդի ճավնժության համար»։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը իր անկեղծ հարգանքն ու սրտագին շնորհավորություններն է միացնում Հայկական բարեգործական ընդհանուր միության վաթսունամյակի առթիվ արտահայտված համազգային երախտագիտության, հարգանքին և ջերմորեն բարեմաղթում է նոր հաջողություններ։

«Գիտասչիք, թէ իւրամանչիւր որ զինչ առնէ զբարին, զնոյն ընդունի և ի Տեառնէ» (Եփես. Զ 8)։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Դեկտեմբերի 13-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը «օրհնեալ ես դու ի կանայս և օրհնեալ է պտուղ որովայնի քո» բնաբանով (Ղուկ. Ա 42)։*

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Դեկտեմբերի 13-ին, կիրակի, *ժամը 2.30-ին, ֆրանսահայ ծանոթ երգչուհի Ռոզի Արմենը, Մայր Տաճարում իր ուխտը կատարելուց հետո, Վեհարանում այցելեց Վեհափառ Հայրապետին։*

***

Դեկտեմբերի 16-ին, շաբաթշաբթի, *Մայր Աթոռ վերադարձավ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Գրիգոր Բեքմեզյանը, որը Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, գերաշնորհ Տ. Զգոն եպիսկոպոս Տեր-Հակոբյանի և գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյանի հետ մասնակցում էր Վատիկանի երկրորդ ժողովին իբր դիտորդ։*

***

Դեկտեմբերի 17-ին, հինգշաբթի, *Հնդկաստան մեկնեց Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի հայոց հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանի հետ, հանուն Վեհափառ Հայրապետի, մասնակցելու համար Քոտայամում Հնդիկ Մալաբար Եկեղեցու հոգևոր ճեմարանի 100-ամյակի հանդիսություններին։*

Այնուհետև Տ. Կոմիտաս եպիսկոպոսը կայցելի Բոմբեյի, Կալկաթայի հայ համայնքների և Ավստրալիայի հայ գաղութի եկեղեցիները, տանելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները։

***

Դեկտեմբերի 19-ին, շաբաթ, *երեկոյան ժամը 7-ին, Հոգևոր Ճեմարանում, Գրիգոր Բեքմեզյանը հուշեր և տպավորություններ պատմեց ուսանողության և Մայր Աթոռի միաբանության՝ Վատիկանի ժողովի մասին։*

Վերջում վերատեսուչ Տ. Ներսես հայր սուրբը շնորհակալություն հայտնեց հարգելի բանախոսին՝ հետաքրքրական դասախոսության համար։

***

Դեկտեմբերի 20-ին, կիրակի, *Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գևորգ վարդապետ Սերայդարյանը «Հայրապետ սուրբ և անբիծ և ընտրեալ յորովայնէդ» բնաբանով։*

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Դեկտեմբերի 24-ին, հինգշաբթի, *«Տան Սրբոյն Դաւթի մարգարէին և Յակովբայ առաքելոյն»։*

Այսօր լրացավ Շիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մաշտոց եպիսկոպոս Թաչիրյանի ծննդյան 70-ամյակը։

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, ամսի 19-ին Լենինական մեկնեց հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը, որը ամսի 20-ին Ս. Աստվածածին եկեղեցում պատարագեց և քարոզեց «զի խորհուրդ մարմնոյ մահ է և խորհուրդ հոգւոյն կեանք և խաղաղութիւն» բնաբանով։ Իր քարոզի վերջավորության, հայր սուրբը անդրադարձավ Տ. Մաշտոց եպիսկոպոսի կյանքի և եկեղեցական գործունեության վրա, հաղորդելով Վեհափառ Հայրապետի ողջույնի և օրհնության խոսքը։

Ամսի 23-ին, չորեքշաբթի, Լենինական էին մեկնել նաև հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը և Մայր Աթոռի Ֆինանսական բաժնի պետ պր. Գ. Քեհյայանը՝ մասնակցելու սրբազանի 70-ամյակին նվիրված եկեղեցական հանդիսություններին։

Ամսի 24-ին, հինգշաբթի, առաջնորդարանի հարկաբաժնում, կազմակերպվեց ընդունելություն ի պատիվ հոբելյար սրբազանի, որին մասնակցեցին Լենինականի թեմական խորհրդի անդամները, Մայր Աթոռի հյուրերը, Լենինականի և Կիրովականի քահանայից դասը և այլ հրավիրյալներ։

***

Դեկտեմբերի 20-ին, շաբաթ, «Տօն Սրբոյն Ստեփանոսի նախավկային և առաջին մարտիրոսին»։

Այսօր Մայր Աթոռի սարկավագների տոնն է։ Մայր Տաճարում երգեցողությունները ղեկավարում են սարկավագները։

Օրվա հանդիսավոր սուրբ պատարագը մատուցում է վերատեսուչ հոգեշնորհ Տ. Ներսես ծայրագույն վարդապետը և քարոզում «Նախասարկաւագ և առաջին մարտիրոս Ս. Ստեփանոս» բնաբանով։

Հավարտ սուրբ պատարագի, վերատեսչի առաջնորդությամբ, սարկավագները Վեհարանում ստանում են Վեհափառ Հայրապետի օրհնությունը։

Ժամը 3-ին, Ճեմարանի սեղանատանը, կազմակերպվում է ընդունելություն։ Սարկավագների տոնը շնորհավորում են Տ. Հուսիկ եպիսկոպոսը, Ճեմարանի դասախոս Գրիգոր Գյուլյանը։ Դավիթ սարկավագը շնորհակալություն է հայտնում սարկավագների տոնի առթիվ արտահայտված բարի ցանկությունների համար և խոստանում հանուն իր ընկերների՝ ընթանալ Ս. Ստեփանոսի հավատով և զինվել նրա նախանձախնդրությամբ։

***

Դեկտեմբերի 27-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Նշան քահանա Թելլերյանը և հավուր պատշաճի քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսես ծայրագույն վարդապետ Պողոսյանը։

***

1966 թվականի հունվարի 2-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Հունվարի 2-ին, կիրակի, Մայր Աթոռ ժամանեցին Նյու-Յորքի հայոց Մայր Տաճարի շինության կենտրոնական հանձնաժողովի քարտուղար արժանապատիվ Տ. Լեոն քահանա Առաքելյանը, ճարտարապետ Վալկեր Կեփնը և կառուցող ինժեներ Ռոբերտ Թարրը. ծանոթանալու հայ ճարտարապետությանը և Վեհափառ Հայրապետին ու Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնախմբի անդամներին ծանոթացնելու կառուցվելիք Մայր Տաճարի ճարտարապետական նախագծերին և իմանալու, թե ի՛նչ ձևով Մայր Աթոռի ճարտարապետների հանձնախումբը կարող է գործնականորեն օգնել իրենց։

Վեհափառ Հայրապետի նախագահության տակ և ճարտարապետների հանձնաժողովի մասնակցությամբ Վեհարանում զումարվեցին նիստեր, ուր հանգամանորեն քննվեցին բերված նախագծերը, եղան օգտակար դիտողություններ և թելադրություններ և գործնական որոշումներ առնվեցին Նյու-Յորքի հայոց Մայր Տաճարի շինության վերաբերյալ։

Հարգելի հյուրերը, Մայր Աթոռի ճարտարապետ Ա. Գալիկյանի առաջնորդությամբ ծանոթացան մեր պատմական և ժամանակակից հուշարձաններին, այցելեցին Գառնի, Գեղարդ, Սևան և այլ վանքեր, մայրաքաղաքի տեսարժան վայրերը և լավագույն տպավորություններով հունվարի 7-ին վերադարձան Նյու-Յորք։

***

Հունվարի 5-ին, չորեքշաբթի, «Ճրագալոյց Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Մայր Տաճարում, երեկոյան ժամերգությունից հետո, ճրագալույցի հանդիսավոր սուրբ պատարագը մատուցեց լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց Ծննդյան նախատոնակը Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ։

Արարողության ավարտին, Հայոց Հայրապետը, հանդիսավորապես և եկեղեցական թափորով, «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականի հնչյունների տակ, առաջնորդվեց Վեհարան, ուր օրհնեց և արձակեց միաբանությանը։

***

Հունվարի 5-ին, չորեքշաբթի, Թաքու մեկնեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պե-

տիկյանը, Դավիթ սարկավագի ընկերակցությամբ, Ս. Ծննդյան տոնի առթիվ պատարագելու և Բանին կենաց քարոզությամբ մխիթարելու հավատացյալներին։

Հայր սուրբը և սարկավագը Մայր Աթոռ վերադարձան հունվարի 7-ին։

***

Հունվարի 7-ին, ուրբաթ, «Ցիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Նշան քահանա Բեյլերյանը։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգիստ՝ ի հիշատակ մեռելոց։

***

Հունվարի 9-ին, կիրակի. Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

***

Հունվարի 11-ին, երեքշաբթի, Ամանորի և Ս. Ծննդյան տասնօրյա արձակուրդից հետո, վերաբացվեց Հոգևոր Ճեմարանը։

***

Հունվարի 13-ին, հինգշաբթի, «Տսն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Նշան քահանա Բեյլերյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Հունվարի 15-ին, շաբաթ, Ս. Հովհաննես Մկրտչի տոնի առթիվ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Գևորգ վարդապետ Սերայդարյանը։

***

Հունվարի 15-ին, շաբաթ, երեկոյան ժամը 7-ին, Հոգևոր Ճեմարանում տեղի ունեցավ գրական-գեղարվեստական երեկո, բաղկացած երգերից, արտասանություններից և նվագից։ Բարեշնորհ Գրիգոր սարկավագ Բունիաթյանը ընթերցեց «Սերմնացանի առակը» իր շարադրություն-քարոզը։

Երեկոյին նախագահում էր Վեհափառ Հայրապետը, ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը և դասախոսական կազմը։

Վերջում, իր խրատական խոսքի մեջ, Վեհափառ Հայրապետը Սերմնացանի առակի վերլուծությամբ և օրինակով ծանրացավ դաստիարակության վերաբերյալ մի շարք փիլիսոփայական տեսությունների և հարցերի վրա և գեղեցկորեն վեր հանեց Սերմնացանի առակի նաև մանկավարժական, դաստիարակչական կարևոր նշանակությունը։

Ժամը 9-ին, Վեհարանում, նորին Ս. Օծությունը բարեհաճեց թեյասեղանի շուրջ ունենալ Մայր Աթոռի միաբանության անդամներին և դասախոսներին՝ գրական երեկոյի և դաստիարակության հարցերի շուրջ զրուցելու և մտքերի փոխանակություն ունենալու համար։

***

Հունվարի 16-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Հունվարի 16-ին, կիրակի, հոգեշնորհ Տ. Ներսես ծայրագույն վարդապետը, Գրիգոր սարկավագ Բունիաթյանի ընկերակցությամբ, մեկնեց Թբիլիսի, հին տոմարով Ս. Ծննդյան տոնի առթիվ պատարագելու և Բանին կենաց քարոզությամբ մխիթարելու հավատացյալներին։ Հայր սուրբը և սարկավագը Մայր Աթոռ վերադարձան հունվարի 21-ին։

***

Հունվարի 16-ին, կիրակի, հին տոմարով Ս. Ծննդյան տոնակատարության արարողություններին իրենց մասնակցությունը բերելու համար, եղիշե սարկավագը մեկնեց Բրիգումսկ (Ստավրոպոլի երկրամաս), իսկ Հովհաննես սարկավագը՝ Արմավիր (Կրասնոդարի երկրամաս)։ Սարկավագները Մայր Աթոռ վերադարձան հունվարի 22-ին։

***

Հունվարի 22-ին, շաբաթ, երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետի նախագահության տակ, Վեհարանում, գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ընդլայնված նիստը, ուր զեկուցեց Գ. Բեքմեզյանը Վատիկանի ժողովի մասին։ Նիստին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, «էջմիածին» ամ-

սագրի խմբագրական կազմը և Հոգևոր ճեմարանի դասախոսները։

°°°

Հունվարի 23-ին, կիրակի. *Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը և քարոզեց «Զի ոչ առաքեաց Աստուած զՈրդին իւր յաշխարհ թէ դատեսցի զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ նովաւ (Յովհ. Գ 17) բնաբանով։*

°°°

Հունվարի 30-ին, կիրակի. *Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը։*

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

°°°

Հունվարի 31-ին, երկուշաբթի. *Հոգևոր ճեմարանում սկսվեցին կիսամյա քննությունները, որոնք կտևեն մինչև փետրվարի 7-ը։*



ԱՄԱՆՈՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Դեկտեմբերի 31-ն է, ուրբաթ։

Մայր Աթոռում 1965 թվականի վերջին օրն է։

Կաղանդի գիշեր։

Ժամը 10-ին, Հոգևոր Ճեմարանի սեղանատանը, Մայր Աթոռի միաբանությունն ու Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը, համախմբվել են ամանորի ավանդական սեղանների շուրջ, զոհությամբ և երախտագիտությամբ լցված դեպի համազգային այս սուրբ հաստատությունը, որ ամենայն հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածինն է, և նրա Գահակալը։

«Դու, Տէր, Դու զայս ամ ի լրումն
հասուցեր...
Տարւոյ քաղցրութեան քո օրհնի պսակ...»։

Որոշյալ պահին ժամանում է Վեհափառ Հայրապետը և օրհնում ամանորական սեղանը։

Մայր Աթոռի բարիքներով ծանրաբեռն սեղանների շուրջ ստեղծվում է կաղանդի գիշերվա հատուկ մտերիմ, ջերմ, ընտանեկան մթնոլորտ։

Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ հոգեշնորհ Տ. Ներսես ծայրագույն վարդապետ Պոզապալյանը սրտագին խոսք է ասում, ուղղված Վեհափառ Հայրապետին, շնորհավորելով նորին Ս. Օծության, Մայր Աթոռի միաբանության և Հոգևոր Ճեմարանի ուսանողության նոր տարին։

Ա լսարանի ուսանող Հովսեփ Հակոբյանը, հանուն ուսանողության, ընթերցում է Վեհափառ Հայրապետին ուղղված երախտագիտության և շնորհակալության մի ջերմ ուղերձ։

Լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոսը բաժակ է առաջարկում, հոտընկալս, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության, պայծառության և նրա արժանավոր Գահակալի կենաց արևշատության համար։

Վեհ ու տոնական, միաբերան հնչում է «Էջ Միածին ի Հօրէ» շարականը։

Գ լսարանի ուսանող Գրիգոր սարկավագ Բունիաթյանը արտասանում է Պարույր Սևակի «Դիմում եմ պահանջելու պես» քերթվածը, Ա դասարանի ուսանող Ա. Մարտիրոսյանը՝ Վ. Թեքեյանի «Հաշվեհարդար»-ը, Բ դասարանի ուսանող Հ. Հակոբյանը՝ Ա. Իսահակյանի «Կենսական ծովի հուլդերի միջին» բանաստեղծությունը։

Վեհափառ Հայրապետը երկրորդ բաժակը բարձրացնում է հայ ժողովրդի պայծառ ապագայի և Մայր Հայրենիքի բարօրության, հայրենի կառավարության հայրենաշեն գործերի հաջողության կենաց, բարեմաղթելով, որ նոր տարին խնդություն բերի բոլոր հայ երդիկներին, օջախներին, ծովանան բարին ու բերքը մեր աշխարհին և օրհնվի արդար վաստակը հայ բազուկների և հայ մտքի, բոլոր հորիզոնների տակ, և աշխարհում լինի խաղաղություն, ապահովություն և երջանկություն։

Հոգևոր Ճեմարանի երգեցիկ խումբը խանդավառորեն կատարում է Ճեմարանի քայլերգը, «Սեղանն է առատ», «Ինչույքի երգ», «Լեպո լե, լե» խմբերգերը։

Օրվա տոնի խորհրդի շուրջ ելույթ են ունենում գերաշնորհ Տ. Վահան եպիսկոպոսը, հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետը, Ճեմարանի վերակացու արժանապատիվ Տ. Նշան քահանա Թեյլերյանը։

Հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Թերթերյանը ապրումով մեներգում է «Ուրախ լեր Ս. Եկեղեցի» շարականը։

Հանդիսության իրենց մասնակցությունն են բերում նաև այլ ուսանողներ արտասանությամբ, Ա. Գրիգորյանը «Հայրենի ջրեր» (Ս. Վահունու), Բ. Միքայելյանը՝ «Ջանգվի կամուրջ» (Խ. Դաշտենցի), Ռ. Սաղոյանը՝ «Դեպի բնօրրան» (Հ. Շիրազի)։

Խումբը կատարում է «Հարսանեկան երգ»-ը, «Առավոտուն բարի լուս»-ը, «Հարսին երգը», «Իմ չինարի յարը» խմբերգերը։

Գ և Ա լսարանների ուսանողները կատարում են «Հրեշտակային ձայնիւ» և «Ճառագայթ փառաց Հօր» շարականները։

Ընդհանուր խանդավառության և ուրախության մթնոլորտում, վերատեսուչ վարդապետը հրապարակում է նոր տարվա առթիվ գրած իր «կաղանդչեքներ»-ը։

Ժամը 12-ն է։

Մի պահ հանգում են սրահի լույսերը և դահլիճը խոր լռության մեջ ունկնդրում է «Լուռ գիշեր, սուրբ գիշեր» ծննդյան հոգեզմայլ երգը։

Ամանորի ուրախ սեղանների շուրջ ժամանակն անցնում է շատ հաճելի ու բովանդակալից։

Անցյալի գիրկն է անցել 1965 թվականը։ Նոր տարվա այգաբացն է արդեն։

Վերատեսուչ վարդապետի խնդրանքով, Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռի միաբանության և Հոգևոր Ճեմարանի ուսանողության տալիս է ամանորի Իր պատգամն ու հայրապետական օրհնությունը։

Ժամը 1-ին, խմբովին երգված Տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով վերջանում է նոր տարվա դիմավորման նվիրված Հոգևոր Ճեմարանի սույն հանդիսությունը։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ Ի Ր Ե Ն Ա-ԻՆ*

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՒՆ Տ. Տ. ԽՈՐԷՆ Ա, ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԱՆԹԻԼԻԱՍ

Ծնորհազարդ Եղբայր.

Աստուծոյ ողորմութեամբ, Մայր Աթոռիս հանդիսութիւնները, Նահատակաց յուշարձանին բացման և Մեր տասնամեայ գործունէութեան լրման առթիւ, տեղի ունեցան եկեղեցաշէն ու հայրենաշունչ, ջերմ մթնոլորտի մէջ, մասնակցութեամբ գրեթէ մեր բոլոր թեմական առաջնորդներուն և աշխարհական ներկայացուցիչներուն, ի գլուխ ունենալով Երուսաղէմի Ամենապատիւ Պատրիարք Տ. Եղիշէ Արքեպիսկոպոսը իր շքախումբով:

Մենք ուրախ եղանք ողջունելու նաև ներկայութիւնը այստեղ քոյր եկեղեցիներու բարձրաստիճան ներկայացուցիչներու, գլխաւորութեամբ Ամենապատիւ Տ. Իգնատիոս-Պետրոս Պատրիարքին կաթողիկէ հայոց և հայ աւետարանական եկեղեցիներու ներկայացուցիչ վերապատուելի Յովհաննէս Ահարոնեանի:

---

* «Էջմիածին» ամսագրի ընթերցողներին քաջ ծանոթ է, թէ Երուսաղէմի 1963 թվականի ողջագուրումը ի՛նչ բերմ ոգևորությամբ ընդունեց Մայր Աթոռի պաշտոնաթերթը և ի՛նչ բարի հույսեր կապեց նրա կենսագործման հետ։

Դժբախտաբար սակայն մեր այդ հույսերը չիրականացան։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը անսահման, համբերատար ոգով և իրապես եղբայրական սիրով ու լավատեսությամբ, ահա ավելի քան երկու տարուց ի վեր, ամեն ճիգ ի գործ է դրել, քաղցր խոսքերով և սրտառուչ կոչերով, հրավիրելու Անթիլիասի Կաթողիկոսական Աթոռը՝ որ հարգի իր խոստումները և հավատարիմ մնա ողջագուրման բարերար ոգուն։

«Էջմիածին» ամսագրի 1964 թվականի օգոստոս—սեպտեմբեր միացյալ համարում հրատարակվել են Հայոց Հայրապետի մարտ 14, հուլիս 5, օգոստոս 27 թվակիր նամակները, ուղղված Տ. Տ. Խորեն Ա Կաթողիկոսին։

Ավա՜ղ, սակայն, այդ կոչերը ոչ մեկ արձագանք չգտան Անթիլիասի ափերին։ Ոչ միայն չհարգվեցին հանդիսավոր խոստումները և ոչ միայն որևէ տրամադրություն ցույց չտրվեց որինական և եղբայրական ոգով լուծելու մեր եկեղեցական կյանքում տագնապ ստեղծող ծանոթ հարցերը, այլև նոր դժվարություններ և բարդություններ ստեղծվեցին Սփյուռքում, Տանն Կիլիկիո Աթոռի կողմից, ողջագուրումից հետո։

Թե՛ Մայր Հայրենիքում և թե՛ արտասահմանում, հայ հասարակության և մեր ընթերցողներին ծանոթ են՝

ա) Անթիլիասի ոտնձգությունը Մարսելի էջմիածնական թեմում, որով պառակտվեց տեղի հայ եկեղեցին և ժողովուրդը։

բ) Անթիլիասի Գահակալի վերաբերմունքով և գործելակերպով, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի համար ստեղծված ծանր կացությունը 1965 թվականի հունվարին Աղդիս-Արեբայում,

Միշտ է, թէ Մեր սիրտը տխրեցաւ, որ Ձերդ Ս. Օծութիւնը չկրցաւ ընդունիլ Մեր եղբայրական հրաւէրը, սակայն նոյնքան անկեղծութեամբ ըսենք, թէ գոհ մնացինք, որ վերջին պահուն որոշեր էիք ներկայացուցիչ մը ուղարկել, յանձին գերաշնորհ Տ. Տաճատ արքեպիսկոպոսի։

Մենք եղբայրաբար սիրեցինք սրբազանին հեզահամբոյր հոգին, և ուրախ եղանք, որ Պէյրութի առաջնորդը Տանն Կիլիկիոյ Աթոռէն, Ս. Էջմիածնի Սեղանի առջև իր ուխտը կատարեց և Մեզի հետ միասին աղօթեց Հայաստանեայց Եկեղեցիի անսասանութեան, միութեան և խաղաղութեան համար։

Անցան ահա տասը տարիներ այն օրէն, երբ Նախախնամութիւնը Մեր տկար ուսերուն վրայ դրաւ Հայոց Հայրապետութեան լուծը, որուն համար Մեր սիրտը երախտապարտ է, որովհետև ինչքան ծանր ըլլայ այդ լուծը, այնքան մեծ կը դառնայ պատիւը, որ կ՚ընծայուի Մեր անձին։

Այս տասը տարիներու ընթացքին, Մենք աշխատեցանք Մեր պարտքը կատարել մեր Եկեղեցիի ու ազգի տեսական ապրումներու և հիմնական շահերու գիտակցութեամբ։ Տկարութիւնը չունինք գերագնահատելու Մեր գործունէութեան արդիւնքները, սակայն կը խորհինք, թէ Մենք ջանացինք միշտ անկեղծ ու յստակ ըլլալ խորհրդով, բանիւ և գործով, միշտ հետևողական ու հաւատարիմ Մենք Սեզի, և տեսակէս լաւատես Մեր աշխատանքով։ Կը հաւատանք նաև, թէ անցնող տասը տարիներուն, Մայր Աթոռը երբեք չշեղեցաւ Հայոց Եկեղեցիին առաքելութեան ուղիղ ճամբէն, պարագայ մը, որ Մենք անձնական շնորհ մը չենք նկատեր Սեզի համար։ Այդ շնորհը կ՚իջնէ բոլոր անոնց վրայ, որոնք կը զգան կախարդիչ ուժը հայրենի հողին, և որոնք իրենց հոգին բանալ կը սորվին Ս. Էջմիածնի սրբացած այս ծանր քարերու խորհուրդին։ Այսպէս է, որ Հայոց Հայրապետ մը կը կարողանայ ապրիլ ու հասկնալ հայ ժողովուրդի ներկան, մեր օրերու հայոց «իմացեալ» կեանքը և ունենալ տեսիլքը գալիքին։

Այս էր եղած բուն և խորունկ իմաստը 14 մայիս 1965 թուականի նամակով Ձեզի ուղղեալ Մեր հրաւէրին, որպէսզի Ս. Էջմիածին և Մայր Հայրենիք ուխտի գալով, բանայիք նաև Ձեր հոգին ա՛յս խորհուրդներուն և ա՛յս հոգեկան աղբիւրներուն, և ներկային ընդմէջէն ճանչնայիք մեր անցեալի իրական ժառանգութիւնը և նորը՝ թանձրացեալ կերպով, ու վճիտ տեսնէիք հայոց ապագան։

Մեր հրաւէրով Մենք տակաւին կը յուսայինք, թէ մասնաւոր իմաստ մը կրնար ստանալ Մեր նոր ողջագուրումը այստեղ, ամենայն հայոց Սրբութիւն Ս. Էջմիածնի կամարներուն ներքև։

Արևելքի պատմական հինգ Եկեղեցիների սլետերի համաժողովում, որի հետևանքով մեր Հայրապետը բարվոք համարեց հրաժարվել այդ ժողովին մասնակցելուց, չկամենալով Հայ Եկեղեցու ներքին վեճերը բացահայտել քույր Եկեղեցիների և օտար աշխարհի առաջ։

Դ) եվ, վերջապես, Անթիլիասի Աթոռի նոր կանոնադրության 32-րդ և 33-րդ հոդվածները, որոնք ժխտումն իսկ են Հայ Եկեղեցու ներքին միության և խաղաղության սկզբունքների և նրա սաղմի ոչնչացման ոգու։

Ամենայն Հայոց Հայրապետը վերստին մանրորեն մտահոգված, 1965 թվականի 14 դեկտեմբեր թվակիր իր հատուկ գրությամբ, կոչ արեց Տ. Տ. Խորեն Ա Կաթողիկոսին, որ վերջ տրվեն անօրինականություններին և պառակտումներին։

Ահա փետրվար ամսվա վերջում ենք արդեն, Ամենայն Հայոց Հայրապետը ոչ մի պատասխան չի ստացել ցարդ Անթիլիասի Գահակալից։

Հետևաբար, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը խղճի պարտք է համարում այստեղ հրապարակել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի 14 դեկտեմբեր թվակիր նամակը, ուղղված Տ. Տ. Խորեն Ա Կաթողիկոսին, Գերագույն Հոգևոր Խորհրդի հոկտեմբեր 8 թվակիր նամակը և դեկտեմբեր 7 թվակիր հայտարարությունը՝ որպես կարևոր, պատմական փաստաթղթեր, ի գիտություն և ի լուսաբանություն հայ հանրային կարծիքի։

Երբ բանակցություններով և թղթակցություններով ոչինչ չի կարգավորվում և անցնում են տարիներ, կարծում ենք, թե ճշմարտությունը և իրական կացությունը չպետք է թաքցնել մեր Եկեղեցու և ազգի զավակներից։

Այդպար և անյետաձգելի անհրաժեշտութիւն մը կը նկատենք կեանքի կոչել Երուսաղէմի ողջագուրումի ոգին, աստուածակառոյց Ս. Էջմիածնի վէմին վրայ: Այսպէս է, որ Մենք և Ձերդ Սրբութիւնը պիտի կարողանանք վերականգնել մեր Եկեղեցիէն ներս օրինականութիւնը, միութիւնը և խաղաղ ու շինարար գործակցութիւնը մեր նուիրապետական Աթոռներուն: Այսպէս է, որ կարելի պիտի ըլլայ վերջ տալ ոտնձգութիւններուն և պառակտումներուն, որոնք ի զուր, այո՛ ճշմարտապէս ի զուր տեղը, մեր ժողովուրդը և զմեզ բոլորս կը տառապեցնեն: Այսպէս է, որ կրնան լուծում գտնել Ս. Էջմիածնէն անջատուած թեմերու հարցը և չեղեալ համարուիլ Ձեր նորակազմ կանոնադրութեան 32-րդ և 33-րդ յօդուածները, որոնք ոչինչ լաւ չեն խոստանար մեր Եկեղեցիին և Սփիւռքի մեր հաւատացեալ ժողովուրդին: Ս. Էջմիածնի մէջ գումարուած եպիսկոպոսական վերջին ժողովը և այնուհետև մեր Գերագոյն Հոգևոր Խորհուրդը ծանր մտահոգութիւններով տեղեկացան վերոյիշեալ յօդուածներու մասին, և ցաւով է, որ Մայր Աթոռս ստիպուեցաւ համապատասխանող յայտարարութեամբ մը իր վերաբերմունքը ճշտել և վերստին կոչ ուղղել Ձերդ Սրբութեան և Ձեր Աթոռին պատասխանատու ղեկավար մարմիններուն, ինչպէս և հանրային կարծիքին: Ներփակ կը կցենք Մայր Աթոռիս Գերագոյն Հոգևոր Խորհուրդի 7 դեկտեմբեր 1965 թուակիր յայտարարութիւնը առ ի գիտութիւն:

Ինչքան ալ ճիգ ընենք Մեր լաւատեսութիւնը պահպանելու, այնուամենայնիւ անհնար է չմտահոգուիլ, երբ կը տեսնենք Ձեր Աթոռին գործունէութեան ոգին ու ընթացքը, մանաւանդ Երուսաղէմի ողջագուրումէն յետոյ: Ի՜նչ յոյսեր ու բարի հեռանկարներ ոգևորեցին զՁեզ և զՄեզ պահ մը, և սակայն ի՜նչ կացութիւններ ստեղծուեցան Ս. Էջմիածնի դէմ՝ Մարսիլիոյ մէջ, Ադդիս-Աբեբայի ժողովին, և այժմ ահա Ձեր Աթոռին նոր կանոնադրութեամբ: Հայկական տեսանկիւնէ դիտուած, պարզապէս ապշեցուցիչ են այս բոլորը: Այս հարցերը կը խոովեն Մեզ և պատասխան մը կը փնտռենք: Անցեալ տարի Մենք Ձեզի շարք մը նամակներ գրեցինք բաց սրտով, և ի զուր սպասեցինք իրաւ պատասխանի մը: Ձեր ավերուն, ոչ ոքի սիրտը չշարժեցաւ:

Մի՛ խորհիք, թէ Մեր այս բոլոր տագնապումները և հարցումները հասցէագրուած են միայն անձամբ Ձերդ Ս. Օծութեան: Կը փորձենք հասկնալ, թէ այս տխուր կացութիւններու վերացումը և բարեփոխումը Ձեր «ձեռքը չեն», ինչպէս Դուք յանձնարարած էիք Մեզի հաղորդել, բայց այնուամենայնիւ կը խորհինք, թէ Դուք կարող էք մեծապէս նպաստել այս ողբերգական իրադրութեան ընթացքը փոխելու գործին:

Մարսիլիայով և Ձեր նոր կանոնադրութեան յիշեալ յօդուածներով ստեղծուած կացութիւնը վտանգաւոր է և աղետաբեր: Մեղք է մեր Եկեղեցիին և մեր ժողովուրդին: Հետևաբար անգամ մը ևս կոչ·կ՚ընենք Ձեր քրիստոնէական խղճին և Ձեր հայկական գիտակցութեան, որպէսզի Տանն Կիլիկիոյ Աթոռը վերադառնայ օրինականութեան և ի՛ր իրաւասութեանց սահմաններուն, ու գործէ միասնութեան շինարար ոգիով:

Մեր ուշադրութիւնը գրաւեց Ձեր 12 սեպտեմբեր 1965 թուակիր կոնդակը, ուր Դուք իրաւացիօրէն կը գրէք, թէ «մեր եկեղեցական պատմութեան էջերը լուսաւորուած են բազմերախտ հայրապետներու հաստատած կանոններով, սահմանուած օրէնքներով և բանաձևուած սկզբունքներով», և թէ այդ «օրէնքի և կարգ-կանոնի բծախնդիր ու արդար գործադրութեամբ, միշտ չքացած են անկարգութիւնները ու կամայականութիւնները», և թէ, «ուր օրէնքը կը բացակայի, հոն կը յառաջանան անիշխանութիւն և քաոս, և կը խափանուի ընկերութեան բարօրութիւնը ու զարգացումը»:

Արդ, ինչքա՜ն արդար ու ազգաշէն պիտի ըլլայ, եթէ այս սկզբունքները ինքը Անթիլիասի Աթոռը յարգէր և կեանքի կոչէր, իր մտածելակերպին ու իր գործունէութեան մէջ: Մենք այդ է, որ կ՚ըղձանք ու կ՚ակնկալենք Ձեզմէ, որպէսզի հայ Սփիւռքի եկեղեցական-ազգային կեանքին մէջ, «օրէնքի և կարգ-կանոնի բծախնդիր ու արդար գործադրութեամբ», չքանան «անկարգութիւնները» ու չյառաջանան «անիշխանութիւն և քաոս»:

Այժմ և միշտ Մենք պիտի մնանք աղօթող, որ կեանքի կոչուի Մեր այս արդար սպասումը և իղձը: Կը հաւատանք, թէ ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի, մեր Եկեղեցւոյ բոլոր հոգևոր սպասաւորները և համայն մեր հաւատացեալ ժողովուրդը, ուղիղ կը հասկնան Մեզ և իրենց հայեացքը միշտ սևեռած կը պահեն դէպի Ս. Էջմիածին, իբրև մխիթարութեան և փրկութեան խորան:

Այս խոհերով և այս առաջադրանքներով, կը սպասենք Ձեր շուտափոյթ պատասխանին:

Եղբայրական սիրով ողջունիւ՝

Վազգէն Ա.

14 դեկտեմբեր 1965
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԵՒՍԵԲԱԳՈՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԱՄԱԿԸ ՄԱՐՍԵԼ, Հ. ՊԱՊԻԿՅԱՆԻՆ ԵՎ Կ. ՃԱՆԻԿՅԱՆԻՆ

Հաստատում ենք Ձեր 8 և 13 հուլիս 1965 թվակիր գրությունները, ինչպես և Տիարք Գ. Պաղտասարյանի և Վ. Տեր-Վարդանյանի 13 հուլիս 1965 թվակիր գրությունը, բոլորը ուղղյալ Ամենայն Հայոց Հայրապետին: Այսու Ձեզ ի գիտություն հայտնում ենք, թե Վեհափառ Հայրապետի նախագահության ներքո գումարված Մայր Աթոռիս Գերագույն Հոգևոր Խորհուրդը, իր 9 սեպտեմբերի 1965-ի նիստում քննարկելով Մարսելի կրոնական հայ համայնքից ներս ստեղծված կացությունը վերջին երկու տարիների ընթացքում, հաստատեց ու արձանագրեց թե՝

Ա. Ձեր նախաձեռնությամբ ու գլխավորությամբ կատարված դիմումը Անթիլիասի Աթոռին, և այդ դիմումին իբրև հետևանք, Անթիլիասի Գահակալի կողմից Տ. Արտավազդ եպիսկոպոս Թրթոյանի նշանակումը իբրև «առաջնորդ Մարսիլիո հայոց» և այս վերջինիս ժամանումը և գործունեությունը Մարսելում, սկսյալ 1964 թվականի փետրվար ամսից մինչև այժմ, առանց գիտության և համաձայնության Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մեր եկեղեցական կանոններին հիմնովին հակասող պարագաներ են և բացահայտ խախտում Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռների իրավասությանց սահմանների, հանգամանք, որ Մայր Աթոռս ճշտեց ու հայտարարեց 1964 թվականի մարտի 9-ին և կոչ արեց Անթիլիասի Աթոռին, որպեսզի այդ ապօրինի ու վտանգավոր որոշումը հետս կոչվի և Թրթոյան եպիսկոպոսը անհապաղ մեկնի Մարսելից, ուր իր ներկայությունը ոչ միայն հակաօրինական էր, այլև հայ համայնքը պառակտելու բնույթ էր կրում:

Բ. Իրոք, իբրև անմիջական հետևանք Անթիլիասի Աթոռի սույն նոր ոտնձգության, տեղի հայ համայնքի կյանքը կորցրեց իր ներքին խաղաղությունն ու պառակտվեց: Ապօրինի ձեռնարկին դեմ Մայր Աթոռս ստացավ, իր ժամանակին, բողոքը Մարսիլիայի եկեղեցական պաշտոնական մարմինների, տեղի զանազան հայկական կազմակերպությունների և ծանոթ հանրային գործիչ ազգայինների:

Այսօր էլ, Մարսելի հայ հավատացյալ ժողովրդի մեծամասնությունը, իր գլխավոր եկեղեցիներով ու վարչություններով, հավատարիմ է մնում մեր Եկեղեցու հիմնական կանոններին և նվիրապետական իրավասություններին: Բացատի, վերջին ընտրությունները չեն կատարված Մարսելի թեմական կանոնագրի տրամադրությանց համաձայն, որի հետևանքով այդ ընտրության չեն մասնակցել Հարավային Ֆրանսիայի մի շարք եկեղեցիները և ժողովրդի զանգվածը:

Գ. Ամենայն Հայոց Հայրապետի բազմաթիվ կոչերը, ի խնդիր օրինականության, միասնության և Երուսաղեմի ողջագուրման ոգու պահպանման, ուղղյալ գրավոր և բանավոր կերպով Անթիլիասի Գահակալին, վերջին երկու տարիների ընթացքին, մնացին անարձագանք, հակառակ Երուսաղեմում երկկիցս նրա տված հավաստիացումներին, թե Թրթռյան եպիսկոպոսը պիտի չուղարկվի Մարսելի էջմիածնական թեմը:

Դ. Ամենայն Հայոց Հայրապետին ուղղյալ 2 հունվար 1964 թվակիր և 12 մայիս 1964 և 2 մարտ թվակիր Տ. Թրթռյան եպիսկոպոսի (այդ օրերին վարդապետ) նամակները, Մարսելի և Վատիկանի մեջ իր հակաէջմիածնական հրապարակային հայտարարությունները, ինչպես նաև 1965 թվականի փետրվարի 5-ին Փարիզում, Ամենայն Հայոց Հայրապետի մոտ ունկնդրության առթիվ նրա ցուցաբերած ոչ վայելուչ վերաբերմունքը, հստակ գաղափար են տալիս նրա անհավասարակշիռ նկարագրի և անլուրջ ըմբռնումների ու գործելակերպի նկատմամբ, որով նա դույզն չափով իսկ հույս չի ներշնչում, թե կարող է լինել օրինապահ, հավատարիմ ու բանիմաց հոգևոր սպասավորը հավատացյալ ժողովրդի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Հաստատելով ու արձանագրելով այս բոլոր տխուր իրողությունները, Վեհափառ Հայրապետը և Գերագույն Հոգևոր Խորհուրդս չեն կարող նկատի առնել ձեր 1965 թվականի հուլիս 13-ի դիմումները: Հետևաբար, հանուն Ամենայն Հայոց Հայրապետի և Գերագույն Հոգևոր Խորհրդի, մի անգամ ևս կոչ ենք անում Ձեզ, որ հետ կանգնեք Հայ Եկեղեցու կանոնների և ժողովրդի միասնության ու կենսական շահերի դեմ գործելու ճանապարհից ու հրավիրեք Արտավազդ եպիսկոպոս Թրթռյանին, որ մեկնի Հարավային Ֆրանսիայի էջմիածնական թեմից, որպեսզի բորբոքված մտքերը խաղաղվեն ու Մարսելի շրջանի մեր հավատացյալ ժողովրդի ծոցում վերահաստատվեն օրինական, համերաշխ ու արդյունավետ հոգևոր գործունեության պայմանները, Ս. Էջմիածնի աստվածային օրհնության ներքո:

Հղում ենք Ձեզ օրհնություն Ամենայն Հայոց Մայր Աթոռ հավերժական Ս. Էջմիածնից:

Ի դիմաց Գերագույն Հոգևոր Խորհրդի՝

ԿՈՄԻՏԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ ՀՈՒՍԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՆԹՈՒՐՅԱՆ

11 դեկտեմբերի 1965 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ, Հայ Եկեղեցու եպիսկոպոսական ժողովը, գումարված Ս. Էջմիածնում այս տարի նոյեմբերի 2-ին, վշտով տեղեկացավ և իր վրդովմունքը արձանագրեց Անթիլիասի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռի նոր կանոնադրության 32-րդ և 33-րդ հոդվածների համար, որոնք հանդիսանում են ծանրակշիռ խախտում Հայ Եկեղեցու նվիրապետական կարգի և իրավասության սահմանների, բացահայտ կերպով հակադրվում Հայ Եկեղեցու միության նվիրապետական Աթոռների միջև, համերաշխ գործակցության սկզբունքի, ինչպես և ամբողջական ժխտում Երուսաղեմի 1963-ի ողջագուրման ոգու։

Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո, Գերագույն Հոգևոր Խորհուրդը, իր նոյեմբեր 18-ի նիստում, խորունկ տխրությամբ հաստատեց և դատապարտեց վերոհիշյալ ողբալի իրողությունը, որը Սփյուռքի հայ եկեղեցական-ազգային կյանքի մեջ ծնունդ է տալու աղետալի նոր տագնապների ու պառակտումների։

Հանուն մեր Ս. Եկեղեցու և ժողովրդի գերագույն իղձերի ու շահերի, մի անգամ ևս կոչ ենք անում Տանն Կիլիկիո շնորհազարդ Գահակալին և Անթիլիա-

սի պատասխանատու մարմիններին, հետ կանգնելու այս անօրինական, եկեղեցաբանդ ու ազգավնաս ընթացքից, չեղյալ համարել վերոհիշյալ հոդվածները և ուղղամտորեն գործել Երուսաղեմի ողջագուրման ոգով, որ միակ ուղին է եկեղեցական կյանքի ամրապնդման ու ծաղկման, եղբայրական սիրո և խաղաղության մեջ։

Ջերմապես կոչ ենք անում նաև Հայ Եկեղեցու բոլոր սպասավորներին անխտիր, բոլոր հայ կազմակերպություններին, հայ մամուլին և համայն հավատացյալ մեր ժողովուրդին՝ թույլ չտալու, որ անօրինական արարքներ, ոտնձգություններ ու պառակտումներ տարածվեն Սփյուռքի հայ եկեղեցական կյանքի մեջ և արթուն կերպով հսկելու, որպեսզի պաշտպանվեն մեր Եկեղեցու նվիրապետության դարավոր կարգն ու կանոնը, ներքին միությունը և հայ հավատացյալ ժողովրդի միասնությունը։

7 դեկտեմբերի 1965 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

***

Ի գիտություն և ի լուսաբանություն «Էջմիածին» ամսագրի ընթերցողների, արտատպում ենք Գերագույն Հոգևոր Խորհրդի հայտարարության մեջ հիշված՝ Անթիլիասի Կաթողիկոսական Աթոռի 1965 թվականի նոր կանոնադրության 32-րդ և 33-րդ հոդվածները (տե՛ս «Հասկ», 1965 թ., № 8—9, օգոստոս—սեպտեմբեր, էջ 378)։

«ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԹԵՄԵՐ

Հոդված 32.— Կիլիկիո Կաթողիկոսության առաջնորդական թեմերը հետևյալներն են.—

1. Բերիո թեմ.
2. Դամասկոսի թեմ.
3. Լիբանանի թեմ.
4. Կիպրոսի թեմ.
5. Հյուսիսային Ամերիկայի թեմ.
6. Հունաստանի թեմ.
7. Թեհրանի թեմ.
8. Ատրպատականի թեմ.
9. Իրանա-Հնդկաստանի թեմ։

Հոդված 33.— Այլ թեմեր ևս կրնան կազմվիլ կամ միանալ Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռին, իրենց ազգային-եկեղեցական պատասխանատու մարմիններու գրավոր դիմումին վրա, ուղղված Մեծի Տանն Կիլիկիո Վեհափառ Կաթողիկոսին։ Ազգային կեդրոնական վարչության խառն ժողովը, ընդունելի եթե կատարված դիմումը, կհաղորդե թեմին։ Դիմումնագիրը կներկայացվի Ազգային ընդհանուր ժողովին առ ի հաստատումն, որմե ետք, Վեհափառ Կաթողիկոսը, կոնդակով մը կհռչակե զայն Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության թեմ։





ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒ ԼՈՒՍԱՎՈՐԻՉՆԵՐԸ

(Քարոզ խոսված 1965 թ. դեկտեմբերի 5-ին, Մայր Տաճարում, Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս առաքյալների տոնի առթիվ)

«Ձիր մշակ անպարտելի կայուղիկէ եկեղեցոյ, և պսակ պարծանաց ճատառացեալոց»։

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, երախտագիտությամբ և մեծ կարևորությամբ, տոնախմբում է հիշատակը իր հիմնադիր առաքյալների։

Կան դեպքեր և դեմքեր մեր ազգային-եկեղեցական կյանքում, որոնք մնայուն արժեք են ներկայացնում և միշտ պայծառ են մնում ժողովրդի սրտում։

Այդպիսի դեմքերը այսրոպայնէ ընտրեալներ են, ժողովրդի, Եկեղեցու կյանքում «կոչվածները», որոնք կյանքի որևէ մեկ վիճակից Աստուծո կողմից կանչվում են դեպի գործի ասպարեզ։

Ահա այսպիսի կոչում ունեցող մարդիկ էին մեր առաջին երկու առաքյալները։ Երևակայեցեք Գալիլիայի ծովակը և բարի ու համեստ ձկնորսները, որոնք կանչվել էին Աստուծո թագավորության դեսպանության երկրի վրա, ժողովուրդների մեջ։

Ս. Թադեոսը և Ս. Բարթողիմեոսը Քրիստոսի աշակերտներից են։ Քրիստոս եկավ նրանց մոտ, նայեց նրանց աչքերի խորքը, տեսավ նրանց սրտերի մաքրությունը և հոգու բարի եռանդը, «կոչեց» նրանց իր գործի առաքելության։

Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս երեք տարի սովորեցին Վարդապետի մոտ, մերթ լեռների բարձունքներում, մերթ ժայռերի ծերպերում, մերթ ծաղկալից մարգագետիններում, հաճախ Գալիլիայի ծովակի եզերին կամ նրա կապուտակ ջրերի վրա և նույնիսկ Գեթսեմանիի պարտեզում։ Հարությունից հետո Քրիստոս իր սիրելի աշակերտներին պատվիրեց նրանց սպասել Երուսաղեմում՝ Մխիթարի։ Ս. Հոգու այցելության։

Իջավ սպասված Ս. Հոգին, տվեց առաքյալներին առատապես աստվածային շնորհներ, զարդարեց նրանց երկնային լույսով, արբեցրեց, լցրեց նրանց իմաստությամբ և բոցավառ սուրբ զգացումներով։

Եվ առաքյալները գնացին աշխարհով մեկ քարոզելու Տիրոջ խոսքը։

Մեր երկիրն ու մեր ժողովուրդն էլ լուսավորվեցին մեծ ավետիսով, աստվածային շնորհը մեր վրա ևս ծաթեց։ Երկու առաքյալներ եկան Հայաստան աշխարհ։

Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս Հայաստանում «զխաւար կռապաշտութեանն վանեցին և զլոյս գիտութեան լընդհանուր յերկրի [Հայոց] ծաւալեցին» (շարական)։

Ս. Թադեոսը Ավետարանում կոչվում է Ղեբեոս և կամ Հուդա Հակոբյան։ Նրա քարոզության դաշտը հանդիսացավ նախ Ասորիքը, Եդեսիան Աբգար Թագավորի օրոք, և ապա բուն Հայաստան, ուր ծավալվեց առաքելական բեղուն և արդյունավետ գործունեություն։

Ս. Բարթողիմեոսը Հովհաննու Ավետարանում հիշված Բարի Նաթանայելն է, որի մասին Հիսուս վկայեց. «Ահա այր, յորում ոչ գոյ նենգութիւն։ Նաթանայելի թափանցող միտքը Քրիստոսի անձի մեջ տեսավ ու վկայեց «Որդին Աստուծոյ» և Մեսիային, որին սպասում էր Հրեա ժողովուրդը։ Արդարև, Նաթանայել առաջինը եղավ, որ Քրիստոսին դավանեց «Որդի Աստուծոյ» և դրա համար էլ կոչվեց «նախադավանն»։

Ս. Բարթողիմեոսի քարոզության դաշտը հանդիսացան Հնդկաց և Պարթևաց աշխարհները և հուսկ ապա Հայաստանը, որտեղ նա մուտք գործեց Ատրպատականի վրայով և Արտաշատի բլրի վրա հանդիպում ունեցան մեր երկու առաջին լուսավորիչներ Ս. Թադեոսն ու Ս. Բարթողիմեոսը։ Ս. Թադեոսի առաքելությունն ու քարոզությունը ընթացավ Արտազ գավառում, ուր նրա անվան կա Ս. Թադեի վանքը, ապա Ս. Բարթողիմեոսինը՝ Հեր, Զարևանդ և Անձևացյաց աշխարհներում և Աղբակում, ուր գտնվում է մեծ առաքյալի անվան նշանավոր վանքը։

Երկու առաքյալները տարիներ շարունակ քարոզեցին ու բժշկեցին, մխիթարեցին և կարողացան շահել հետևորդներ, նոր կրոնի զավակներ։ Նրանց կյանքը հեշտ չեղավ Հայոց աշխարհում. նրանք մեծ զոհողություններ հանձն առին, անարգվեցին, ծեծվեցին, հալածվեցին, բայց երբեք լտկարացան։

Հայոց Սանատրուկ Թագավորի դուստրը՝ Սանդուխտ, քրիստոնյա դարձավ։ Սանատրուկ ամեն ճիգ թափեց նրան ետ կանգնեցնելու նոր վարդապետության հարելուց, բայց անհնար եղավ։ Կատաղած թագավորը նահատակել տվեց իր դստեր. Սանդուխտ կույսը արժանացավ նահատակության պսակին։ Շատ շատեր մարտիրոսացան նոր կյանքի համար և նրանց արյան վրա թափվեցին նաև սրբազան առաքյալների արյունները, որպեսզի նրանց արյամբ Հայաստանյայց Եկեղեցու շաղախը պատրաստվի, լինելու համար ամուր, անսասան, դիմանալու համար դարերի ու ալեկոծությանց։ «Արիւն մարտիրոսաց՝ սերմն Եկեղեցւոյ»։

Քրիստոնեությունը ծածուկ կերպով քարոզվել ու տարածվել էր, որպես նոր կրոն Հայաստան աշխարհում։ Ամեն տեսակի հալածանքներ և տառապանքներ եղան ու մնացին «ձայն բարբառոյ յանապատի»։ Քրիստոնեության լույսը սկսել էր ջերմացնել սրտերն ու մտքերը և մարդասիրության, արդարության ու հավասարության գաղափարախոսությունը նոր կյանք դարձել, որը հաճելի էր ու պաշտելի՝ խոնարհ զանգվածների համար։

Առաքելական հաջորդությունը հաստատվել էր Հայոց աշխարհում։ Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս առաքյալներից հետո, նրանց աշակերտները շարունակեցին քարոզչության գործը ծածկապես։ Հայ Եկեղեցու պատմությունը տալիս է մեզ մի շարք եպիսկոպոսների անուններ, որոնք Հայաստանյայց Եկեղեցու հայրապետներն են եղել։ Եվսեբիոս Կեսարացի եկեղեցական պատմիչն ևս իր աշխատության մեջ հիշում է Մեհրուժան հայոց հայրապետի անունը, որ Գ դարի վաթսունական թվականներին Աղեքսանդրիայում եղել է հայտնի և ծանոթ դեմք, և որին Աղեքսանդրիայի Դիոնիսիոս հայրապետը գրել է մի նամակ ապաշխարության հարցի շուրջ։ Հայաստանում, առաքելական քարոզությունից հետո, քրիստոնեությունը շարունակվել է, ապրել ու գործել որպես կենդանի կրոն։ Ահա՛ ժիր մշակների գործը մեր Եկեղեցու հիմնական գործում։

Հայերը, քրիստոնեությունից առաջ, անկրոն ժողովուրդ չեն եղել։ Նրանք պաշտել են աստվածների արձաններ, կուռքեր, նրանց մատուցել են զոհեր, ունեցել են հատուկ տոնական օրեր, արարողություններ, կատարել են ուխտագնացություններ դեպի հեթանոսական մեհյաններն ու սրբատեղիները։

Քրիստոնեությունը սակայն միաստվածության կրոն էր, ճշմարտության և սիրո կրոն, որը մարդուն բարձրացնում էր բարոյական կատարելության, թռիչք էր տալիս մարդկային մտքին և հավիտենական կյանքի հույս էր ներշնչում։

Քրիստոնեությունը վերափոխեց մեր ժողովրդի հոգեբանությունը, ազնվացրեց նրա նկարագիրը, բացավ նրա հոգին լույսին և ստեղծագործ, ճշմարիտ կյանքին, մի համեստ վարդապետի ձեռքով մեզ տվեց գիր ու գրականություն, տվեց մեզ մեծ մշակույթ՝ բանաստեղծություն, նկարչություն և երաժշտություն, և իր համամարդկային գաղափարներով, հայ ժողովրդին դարձրեց տեսիլքի և խոյանքի առաջադեմ ժողովուրդ։

Քրիստոնեությունը հայացավ այս սուրբ հողի վրա։

Ահա հավիտենական Ս. էջմիածինը, Հայրապետական Գահը մեր առաքելահիմն Ս. Եկեղեցու, իր Գահակալով։ Այսօր էլ մեզ հետ են մեր սրբազան առաքյալները, որոնք

հսկում են այս Գահի վրա և այս Գահի Գահակալի միջոցով առաջնորդում են մեզ։ Նրանք որպես մեծագույն ավանդ թողին մեզ Ս. Էջմիածնի ամենայն հայոց Հայրապետական Մայր Աթոռը։

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին իզուր չէ, որ իր Տոնացույցում տեղ է տվել սրբազան առաքյալների հիշատակի տոնախմբության։ Այս օրը մեզ համար վերանորոգման օր է, քսան դարերի պատմություն ունեցող մեր Եկեղեցու հիմնադրման տոնը, որը կատարում ենք ուրախությամբ ամեն տեղ, «մինչև յանկիւնս սեղանոյ»։

Ո՞վ աստվածային հրաշք, արդյոք այսօր մեզ հետ չե՞ն, այս կամարների տակ, մեր երանելի և սուրբ առաքյալների հոգիները, Հայաստանյայց Եկեղեցու սյուները, հայ ժողովրդի առաջին լուսավորիչները՝ Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս առաքյալները։

Թո՛ղ պայծառ մնա մեր լուսավորիչների՝ սուրբ հավատը։ Թո՛ղ պայծառ մնա նրանց հիմնած Ս. Եկեղեցին։ Թո՛ղ այցելեն մեզ և մարտակից լինեն մեր լուսավորիչ հայրերը, մեր դժվարությանց և ուրախությանց օրերին, և Թո՛ղ Աստուծո օրհնությունը անպակաս լինի մեր բոլորի վրայից։

Ամե՛ն։

ՆԵՐՍԵՍ Ե. ՎՐԴ. ՊՈՂԱՊԱՆՅԱՆ



ՎԱՏԻԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԺՈՂՈՎԻ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Վատիկանի երկրորդ ժողովի վերջին՝ չորրորդ նստաշրջանի աշխատանքները սկսվեցին 1965 թվականի սեպտեմբերի 13-ին և ավարտվեցին դեկտեմբերի 8-ին։

Ժողովը բացվեց Ս. Պետրոս Մայր Տաճարում, Նորին Սրբություն Պավղոս Զ Սրբազան Քահանայապետի հանդիսավոր պատարագով և քարոզով։

Այս նստաշրջանում քննարկվեցին հետևյալ հարցերը.

1. Հայտարարություն կրոնական ազատության մասին.

2. Եկեղեցին ժամանակակից աշխարհում.

3. Եկեղեցու միսիոներական գործունեությունը.

4. Քահանաների կյանքը և քահանայագործությունը։

Կրոնական ազատության հարցի քննարկման ժամանակ ի հայտ եկան տարբեր ուղղություններ։

Ժողովը պահանջեց կրոնական գործունեության, դաստիարակության և պաշտամունքի լիակատար ազատություն բոլոր երկրներում և բոլոր ժողովուրդների համար։ Ժողովը գտավ, որ մարդկային արժանապատվությունն ու վեհությունը լիիրավ կերպով կարելի է իրականացնել միայն կրոնական լիակատար ազատության պայմաններում։

***

Ժողովի գլխավոր հարցերից մեկը հանդիսացավ «Եկեղեցին ժամանակակից աշխարհում» թեման։ Այդ հարցը ընդգրկում էր ժամանակակից կյանքի այժմեական բոլոր խնդիրները՝ խաղաղության պաշտպանություն, պատերազմի դատապարտում, էկումենիզմ, աշխատավորության պաշտպանություն, քաղցի վերացում, օգնություն չքավորներին, մշակույթի ազնվացում, ընտանիքի ամրապնդում, ցեղային խտրականության վերացում, ազգային ինքնուրույնության իրավունք և ժամանակակից այլ կարևոր, հրատապ հարցեր։

Վատիկանյան ժողովը համապատասխան որոշումներ ընդունեց բոլոր հարցերի նկատմամբ։ Այսպես.

Քրիստոնեական ընտանիքը պետք է լինի սուրբ և անխախտ, խարսխվի զոր Աստուած ղուգեաց, մարդ մի՝ մեկնեսցէ» ավետարանական սկզբունքի վրա։ Վիժումը համարվում է մարդասպանություն, քանի որ ամարդու ճակատագիրը պետք է տնօրինի կյանքի ստեղծողը, Ինքը Աստվածա։ Պետք է արգելել ինչպես արհեստական ամլությունը, այնպես էլ արհեստական բեղմնավորումը։ Զավակ չունենալու դեպքում պետք է որդեգրել որբ երեխաների։ Առաջարկվում է նյութական օժանդակություն կատարել չքավոր ընտանիքների համար։ Ամուսնալուծությունը արգելվում է։

Առաջարկվում է վեր հանել քրիստոնեական մշակույթի պատմական նշանակությունն ու արժեքը և դաստիարակչական ներգործությունը մարդկանց նկատմամբ, զարկ տալ կրոնական մշակույթի զարգացմանը։

Վիճակագրական տվյալներով պարզվել է, որ մարդկության զգալի մասը տառապում է չքավորության մեջ։ Անհրաժեշտ է համարվում նյութական օժանդակություն ցույց տալ սովյալ շրջաններին, գիտատեխնիկական և մասնագիտական օգնություն կազմակերպել հետամնաց երկրների համար։ Բարիքները հավասարապես բաշխել մարդկային հասա-

ռակության բոլոր անդամների միջև։ Անհրաժեշտ է բարելավել աշխատավորների և գյուղացիների կենսապայմանները, քաջալերել բարեսիրական կազմակերպությունների գործունեությունը։ Պահանջվում է սպառազինության համար նախատեսված գումարները հատկացնել չքավորներին։

Ժողովը վճռական կերպով պաշտպանեց խաղաղությունը և դատապարտեց պատերազմի բոլոր տեսակները, մասնավորաբար միջուկային պատերազմը։ Պաշտպանեց ազգային ինքնուրույնությունն ու ցեղերի հավասարությունը, դատապարտեց գաղութակալությունը, ցեղային և ազգային խտրականությունն ու ցեղասպանությունը։

Վատիկանյան երկրորդ ժողովի արդյունքները նոր ծավալ և ուժ տվին էկումենիզմին, քանի որ Կաթոլիկ եկեղեցին իր հնարավորություններն ու ազդեցությունը ի սպաս դրեց էկումենիկ շարժման հետագա զարգացմանը։ Այս նստաշրջանում, փոխանակ առաջ քաշելու «կաթոլիկ էկումենիզմ»-ի կոչը, որոշվեց զարկ տալ ընդհանուր էկումենիկ շարժման տարածմանը։

Վատիկանի երկրորդը ժողովը եղբայրական համագործակցության ձեռք է մեկնում բոլոր եկեղեցիներին և կրոնական համայնքներին, սիրալիրության կոչ է ուղղում ոչ քրիստոնյա դավանություններին։

***

«Եկեղեցու միսիոներական գործունեության» հարցը նույնպես դաշիս է նախորդ նստաշրջանից։ Նոր նախագծով, առավել ուշադրություն է դարձվում միսիոներական գործունեության։

Ժողովում շեշտվեցին միսիոներների անելիքները՝ խիզախորեն քարոզել Ավետարանի ճշմարտությունը և տարածել քրիստոնեական սերը։ Միսիոներներին խորհուրդ է տրվում գործուն մասնակցություն ցույց տալ իրենց գտնված երկրի տնտեսական, մշակութային և սոցիալական կյանքին։ Միսիոներական գործի մեջ լայն կերպով ներգրավել աշխարհականներին։ Պետք է ներշնչվել էկումենիզմի ոգով։

***

«Քահանայական կյանքի և գործունեության» հարցը քննարկելիս, ոչ առանց որոշակի դժգոհության, քահանայական շրջաններում խոսվում էր այն մասին, որ «Վատիկան Ա-ը հանդիսացավ Պապի ժողովը, իսկ «Վատիկան Բ-ը՝ եպիսկոպոսների ժողովը։ Քահանաների գործունեության թերագնահատումը, դեռ անցյալ նստաշրջանից, զգալի դժգոհություն էր առաջ բերել ժողովականների մեծ մասի մոտ։ Այս տարի, նկատելի ջանք գործադրվեց՝ վերականգնելու քահանայության դերը և կոչումը եկեղեցում։

Ժողովը քահանաներին առաջարկում է «դուրս գալ եկեղեցուց և ավանդատներից» և շփման, դիալոգի մեջ մտնել «դրսեցիների» հետ, ուղիներ որոնել՝ աշխարհականների հետ համագործակցելու համար, պատրաստվել գործնական քարոզչության համար, հանդիսանալ «մասնագետ սոցիոլոգներ», ի պահանջել հարկին աշխատել որպես բանվոր, քարտուղար կամ այլ պաշտոնով, «մտնել աշխարհ և խառնվիլ կյանքին»։

Քահանաները համարվում են եկեղեցու հիմնական սպասավորները, քրիստոնեության «գործուն» տարածողները։

***

Վատիկանի երկրորդ ժողովի չորրորդ նստաշրջանի ընթացքում քննվող բոլոր հարցերը ենթարկվեցին քննարկման, բանաձևեցին հրապարակային նիստում Պապի՝ հաթոռոռ արձակված հրամաններով և դարձան կաթոլիկ եկեղեցու օրենքներ։

Այս նստաշրջանում քվեարկվեցին հետևյալ հարցերը. «Եպիսկոպոսների հովվական գործունեությունը», «Կրոնավորների պատրաստությունը», «Հոգևոր ճեմարանները», «Քրիստոնեական դաստիարակությունը», «Եկեղեցու փոխհարաբերությունները ոչ-քրիստոնյա կրոնների հետ», «Աստվածային հայտնություն», «Կրոնական ազատության հայտարարությունը», «Աշխարհականների առաքելությունը», «Եկեղեցին ժամանակակից աշխարհում», «Քահանաների կյանքն ու գործունեությունը» և «Եկեղեցու միսիոներական գործունեությունը»։

***

Ժողովի պաշտոնական փակումը կատարվեց դեկտեմբերի 8-ին, Ս. Պետրոսի բացօթյա հրապարակում։ Ներկա էր շուրջ կես միլիոն մարդ, մասնակցում էին 90 երկրների պաշտոնական ներկայացուցչություններ։ Պատարագեց և քարոզեց Պապը։ Հավարտ սուրբ պատարագի, պատգամներ ուղղվեցին կառավարություններին, մտավորականներին ու գիտնականներին, արվեստագետներին, աշխատավորներին, կանանց, հաշմանդամներին ու հիվանդներին և երիտասարդությանը։ Կոչ էր արվում բոլորին՝ համագործակցել եկեղեցու հետ՝ կենսագործելու համար ժողովի որոշումները։

* * *

Վատիկանի երկրորդ ժողովի աշխատանքը տևեց չորս տարի, սկսած 1963 թվականից։

Ժողովին մասնակցում էին բազմաթիվ եկեղեցիներ և կրոնական համայնքներ և ավելի քան 100 հյուրեր և դիտորդներ։ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից մասնակցում էին Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի առաջնորդ գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյանը, Միլանոյի հայ գաղութի հոգևոր հովիվ գերաշնորհ Տ. Զգոն եպիսկոպոս Տեր-Հակոբյանը և Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Գրիգոր Բեքմեզյանը։

Մայր Աթոռի դիտորդներն այցելեցին Իտալիայի հայկական գաղութի ուսումնական հաստատությունները, մշակութային կազմակերպությունները, եղան Հռոմի Լեոնյան և Մխիթարյան վարժարաններում, Միլանոյի Հայ տանը, Վենետիկի Մուրատ-Ռաֆայելյան վարժարանում և Ս. Ղազար կղզում, ամենուրեք տանելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները։

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊՅԱՆ

ԵԿԵՔ ԲՈԼՈՐԴ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈՎԱՆԻԻՆ ՏԱԿ

Եկեք բոլորդ էջմիածնի հովանիին տակ.
Եփրատի համբաներով ըլլա թե Տիգրիսի խորխորատներով.
Եկեք, ինչպես գետերը կերթան ծովու և օվկիանոսի ուղիներով.
Եվ ինչպես վերաբլույսները կդիմեն այգաբացներու ջահին.
Բոլոր մահերուն վերև ան է լոկ ճաղթանակողը,—
Խավարին մեջ փայլատակող Լուսավորչի սի՛րտը,—
Եկեք, ապրիլ ամսուն, որ մեռնիլ ամիսն եղավ ձեզի համար.
Հոն, ուր կյանքը անխոցելի է, հույսը՝ գերադրական,
Ուր Ամենակալին լույսերուն մեջ կանգնած ոտքի.
Ձեզի՞ կսպասե Ամենայն Հայոց Հայրապետը.—
Եկեք բոլորդ էջմիածնի հովանիին տակ:

Բոլոր դոները բաց են և ճանապարհները ծաղկազարդված.
Բոլոր բարձունքներուն վրա արեգակը սփռած իր պատմուճանը.
Մոռցած մանվան սեր և հողին սնագույնը,
Եկեք, ինչպես կուգան արշալույսին զավակները.
Բոլորիդ առջևն ա՛յն, որ չընկրկեցավ երբեք.
Որ անսասանելին է, անդիմադրելին,
Որուն գինվորները արքո՞ւն են իրենց դիրքերուն վրա,—
Հավա՛տքը.— որուն մեջ կձայնե մեր նախնյաց ոգին,
Որուն մեջ ի՛նքն է, Խոր Վիրապի սուրբը,—
Եկեք բոլորդ էջմիածնի հովանիին տակ:

Հարուցյալներուդ արևելյան բանակը,
Անիրավվածներուդ այդ տեղաշարժը, արյունի գետերեն ասդի՞ն,
Ձեր կոնակը ծգեցեք ինչ որ մահինն է. անէության,
Անա հայրենի հողը, փառը, այլ լեռներով երկնահասակ.
Անա՛ գետերուն դառաշը, հզորագույն հողմերուն տակ,
Ու անա՛ վերածնունդի իշխանները քաղաքե քաղաք,
Ի՞նչ պայծառ է Արտագածի դեմքը և Մասիսն ի՞նչպես ձեռքի տակ...
Բարձունքներուն վրա չե՞ք տեսներ Հույսին դրոշակակիրները...
Ու փողերը, որ կսարսե՞ն երկնի մետաղը, օ՜...
Եկեք բոլորդ էջմիածնի հովանիին տակ:

Ու ճիմա բոլորված Մայր Տաճարին շուրջ,
Խռնված իր գմբեթին տակ,— արևելյան բանակայիննե՞ր դ,—
Ունկնդրեցեք գովաբանության աղոթքին, դոր Ամենայն Հայոց Հայրապետը
Կարարացնե առ Ամենակալը,— ովսաննա՜ ի բարձունս.
Ազգ մը տառապել անմահ է, որքան հետն է իր մեռելներուն.
Որքան հզոր՝ հավատքի իր ուխտավորները.
Ու ձեր հավատքը չտատամսեցավ նույնիսկ փոքորիկին մեջ.
Որուն ջահերը տապվե՛լ հրահրեցան հողմերու ծոցին,
Բոլոր անոնք, որ դեռ կհամենան Եփրատի ուղիներով. ծա՛յն տվեք.
Թող աճապարե՛ն գիշերը շիջած, շծլած աստղերը,—
Եկեք բոլորդ էջմիածնի հովանիին տակ:

———•———

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՆՈՐԱՅՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԾՈՎԱԿԱՆ

«ԹՈՒՂԹԱՌ ՅԻԶՏԻԲՈՒԶՏ»

Սեբաստիո Ս. Նշան վանուց հայերեն ձեռագրաց ցուցակին մէջ, զոր կազմած է Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակեան, և որ լոյս տեսաւ Վիեննա, 1961-ին, թիվ 156 ձեռագրին առնչութեամբ կա ծանոթություն մը Հ. Ն. Ակինեանէ, ուր կըսվի. «Այս հատվածը, որ հայի Ս. Յիզտիբուզտի վկայաբանության և Պետրոս Սյունյաց եպիսկոպոսի, այլուստ անծանոթ է. այս պատճառավ ցանկալի է հրատարակել զայն, եթե տակավին պահված է ձեռագիրս ի թիվս այն ձեռագիրներու, որոնք հասած են Երուսաղեմ» (էջ 107)։

Վերոհիշյալ ձեռագիրը, որ արժեքավոր ժողովածու մըն է, կգտնվի այժմ Ս. Հակոբյանց ձեռագրատան մեջ, 3325 թիվին ներքև։ Ակնարկված գրությունը կտեսնվի 442—443 էջերուն վրա։ Ստորև կներկայացնենք հազվագյուտ այս գրվածքը, որ պատվական նշխար մըն է Զ դարու հայտնի մատենագիր՝ Սյունյաց Պետրոս եպիսկոպոսին գրչեն։

***

Պետրոսի Սունեաց եպիսկոպոսի առ Սուրբն Յիզտիբուզտի յոբժամ ի նանդի էր ի Դվին:

Անհետազօտ ելեալ ծովու նաւատի, ի խորոց ի վեր բերեալ մարգարիտ, մշակութեան Հօր հասկ։ Բանին Որգոյ ուռ, էակից Սուրբ Հոգւոյն ծնունդ, ըստ պօղոսական ձայնին օգնել ի յաշխարհի, երկնաւոր կոչմանն բաժանորդ, մանաւանդ թէ ըմբռնեալ իսկ ի վկայ չարչարանացն Քրիստոսի, տէր Յիզտիբուզիտ։

Պետրոս կրտսեր ամենայն եպիսկոպոսաց խոնարհեալ ի հեռուստ հպավորաբար առ ոտս տեառն զեկուցանէ ողջոյն։

Վատթաստութեան չափով չափեցաք զմեզ. թէպէտ և փառաւորեցաւ Քրիստոս ի մարմինս ձեր, անարժանք ի մօտոյ՝ բացուստ ի բաց մեծ միջոցաւ անջատեալք, ընդ աղօտ զաղօթից ձերոց նշմարեմք նշոյլս. առ ձեզ զօրացեալ պարծանք, և զմեզ յաղթահարէ ակնակորութիւն։

Արդ որք առաջադէմագ նկրտիք, քաջ նահատակք և զրահազգեստք, վահանաւորք, պատենազէն սաղաւարտեալք, ի նիզակախուռն գումարութեանդ, յորում յաղթութեան ձերում կանգնի նշան տէրունի, յիշեսջիք և զմեզ զմիրթս, և զապա(յ)զէնս և զընդ ամենայն ախտիւ անկեալ, փրկել ի գերութենէն թշնամւոյն, և ազատել ի ծառայութենէ ախտից ի վերայ յարուցելոց։ Որպէս կա[յ]ցեր զրով գիտել տա(ն)ջիր։

***

Պատմական պարագաներու հիման վրա, նամակիս գրության թվականը կրնա դրվիլ 549—553 տարիներուն միջև։



Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԵՏ*

III.— Հայրենի տունը

Կոմիտաս անշշուկ մտավ Պոլիս։ Ոչ ոք լուր ունեցավ իր ժամանումեն։ Անցած էր վաղուց գինովության մեր այն շրջանը, երբ Կովկասեն եկողները ծափով ու ծնծղայով կդիմավորեր Պոլիսը։ Միծաղելի այդ զուլգ տարիեն հետո, ի՞նչ դեմքեր աննշմար պիտի մտնեին այլևս Պոլիս, ու պիտի չգիտնայինք երբեք, եթե մեր թերթերը երկու տողով լուր տված չըլլային անոնց մասին։

Այդպես մեզ եկավ Կոմիտասս։ Ոչ թերթերուն խմբագրատուններեր մեն եկավ, ինչպես իրմե առաջ շատերն ըրին, ոչ ալ աղմուկ ստեղծել ուզեց շուրջը։ Միակ այցելությունը,— վտանգավոր այց այն օրերուն,— ան տվավ Օրմանյանին, որ իր դաստիարակն էր եղեր Ճեմարանին մեջ և որ այդ պահուն կճգներ Ըթը փողոցի իր բնակարանը, ամբաստանության բեռը ուսին։

Կոմիտաս իսկույն վազեց գնաց Կուտինա։ Տարիներ առաջ ան անգամ մը այցի եկեր էր իր հայրենիքը։

Կարո Ուշագլյան, ակնարկելով Սողոմոն սարկավագի 1892-ի այդ այցին, կգրե՝

«Ըսին որ կուգա։ Կրոնավորի տարազով։ մեր դպրոցի սրահեն ներս մտավ դեղին մորուքով, սիրուն, աշխույժ, ժպտադեմ երիտասարդ մը։ Մենք, փոքրիկ մանուկներ, տակավին նոր կոխած դպրատան սեմը, իրար անցանք։ Երկու ընկերներ, կերևա ամենեն երկչոտներս, պահվըտեցանք նստարանին տակը։ Տեսավ և ծռելով ժպտեցավ մեզի։ Օ՜, որքա՜ն ամչցանք։ Լավ չեմ հիշեր ինչ ըրինք։ Ելա՞նք մեր թաքստոցեն, թե մնացինք հոն։ Շատ փոքր էի։

... Ծկեղեցվո մեջ, կրոնական արարողություններու կմասնակցեր։ Կերգեր. ի՞նչ անուշ ձայն։ Ավետարան կկարդար...

Դուրսը, երբ զինք կպատվասիրեին ընտանիքներու մեջ, կերգեր աղգային կես-կրոնական և այլ երգեր»[32]։

Ադոնցմե մեկն է եղած Թադեոս առաքյալի ձոնված սա երգը.

«Առաւօտ լուսաբեր Հայաստան երկրի,
Բուրաստան ծաղկալի կողմանց ճիւսիսոյ։
Նախկին լուսաւորիչ, պսակ պանծալի,
Թադէոս առաքեալ, ընդէ՞ր կաս հեռի...»։

Կոմիտաս իր սույն այցեն օգտված է գրի առնելու համար հոգևոր երգեր։ Երևանի գրականության և արվեստի թանգարանին մեջ ծրար մը կա, որ «Հոգևոր եղանակներ, հավաքեց Սողոմոն սարկավագ Սողոմոնյանը, Կուտինայում, [18]92 թ. (օգոստոս) 24» մակագրությունը կը կրե և կբովանդակե 9 զանազան հոգևոր երգեր իր ծննդավայրի ավանդական եղանակներով[33]։

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի N N Ա-ից, Բ—Զ—է-ից, Ը—Թ-ից և Ժ-ից։

[32] «Արևմուտք», Փարիզ, 1946 դեկտեմբեր 15, էջ 7։

[33] Պետրոս սարկավագ Թերթերյան, «Էջմիածին», 1962 փետրվար, էջ 55։

Կոմիտաս, իր ծննդավայրին տված սույն առաջին այցելության առթիվ, կերևա թե երաժշտության դասեր ալ ավանդած է։

Հրանտ Հրահան, Կոմիտասին նվիրված իր հուշերուն մեջ, կարդատպե նաև հուշերը, զորս 1949-ին Մարսիլիայեն ղրկած է իրեն տիկին Զատուհի Սիմիթյան։ Տիկին Սիմիթյան կգրե այնտեղ. «Սողոմոնը ինձմե տասնհինգ տարով մեծ էր, երբ առաջին անգամ այցելեց մեր քաղաքը 1893 հոկտեմբերին և սկսավ ինձ և քույրերուս երգի դաս տալ։ Մենք ազգական էինք անոր հետ իմ հոր՝ Տեր-Արթինյաններու կողմե։ Ես շատ ուրախ էի այն ատեն, որ նոր Կոմիտասի վերածված և այնքան գեղեցիկ ձայն ու շնորհք ունեցող ազգականի մը աշակերտուհին եմ։ Ան այնքան ուշադիր և հոգածու էր մեզ հանդեպ, որ կարելի չէ պատկերացնել, մանավանդ այնքան բարի էր, անկեղծ և հայրենասեր»[34]։

(Դիտել տանք, որ Կոմիտասի մասին հուշեր գրողներեն շատ շատերուն պես, տիկին Սիմիթյանի հիշողությունը ևս դավաճանած է իրեն։ Կոմիտաս 1892-ին է, որ իր ծննդավայրը այցելած է, տակավին սարկավագ)։

Այն օրերուն վանքեն դուրս բոլորովին անծանոթ մըն էր Կոմիտասը, դեռ պարզապես Սողոմոն սարկավագ։ Ոչ իսկ «Արարատ»-ի մեջ երևցած էր ան։ Մեկու մը միայն ուշադրությունը գրավեց ան այդ պահուն։

«Ո՞վ կհիշե այսօր, թե Կոմիտասի վրա ուշադրություն հրավիրող առաջին թրքահայ հրապարակագիրը եղած է Արփիար Արփիարյան, որ Կոստանդնուպոլսո «Հայրենիք» օրաթերթին 1892 նոյեմբեր 21-ի թիվին մեջ, անմոռանալի վարդապետին նվիրած է ամբողջ հոդված մը,— հավանականաբար անդրանիկը որ գրված ըլլա անոր մասին։

Կոմիտաս իր վարդապետական աստիճանը չէր ստացած տակավին, կկոչվեր Սողոմոն սարկավագ Սողոմոնյան, և առողջությունը դարմանելու համար Գևորգյան ճեմարանեն մեկնելով գացած էր իր ծննդավայրը, Քյոթահիա։

Երբ էջմիածին վերադառնալու միջոցին Պոլիս կուգա, Արփիարյանի փափագին վրա կայցելե «Հայրենիք»-ի խմբագրատունը և երկարորեն կտեսակցի անոր հետ։ «Նիհար ու հիվանդագեմ երիտասարդ մըն էր,— կգրե Արփիարյան,— թեպետև քյոթահիացի, բայց կովկաս կրթվելով բռնված էր մասնագիտության ախտեն։ Հին երգերու հետքերը գտնել, նախնիքներու բանաստեղծությունները հավաքել ոչ թե միայն խոսքերովն, այլ եղանակներովը, նորերն ալ անոնց մեջ խառնել ու տոհմային (գրաքննությունը չէր թույլատրեր «ազգային» բառը) ժողովրդական երգերու հավաքածո մը մեզ տալ։ Ահա ինչ որ այս երիտասարդը իրեն կետ նպատակի դրած էր»։

Արփիարյան կհայտնե, թե իրենց տեսակցության ընթացքին Սողոմոն սարկավագ էապես շահեկան խոսքեր ըսավ իրենց, բայց կխոստովանի, թե ինք «շատ բան հասկնալու կարողություններն զուրկ էր»։

Կոմիտաս այդ թվականին հետաղրոտած էր Արարատյան գավառը, Շիրակը, Սուրմալուն, Ապարանը, և հավաքած մոտ 200 երգ, խոսքն ու եղանակը միասին։ Հավաքած էր նաև հայկական հին ձայնանիշերու, խազերու բավական ճոխ բանակություն մը, որոնցմե Արփիարյանի կթվե մեկ բանին.— Տավտապա. Կոզեռն. Քատուն. Ավազերեցն. Կարմիր Վանեցին. Սարկավագն. Ճիշող. Սայլն. և այլն։

Իր խոսակցին խնդրանքին վրա, Սողոմոն սարկավագ կերգե հիշած առաջին երգը.

Տրվել եմ կելնիմ սարը,
Հապր պան, օյ, օյ.
Ջը գտա ֆիտան յարը,
Հապր պան, օյ, օյ։

Արփիարյան թեև շատ հմայիչ չի գտներ այս երգը, բայց կրսե, թե կրկին ուներ որոշ գեղեցկություն, ու կավելցնե. «Եղանակը տխուր բան մը ունի իր մեջ, թեև կենթադրեմ, թե զվարթության համար հորինված ըլլա։ Բայց արևելյան եղանակներու մեջ զվարթության ու տխրության սահմանները ճիշտ չեն գծված»։

Շատ հավանականաբար ըսել կուզեր, թե «Արևելքի մեջ չկա զվարթություն, որուն տխրություն չխառնվի»։ Բայց գրաքննիչը գլխուն վրա էր...»[35]։

Հիմա երկրորդ անգամ կուգար Կուտինա։

Իր առաքելության սկսելե առաջ՝ Կոմիտաս կուզեր ուխտի երթալ իր հայրենիքը։ 1910-ի ամռան եկավ ան Կուտինա՝ մանկության իր օրերը վերապրելու հոն պահ մը։ Տասներկու տարեկան տխեղծ մանուկ մըն էր ան, երբ 1881-ին մեկներ էր էջմիածին. շուրջ երեք տասնյակ տարի հետո ան կուզար հպարտ՝ համբուրելու համար սեմը իր հայրենի տան։ Դեռ կապրեր պառավ ու այազուրկ իր հորաքույրը, որ մոր դեր կատարեր էր իրեն՝ երբոր որբ էր մնացեր։ «Կուզեր այդ չափազանց անշուք տնակին անսեթևեթ մեկ անկյունը

[34] «Էջմիածին», 1950, թիվ III—IV, էջ 30։

[35] Կապրոճ (Արամ Անտոնյան), «Նոթեր Կոմիտասի մասին», «Արևմուտք», Փարիզ, 1966 դեկտեմբեր 15, էջ 6։

բազմիլ ու քովիկը նստեցնել անկար հորաքույրը», ու ատեն մը քաշված ապրիլ հոդ, համեստ արհեստավորներու այդ քաղաքին մեջ, որովհետև «հաճելի էր իրեն ձեռակերպություններեն ու ծեքծեքումներեն դերծ մնալ և անհոգ ու անհաշիվ բազմոցին վրա տարածվիլ ժամերով՝ տեսակցելու համար այդ նախնական մարդոց հետ»[36]։

Հիշեցնենք, որ Կոմիտաս մայրը չէր ճանչցած Իր հորաքույր Զմրուխտն էր, որ գայն մեծցուց մոր մը պես։ Լուսանկարի մը վրա, զոր սարկավագ ձեռնադրվելե հետո դրկած է հորաքրոջը, Սողոմոն կգրե, թե գայն «նվիրում է յուր մոր Զմրուխտին որդիական անմոռաց սիրով»։ Նույն այդ լուսանկարին կոնակը հետևյալ ձոնը կա.

Թե խոր ու անանց սարեր ու ձորեր,
Կատղած, փրփրած ու անձիր ծովեր
Պատնեշ կը կանգնեն իբր հիրսկա կամ մաջ,
Ես դարձյալ անան կը սուրամ առաջ.
Ժրպիտ երեսիս
Կրկին կը տեսնես[37]։

Վարդապետին նվիրած իր հուշերուն մեջ, Հրանտ Հրահան կարտագրե նաև Կոմիտասի հասակակից և այժմ Երևան բնակող կուտինացի Սահակ Երեմյանի իրեն պատմածը անոր այցին մասին Կուտինա, 1910-ին։ Ըստ Երեմյանի պատմածին, «տարիների բացակայությունից հետո, Կոմիտասը երբ փառքով և հաղթանակով վերադառնում է Քյոթահիա, պատիվներով ու հարգանքով շրջապատված իր հայրենակիցներից, որոնք տեսել էին իր անբախտ մանկությունը և որբի տառապանքը փողոցներում թափառական վիճակի մեջ, հուզված փափագ է հայտնել այցելել նախ իր հայրենի տունը։ Ականատեսները պատմում են, թե այդ հանդիպումը այնքա՛ն սրտաճմլիկ ու ցնցող է եղել, որ ներկաները չեն կարողացել զսպել իրենց արցունքները։

Կոմիտասը ողջագուրվում է իր հարազատների հետ՝ ազգական, հորեղբորորդի, և ապա մտնում իր հայրենական սենյակը ու սկսում նախ լուռ և գլխիկոր շոշափել ու փայփայել պատերն ու լուսամուտները, և հետո մատերի մեջ գուրգուրանքով սեղմել այն փոքրիկ գամը, որից իր սիրասուն մոր կենդանագիրն է կախված եղել տասնհինգ տարի առաջ։ Ու անկարող այլևս զսպել իր պոռթկացող հուզումը, բարձրաձայն հեկեկում է։

Կոմիտասը այդ փայտաշեն ու կիսափուլ սենյակի մեջ է ծնվել. այնտեղ են հաջորդաբար մահացել իր նորատի բանաստեղծ մայրն ու երգիչ դժբախտ հայրը։ Դուրս գալով հայրենի տնից, Կոմիտասը հուզված գնում է դեպի Վարի թաղի աղջային Ս. Էջմիածնի անվան դպրոցը, ուր ինքը լորս տարի աշակերտել էր։ Սրահ մտնելիս, նա բնազդական մղումով, վազում է դեպի ձախ անկյունը և ծալապատիկ նստում փոշոտ ու կեղտոտ տախտակամածի վրա, վճռականապես մերժելով խուճապահար թաղականների խնդրանքը՝ թիկնաթոռի վրա նստելու...

Տխուր, բայց անողոք շեշտով նա պատասխանում է.

— Տարիներ առաջ ոչ ոք չզուրգուրաց ինձ վրա՝ երբ ես նստում էի ճիշտ այստեղ առանց բազմոցի, մինչ ուրիշներ կույտ բազմոցների վրա էին նստում։ Ես երկու անգամ ծանր հիվանդացել եմ այստեղ։ Այժմ թույլ տվեք ինձ, իմ հոժար կամքով, նստել ու հիշել իմ անցյալ դժբախտ օրերը և այս լոր տախտակները...»[38]։

Ստուգիվ, «Սողոմոնին մանկությունը հատկանշված է թշվառություններով։ Դեռ միամյա՝ մորմեն որբացած է։ Մեծցած է ցնցոտապատ ու խլրտ, մերթ լալով ու մերթ երգելով, կես մը տունը կես մը փողոցը, անցորդները նեղելով ու խաղընկերները ցավցընելով»[39]։

* * *

Կոմիտաս կուղեր իր առաջին համերգը տալ իր հայրենիքին։ Հարյուրի մոտ երկսեռ պարմանիներ հավաքեց իսկույն և սկսավ գանոնք մարզել Վերի Ս. Թորոս եկեղեցիի ընդարձակ գավիթին մեջ։ Շուտով պատրաստ էր խումբը, ու գիշեր մը համերգը տեղի ունեցավ։

«Թովիչ, խելահեղ բան մըն էր ան ու անսովոր երևույթ մը գավառի խաղաղ ու միօրինակ կյանքին մեջ։ Կարծեք հրեշտակներու մելանույշ մեղեդիներ կհոսեին աղոթավայրի առիքին վրա տարածվող աստղազարդ երկինքեն։ Ժողովուրդը լուզելով բաժնվեցավ, երբ համերգը վերջացավ։

Քանի մը օր վերջ վարժարաններու հոգաբարձությունը բացօթյա խնջույք մը սարքեց Վարդապետին ի պատիվ։ Կուտինան կոնակը տված է սարերու շարքի մը, որոնց բարձրագույնը, Երլիջե, ետեևն կհսկե մյուսներուն վրա։ Ագռու առուն անոր ընգերքեն բխելով՝ ադամանդազարդ գոտիի մը նման գալարված է կողին շուրջ։

Մեծ արվեստագետի մը հետ լման օր մը անցուցինք այդ ջուրին եզերքը։ Համակրելի

[36] Առնակ, «Կոմիտաս վարդապետ», «Հայրենիք» ամսագիր», 1936 հունվար, էջ 73։

[37] Առնակ, «Ամենուն տարեցույցը», 1924, էջ 305—306։

[38] «Էջմիածին», 1950, թիվ III—IV, էջ 21—22։

[39] Առնակ, «Կոմիտաս վարդապետ», «Հայրենիք» ամսագիր», 1936 հունվար, էջ 73։

անձնավորություն մըն էր՝ կենսուրախ, համակ զգացում ու համակ մեղեդի։ Սեր ուներ ամեն բանի, որ գեղեցիկ էր ու ազնիվ,— ազգականներուն, հայրենակիցներուն, ազգին, մարդկության, ու մտքի և հոգիի ստեղծագործությունները հանդեպ։ Ուշագրավ էին իր խրոխտ հասակն ու կիսաքարձ մորուքը։ Կեցվածքով պարզ, բայց վսեմ էր։ Իր մտավոր զարգացանքը այնքան պսպղուն էր, որ պետք չուներ տարազի պերճանքին։ Ան Կուտինայի մեծագույն տուրքն էր հայության և հայության ալ պարծանքը։

... Երբ մութը կոխեց, ինքն ալ մեզ պատվեց իր մեկ դյուցազներգությունովը, զոր ներկայացուց կարծեմ ԺԷ դարի գործ։ Լիալուսինը իր ցոլքերը կհեղուր մարգերուն ու իրերուն վրա։ Վարը կխորունկնար ձոր մը՝ մեկ կողմեն լայնալով կազմելու համար հեռուն, Կուտինայի գունագեղ դաշտը, և մյուս կողմեն սահմանափակ՝ բլրակ մը, որուն գագաթը թառած էր ջրաղացի սպիտակ շենք մը։

Վարդապետը իր ողջ հասակով ցցված էր ապառաժի մը կատարը... իր հագագեն ջրվիժող երգի ալիքները կարձագանքեին հանդիպակաց ջրաղացի բլուրեն և մեղմ սյուքին հետ կերկարաձգվեին միջոցի ամայություններուն մեջ։

Բոլորս ալ շշմած՝ ընկողմանած էինք իր պատվանդանին շուրջ։ Ցերեկվան զվարճություններեն ետք, բարձրություններու լուռ ու խորհրդավոր զոգին մեջ ադիկա պահն էր խոկումի ու հոգեկան խոովիչ ըմբոխնումի մը։

Այն օրը եղավ մեզի երկնային արբշռանքի օր մը։

Եվ վերջապես, ապատարագ մըն ալ մատույց առաջնորդանիստ Ս. Աստվածածին մայր եկեղեցիին մեջ Վարի թաղին թաղական խորհուրդին խնդրանքով՝ հակառակ անոր, որ չէր սիրեր պատարագիչ ըլլալ։ Տաճարը նեղ կուգար երկու թաղերեն խռնված ժողովուրդին համար։ Իր օրհներգություններն ու սուրբգրական ընթերցանությունը, թեև պարզ ու կարճ, բայց անուշ ոլորումներ կպարունակեին. անոնք ձերբազատված էին մյուս հոգևորականներու եղանակներուն զիկզակումներեն ու հարձակումներեն։ Թարմություն մըն ալ ա՛ս էր մեզ համար։

Կոմիտասի հայրենակից Գ. Ուշագյան, 1962 հուլիս 29-ին Փարիզեն կգրե ինձի.

«Կոմիտաս վարդապետ Կուտինա եկավ 1910-ին հունիս, հուլիս և օգոստոս ամիսները մնալով։ Էջմիածնեն վերադարձին կարծեմ առաջին կոնսերը տվավ իր ծննդավայրը՝ Քյոթահիա, կիրակի օր մը այր մարդոց, և հաջորդ երկուշաբթի օրը՝ կիներուն։ Գոյացած գումարը մոտ 120 կարմիր ոսկի, որ քաղաքին համար աննախընթաց երևույթ մըն էր, ձգեց եկեղեցվո վարչության, հանձնարարելով հարմար շենք մը գնել, վերածել սրահի և ընթերցատան, հասույթը հատկացնելով դպրոցին, և խոստացավ Պոլսեն զրկել պակսած գումարը։ Շենքը գնվեցավ արդարև, բայց հետագա դեպքերը թույլ չտվին, որ ծրագիրը ամբողջապես իրականանա»։

Բայց, ավա՜ղ, Կոմիտաս միայն վարդ չքաղեց իր հայրենիքեն։ Առնակ կպաամե.

«Բայց Կոմիտաս վարդապետ հալածվեցավ իր համաքաղաքացիներեն ալ։ Այնտեղ ալ կային տերտերներ ու աղաներ ազգականական կապերով իրարու զոդված, որոնք իրենց տգիտությունով ու պահպանողականությունով կփայլեին, ինչպես ամեն տեղ։ Անոնք չքաշվեցան Քյոչեմ անունը փակցնել այս զգայուն էակինս։

Այդ քրթմնջյունները ստվեր չբերին սակայն այն ջերմ սիրույն մեջ, որով Կուտինան ողջագուրեց իր մեծ զավակը ու ճամբու դրավ դեպի իր նոր առաքելությունը։

IV.— Նոր առաքելության սեմին

Կոմիտաս Կուտինայեն կրաժնվեր ամոքած։

Առաքելության սկսելու արդեն ժամն էր։

Երբ սակայն ոտքը կկոխեր ան Պոլիս, խոով էր հայ կյանքը ներսեն։ Ճիշտ է, երկու տարի անցեր էր 1908 հուլիսեն ի վեր և առջի օրերու գինովությունը այլևս չկար։ Ծափերու և կեցցեներու տարիները գացեր էին, եկեր էր ներքին վեճերու թունոտ շրջանը։ Հայ կուսակցությունները ատելությամբ բռնկած էին մեկը մյուսին դեմ, և Ազգային ժողովը կրկես մըն էր փոխադարձ կրքի և տխուր բռնկումներու։ Մամուլը իր կարգին հայելին էր հայ կյանքը կրծող այդ ոխին, սին պայքարներու անձնատուր ինքն ալ։ Հայ մտավորականությունը չէր կրնար չվարակվիլ ինք ևս այս ընդհանուր շփոթությենեն, և անընդունակ էր դարձած շեշտ դնելու հայ կյանքին վրա։ Մեծ ճիգը դեռ չկար. ան պիտի գար քիչ հետո, երբ հոգիները սթափեին պահ մը մեծ մտահոգությանց սեմին, ու հայ մտավորականությունը իր կարգին ինքն ալ բռնկեր։

Դժբախտ պահու մը կուգար այսպես հայ երգի վարպետը մեզի։ Ցէր գիտեր որու վրա կոթնիլ՝ իր մեծ առաքելության սկսելու համար։ Ոչ մթնոլորտը կճանչնար, ոչ ալ մարդիկը։ Քառորդ դար անցեր էր արդեն, քանի բաժնվեր էր այս ափերեն, ու բաժնվեր էր դեռ մանուկ։ Հետո շատ բան փոխված էր քառորդ դարու մեջ այս ափերուն վրա ալ։ Համիդ ամլացուցեր էր հայ հոգին։

Կուսակցական պայքարներու այլասերած այդ պահուն, առհասարակ փափուկ էր դիրքը արվեստի մարդոց, երբ ոտք կոխեին Պոլիս։ Դժվար էր անոնց համար հաճելի ըլլալ հոսանքներեն ամեն մեկուն։ Այդ հոսանքներեն որևէ մեկուն հանդեպ համակրանքի ժեստ մը կխրտշեցներ մյուսները։

Նույն կացութիւնի մեջ Կոմիտասն ալ էր։ Մանավանդ ան Պոլիս կուգար ճանչցված արդեն իբրև օրմանյանական, և այդ՝ այնպիսի պահու մը, երբ նախկին պատրիարքը ամբաստանութիւնց ու դատի տակ էր, և երբ ոճիր կսեպվեր անոր համակիր եղած ըլլալ։ Ու դեռ ավելին։ Կոմիտաս Պոլիս կմտներ շատ գեշ տրամադրված դեպի հայ կուսակցութիւնները։ Խրտշած էր դաշնակցութիւնն ցույց տված վերաբերումեն դեպի Մայր Աթոռի գործերը, ինչպես կերևա 1909-ին Ջոպանյանին ուղղված իր նամակներեն։

Կոմիտաս Պոլսո մեջ տարբեր դաշնակցականներ գտավ հանկարծ իր դեմը։ Նախ՝ Պոլիս էին այդ պահուն Ճեմարանի իր նախկին երկու ընկերները՝ Վռամյանն ու Լևոն Շանթը, հին օրերու իրենց հոգեկան կապերը միշտ անեղծ պահած։ Պոլիս էին կամ շուտով պիտի դային հայ գրականութիւնի քանի մը բացառիկ դեմքերը, ինչպիսին էին, օրինակ, Սիամանթոն ու Վարուժանը, զորս չէր կապկանդեր կուսակցական որևէ կապ։ Եվ վերջապես «Ազատամարտ»-ի գլուխն էր Ռուբեն Զարդարյանի նման դեմք մը, որ արվեստն ու հայրենասիրությունը չշփոթեց երբեք կուսակցականության հետ։

Եվ արդեն Կոմիտաս երբեք առիթ չունեցավ կուսակցութիւնց հանդեպ դիրք ճշտելու Պոլսո իր գործունեության առեն։ Անտեսեց զանոնք, ու վեր ուզեց մնալ բոլորեն։ Բռնկած իր առաքելության կիրքովը, անիմաստ թվեցան իրեն շուրջի վեճերը։ Ազկե էր, որ ջերմ եղան միշտ սրտի իր կապերը բոլոր անոնց հետ, որոնք հայ ժողովուրդի գերագույն շահերուն նախանձախնդրությամբն էին տարված իրեն պես, ինչ կուսակցութենե ալ ըլլային անոնք։ Ավելին. ինքն իսկ կապ մը եղավ բոլոր անոնց միջև, որոնք հայրենասիրությունը վեր կդավանեին ամեն նկատումե։

Կոմիտաս երբ Պոլիս կուգար 1910-ին, քառասունը նոր լրացուցած էր։ Աշխատանքի և պտղաբերության 20 տարիներ թողուցած էր ան արդեն ետին, բայց դեռ կգտնվեր իր ուժերուն թարմությանը մեջ, իր նոր առաքելության սեմին։

V.— Տիրացուներն ու իրենց մոլտուքը

Ինչ խոսք, որ Կոմիտաս իր գործունեության առաջին օրեն պայքար էր մղեր տիրացուներուն դեմ։ «Արարատ»-ի մեջ հրատարակած հոդվածներու ընթացքին, իր հարկանքի առիթը տալով հանդերձ ինչ-ինչ հայ դպիրներու, որոնցմե էին եղեր, օրինակ, առաջին Պապա Համբարձումը և Նիկողայոս Թաշճյանը, իրենց մատուցած որոշ ծառայությանց համար, անխնա պիտի ըլլար բոլոր անոնց հանդեպ, որոնք պղծեր էին հայ եկեղեցական երաժշտությունը, գինետան «շարքի»-ները մտցնելով հայ եկեղեցիներեն ներս։

Ան իր դաստխոսությանց մեջ ալ հանախ ծաղրի նշավակ կըներ զանոնք, նմանցնելով անոնց անճոռնի երգեցողությունը։

Ողբացյալ Հ. Կարապետ Տեր-Սահակյան կպատմե, թե 1907-ին, Եվրոպայեն դարձին, Վենետիկեն անցնելուն, Կոմիտաս հանդիպեր էր նաև Ս. Ղազար, ուր երգահանդես մը տվեր էր։ Այդ առթիվ «այնքան ճշտությամբ կձևացնե Պոլսո տիրացուներու ոնգային գեղգեղանքները, որ հարկ կլինի այնքան հուզումե վերջ նաև ծիծաղե արտասվել։ Ի՞նչ օգտակար խրատ պիտի ըլլար այս տիրացուներուն, եթե ներկա գտնվեին...»[40]։

Կոմիտասի Պոլիս գալը անդամ մը ևս պիտի փախցներ տիրացուներուն քունը։ Կղգային անոնք, որ իրենց վերջին օրերը կապրին թրքական «մանիֆ»-ները, զորս կերգեին հայ եկեղեցիներու մեջ շարականի տեղ։

Տիրացուները չհանդգնեցան սակայն ուղղակի գրոհ տալ։ Կոմիտասի կողքին էին հայ մտավորականությունն անխտիր ու հայ թերթերը մեծ մասամբ, իսկ երիտասարդությունը գուրգուրանքով շրջապատած էր զայն։

Բայց, ավա՜ղ, թերթեր ալ կային, որոնք կշարունակեին համ առնել «շարքի»-ներեն ու «մանիֆ»-ներեն, և առիթ կփնտռեին Կոմիտասը խծծելու։ Այդ թերթերեն մեկը «ժամանակ»-ն էր, ուր Քասիմ, խմբագրապետը թերթին, տիրացուներու հովանավոր կմնար, ինչպես եղեր էր ժամանակին, «Հուրրիեթ»-են առաջ, երբ «Մանդումե»-ն կվարեր։

«Ժամանակ» տիրացուներու մասին Կոմիտասի ունեցած քանի մը արտահայտությունները հիմ բռնելով, գրեր էր քանի մը կծու տողեր, որոնց պատասխանել կստիպվեր Կոմիտաս, չուզելով, որ անախորժ մթնոլորտ մը ստեղծվեր առաջին համերգի նախօրյակին։

Կոմիտաս կգրեր այդ բացատրողականին մեջ.

«Ես չեմ ասել՝ Պոլսահայ երաժիշտները շատ հեռի են արժեքավոր ըլլալե», այլ՝ երբ հարցրել են իմ կարծիքը Պոլսո մեջ գործածված «եռաձայնի և քառաձայնի» մասին, ի միջի այլոց, ասել եմ, թե արժեքավոր չե՞ն կարող լինել (ուրեմն եռաձայներն ու քառա-

[40] Հ. Կարապետ Տեր-Սահակյան. «Բազմավեպ», 1907, թիվ է, էջ 377։

ձայները), քանի որ ամբողջ Թուրքիո մէջ երաժշտանոց չկա և «Պոլսահայ երաժիշտներ» Թուրքիո շրջափակին մէջ մեծցած և ուսած մարդիկ են։

Ես չեմ ասել՝ «նույնիսկ ինքնազարգացման մղումը չունին, և արդեն մեծ բան մը չեն արժեր, բայց իրենք շատ հավակնոտ են իրենց կարողության վրա», այլ ասել եմ. «նույնիսկ ճանաչում եմ պոլսահայ երաժիշտներ, որոնք մի բան չարժեն, բայց և թերթերի մէջ քննադատում են և հողվածներ տակ «մասնագետ երաժիշտ» են ստորագրում։ Օրինակն էլ բերել եմ, թե ինչպես (կարծեմ «Մանզումեի էֆքյարա»-ի մէջ) բազմաձայն երաժշտության մասին տարրական հասկացողություն չունեցող մեկը, առանց քաշվելու, դատափետում էր Չիլինկիրյանի եռաձայն պատարագը, որ իր բոլոր թերություններով, էլի մի բանի նման էր, քան «ինքզինքը սրբագրած եռաձայնը»։ Այսպիսիները արդեն «նույնիսկ ինքնազարգացման մղումը չունին և արդեն մեծ բան մը չե՞ն արժեր, բայց իրենք շատ հավակնոտ են իրենց կարողության վրա»։

Չեմ կամենում, իզուր տեղ, ընթերցող հասարակության միտքը մանր-մունր ուրիշ հարցերով զբաղեցնել։ Գործն ավելի՛ զորավոր է, քան խոսքն ու գրիչը։ Սակայն պիտի ասեմ, որ ես «չե՛մ շլացել իմ ընդունակությամբս»։ Ո՛չ ասել եմ և ոչ էլ գրել, թե Պոլսո հայ երաժիշտները ավելի կամ նվազ զորավոր երաժիշտներ կամ երաժշտագետներ չէին լինի կամ կլինեին, եթե համբավավոր մեծ բարեբարիս, պր. Աղեքսանդր Մանթաշյանի պես մարդոց հովանավորությունը վայելելով Եվրոպա գնացած լինեին։ Երաժշտության երկնապարզն շնորհը միայն Կոմիտաս վարդապետի վրա չի՛ իջել. նույնպես, գիտակցելով հանդերձ, թե մի դրական բան գիտեմ, ինձ «միակ երաժշտագետ» կամ «ճայ երաժշտության աստված» համարելու և հռչակելու ո՛չ հավակնություն եմ ունեցել և ոչ էլ երևակայել։ Ընդհակառակը, շատ տեղ, քանիցս առիթ եմ ունեցել մեծ բազմության առաջ խոստովանելու, որ եթե բախտն ինձ չժպտար և ես Ս. Էջմիածին և ապա իմ անգին բարեբար պր. Աղեքսանդր Մանթաշյանի միջոցավ Գերմանիա չգնայի, կլինեի իմ հայրենիքում՝ Կուտինայում, շատ-շատ մի կոշկակար, որովհետև որբիս խնամող Հարություն հորեղբայրս էլ կոշկակար էր և ակնհայտնի բան է, որ ես էլ, ամենայն հավանականությամբ, նրան պիտի աշակերտեի։

Այսպիսի խնդիրներով զբաղվելն ու զբաղեցնելը չե՛մ սիրում, բայց թյուրիմացությունների առաջն առնելու համար ստիպվեցա այս երկտողս գրելու։ Եթե հարմար կդատեք, բարի եղեք տպել տալու»։

Տիրացուներու հարուցած վիվուկին անուղղակի ձայնակից էր երբեմն նաև «Տաճար» կրոնաթերթը, որ 1909 հոկտեմբերեն սկսյալ կհրատարակվեր իբր քահանայից միության պաշտոնաթերթ, խմբագրական պատկառելի կազմով մը, որուն մէջ երաժշտագետներ այ կային, ինչպես Արիստակես Հիսարյան քահանան, համբավավոր Արիս Հովհաննեսյանի աշակերտ, որ «Տաճար»-ի էջերուն մէջ իսկ տպեց հայ ձայնագրության պատմությունը Իզմիրյանց մրցանակի ներկայացնելե և 1914-ին հատորով լույս ընծայելե առաջ։ «Տաճար»-ը անբարյացակամ տողեր հաճախ սպրդեցուց իր էջերուն մէջ Կոմիտասի մասին, երբեմն հարցումի, երբեմն այ, ավա՜ղ, հեգնության ձևով։

Նույն այդ «Տաճար»-ին մէջ էր, որ իրենք գիրենք շարականագետ կարծող Պոլսո հայ տերտերներեն մեկը, Աբրահամ քահանա Էպեյան, Կոմիտասի Պոլիս ոտք կոխելեն դեռ առաջ, առաջարկեր էր, որ Կոմիտաս վարդապետ հրապարակ հանե իր տեսությունները շարականի խազերու մասին[42]։ Ամեն անգամ, որ Կոմիտասի առաքելությունը չլատելու փորձ կըլլար, զայն չհանդուրժողները ստուգիվ խազերու խնդիրը մեջտեղ կհանեին միշտ և կպահանջեին, որ շուտով հրապարակ հանե ան խազերու գաղտնիքը, այն միամիտ կասկածով, թե այդ խազերուն մասին բոլոր ըսվածները իրական որեէ հիմք չունին։

Կոմիտաս, պատասխանելով Աբրահամ քահանայի կողմե «Տաճար»-ի միջոցավ իրեն ուղղված «մարտահրավեր»-ին, 1910 մարտ 15-ին էջմիածնեն բացատրական մը կղրկեր նույն այդ «Տաճար»-ին, ըսելով.

«Իրավ է, ես գտել եմ հայ խազերի բանալին, և նույնիսկ կարդում եմ պարզ դրվածները. բայց դեռ վերջակետին չեմ հասած, դի յուրաքանչյուր խազի խորհրդավոր իմաստին թափանցելու համար, նույնիսկ տասնյակ ձեռագիրներ պրպտելով, երբեմն ամիսներ են սահում, իսկ ձեռքիս տակ եղած խազերը, այն էլ անուն ունեցողները 198 հատ են առ այժմ, մի կողմ թողնենք դեռ անանուն խազերը, որոնք խիստ շատ են։

Այսպիսի, զուտ մասնագիտական, խնդիրների մասին անհնարին է գրել մեր պարբերական մամուլի էջերում այս պատճառներով. նախ՝ որ պարբերական մամուլի էջերը շատ սուղ են. երկրորդ՝ զուտ գիտական, տարիներ շարունակվող ուսումնասիրություններով հասարակությունն զբաղեցնել աննպա-

[41] «Ժամանակ», 1910 հոկտեմբեր 8։

[42] «Տաճար», 1910 հունվար 31։

տակ է. երրորդ՝ խոշոր և մեծաքանակ ծախս է պահանջում. և չորրորդ՝ ուսումնասիրությանս վերջակետ չեմ դրել։

Առ այժմ, երկու խոսքով ամփոփեմ, թե ինչ տարրեր ունի հայ խաղարանությունը.

ա. ձայնաստեղծանի խաղեր.
բ. ձայներանգի խաղեր.
գ. գարդախաղեր.
դ. ձայնաձումի խաղեր.
ե. ամանակի խաղեր.
զ. բանալի խաղեր.
է. առոգանության խաղեր.
ը. կետադրության խաղեր.
թ. ոճական խաղեր.
ժ. կապող և գատող խաղեր.
ժա. կիսանիշ խաղեր, և այլն։

Մի այսպիսի ուսումնասիրություն կատարելության հասցնելու համար պետք է ներհուն լինել տիրապետս սա հիմնական ուսմունքներին ու գիտություններին.—տառաչափության, վանկաչափության, բառաչափության, տողաչափության, առոգանության, շեշտադրության, կետադրության, խաղաչափության, խաղագիտության, լեզվին (բառերի իսկական և հին առման), իմաստասիրության (երկրաչափության, թվաբանության, աստղաբաշխության և երաժշտության՝ հին առմամբ), խաղերի ծագման, զարգացման, անկման և արդի պատմության, համեմատական խաղաբանության և այլն. և ապա կարելի է՝ գաղտնին երևան հանել։

Թող հայ հասարակությունը ներող, մանավանդ համբերող լինի՝ մինչև որ հնարավոր չափով, կատարելապես վերջացնեմ իմ տասն և վեց ամյակից ավելի տեղ տաժանագին ուսումնասիրություններս։ Հույս ունիմ, թե մոտիկ ապագայում, առանձին հատորներով, հասարակության սեփականություն պիտի դառնան։

Խաղերու խնդիրը, ինչպես պիտի տեսնենք, դեռ շատ իրենց բերնին ծամոց բրին չապիկով և առանց շապիկի տիրացուները...

VI.— «Խոռոյի երգը»

Համեստ սրահի մը մեջ, որպիսին էր Թերոյի արհեստանոցի սրահը, ուր, ըսենք ի դեպ, տեղի կունենային բոլոր հանդիսավոր ելույթները տասնյակ մը տարիե ի վեր, Կոմիտաս իր առաջին շփումն ունեցավ 1910 հոկտեմբեր 31-ին, Պոլսո մտավորականության հետ։ Կոմիտաս իր անդրանիկ հանդիպումին իսկ հայ մտավորականությունը կապեց իրեն։ Եվ այդ կապը լծուցավ երբեք։

Ու հիմա՝ փակագիծ մը։

«Հուրրիեթ»-ի առաջին ամիսներն էին ու նոր էինք հիմներ էսայան նախկին սանուց միությունը։ Ուզեցինք գրական-գեղարվեստական հանգես մը տալ, էսայան դպրոցի կարոտ աշակերտներու օգին, Թերայի արհեստանոցի սրահին մեջ։ Հայտագիրը բավական ճոխ էր, դամ, այն տարիներու բարբառով՝ «շքեղ»։ Երկու սիրողներ,—հետո հայանի դեմքեր դանագան ասպարեզներու վրա,—հատված մը ներկայացուցին Պարոնյանի «Արևելյան առամնարույժ»-են։ Շահեն Հովհաննեսյան, որ Սահմանադրության հետ ասպարեզ եկած խոստումնալից ուժերեն մեկն էր և որ սակայն բեմը շուտ լքեց, արտասանեց «Դարբիններու գործադուլ»-ը։ Բայց գրվան «կլու»-ն օրիորդ Նվարդ Վասիլյանն էր, որ եվրոպական քանի մը սիրուն կտորներ երգեց։ Հազիվ կեցեր էր ծափերու հեղեղը, հանկարծ սրահեն մեկը պոռաց.

— Հայերեն երգ մը, օրիորդ...

Խեղճ աղջիկը շվարեցավ մեկեն, գոյն առավ-տվավ, և հազիվ կրցավ թոթովել.

— Հայերեն երգ չեմ գիտեր, պարոն...

Այս քանի մը անկեղծ խոսքերը բավական եղան, որ սրահին մեջ ընդհանուր մուլտուք մը սկսի, որուն կընկերանային բացականչություններ ալ։ Քիչ առաջվան ծափերուն արձագանքը խեղդվեցավ քրթմնջյուններու մեջ։

Օրերով Թերայի մեջ խոսվեցավ դեպքը։ Երգիծաթերթերու էջերուն մեջ ալ անցավ։ Հայ աղջիկ մը հանդգներ էր նախատել հայ երգը, և ան ալ հրապարակով. ադեկ ավելի մեծ սրբապղծություն կարելի՞ էր երևակայել այն օրերու մեր հայրենասիրության համար, զոր անընդհատ կհրահրեին մեր ազգային և հեղափոխական երգերը...

Արդ, կերևի Կոմիտասին պատմեր էին երկու տարի առաջվան այս միջադեպը։ Եվ ան քանի մը ժամ խոսելե հետո հայ ժողովրդական երգին առանձնահատկությանց վրա, զգացուց, թե երգերը, զորս մեր հայրենասիրությունը ստեղծեր է սահմանեն ասդին ու անդին, հայ հոգիին սխրագործությունը չեն, հակառակ իրենց աղվոր բառերուն, որոնք կգգվեն մեր զգացումները։ Հայ երգը գտնելու համար պետք է հայ գեղջուկին մոտենալ, ըսավ, և հայ երգ ստեղծելու համար պետք է երթալ ներշնչվիլ անկե. այդ երգը դեռ մենք ստեղծած չենք։

Եվ այդ օրն էր, որ Կոմիտաս մեզ առաջին անգամ երգեց «Կոունկ»-ն ու «Անտունիկ»-ն։

Կոմիտասի առաջին հաղթանակն էր այդ։

Ան մեզ կախարդեր էր «Խոռոյի երգ»-ով։

Կոմիտասի սուրբ առաջին շփումը Պոլսո հայ մտավորականության հետ և այդ առթիվ ստեղծված հոգեկան կապը այլևս անջնջելի պիտի մնային անկե ետք։

Ժամն էր այլևս մոտենալու լայն խավերուն, նույնիսկ առաջին համերգեն առաջ։

Համեմատաբար փոքր սրահի մը առջև էր տվեր իր սույն առաջին դասախոսությունը։ Հիմա ավելի ընդարձակ տեղ մը պետք էր, խոսելու համար ավելի լայն հասարակության մը։ Խորհուրդ տվին իրեն այդ դասախոսությունը ընել Ղալաթիո խորհրդարանին մեջ։

Ուրեմ՝ գիտնար, թե խութի պիտի հանդիպեր իր գործունեությունը իր առաջին քայլերեն, թե պիտի զլացվեր իրեն սրահը, ճիշտ այն սրահը, ուր ազգին երևելիները կհավաքվեին շաբաթե շաբաթ, ճառերու մեջ սպառելու համար իրենց ազգասիրությունը։

VII.—«Ազգը» սրահ չուզեր տալ

Եթե չկային տիրացուները իրենց երբեմնի հեղինակության մեջ, բրածոներ միշտ կային ազգային գործերու գլուխը, որոնք, ժամանակին քանցքեն բռնած, կփորձեին կեցնել զայն իր ճամբուն վրա։

Այդ հեք բրածոներեն մեկն էր Ուսումնական խորհուրդի այն օրերու ատենապետը, որ միևնույն ատեն անդամ էր Ազգային երեսփոխանական ժողովին, և կգրավեր մեկը անոր աթոռներեն։ Արիստակես Գասպարյան կկոչվեր, փաստաբան էր արհեստով, և կաշխատակցեր ալ «Բյուզանդիոն»-ին։ Եվ իր դիմադիծը կատարյալ ընելու համար ըսենք, թե մեկն էր Օրմանյան պատրիարքը դատի տվող ազգային երևելիներեն։

Արդ, այս երանելիին էր, որ պետք պիտի ունենար Կոմիտաս, որպեսզի իրեն տրամադրվի Ազգային ժողովի սրահը՝ իր անդրանիկ մեծ դասախոսության համար։ Պատասխանը այդ առթիվ անոր մոտ կատարված դիմումին մերժողական եղավ։

«Ժողովրդային զարգացման թշնամիներ» խորագրին տակ մեր թերթին մեջ կգրեինք այդ առթիվ.

«Հայտնի է, թե ծանոթ Ձայնագրագետ Կոմիտաս վարդապետ իր երկրորդ դասախոսությունը պիտի տար Ղալաթիո խորհրդարանի սրահին մեջ, քանի որ բերայի արհեստանոցի սրահը, ուր տեղի ունեցավ իր առաջին դասախոսությունը, շատ անբավական էր հասարակության։ Կոմիտաս վարդապետ ադոր համար նախապես հավանությունը առած էր Դուրյան պատրիարքին և պատրիարքական փոխանորդին։ Բայց ահա մի ոմն Արիստակես Գասպարյան, որ «Կեսարյոր»-ներեն մեկն է եղեր խորհրդարանի, կարգիլ այդ սրահին մեջ դասախոսության կատարումը, և Կոմիտաս վարդապետ կհարկադրվի հետաձգել զայն։

Պ. Արիստակես Գասպարյան ի՞նչ պատճառ ուներ այդ դասախոսության, և այն ալ ա՞յնքան շահագրգռական և հմայիչ դասախոսության մը արգելք հանդիսանալու։ Նախ առարկեր է, թե եթե սրահը Կոմիտաս վարդապետի տրամադրելի դարձվի՝ վաղը կուսակցականներ ալ կրնան այդպիսի բան մը պահանջել. բայց դարձյալ «փաստաբան» Արիստակես Գասպարյանը ինքն էր, որ իր այդ առարկության անտեղի ըլլալը ինքնաբերաբար խոստովանած կըլլա՝ հայտարարելով, որ սրահը կրնա տրամադրելի դարձնել, եթե Կոմիտաս վարդապետ իր հասույթին մեկ մասը հանձնե խորհրդարանի սրահի հանձնախումբին։ Այս մեկը մյուսեն ավելի ամոթալի պատրվակները և պահանջները շա՞տ պերճախոս են բացատրելու համար, թե հետադիմության ոգին ո՞րքան համառ է այն անձերուն մոտ, զորս մենք սկիզբեն ի վեր հետադիմական կկոչենք։

Խորհրդարանի սրահը մինչև հիմա տրամադրելի դարձած է ոչ միայն Ազգային ժողովի նիստերուն, այլև ուրիշ կարգի գումարումներու և բանախոսություններու։ Եվ հիմա, այդպիսի արգելք մը ի՞նչպես կարելի է հարուցանել դասախոսության մը դեմ, որ ամեն հայու սրտին ու մտքին չափազանց մոտիկ վայելք մըն է որ պիտի հայթայթե, հայ գեղարվեստական հանճարին ծանոթացումը ընելով։ Սահմանադրական ներկա ազատություններուն մեջ, երբ, վերջապես, զերծ քաղաքական և գրաքննական շղթաներե, հայ ժողովուրդը առիթը պիտի ունենա այդպիսի առավելություններե օգտվելու, ահա՝ ժողովրդային զարգացման ներքին թշնամիներ խափանարար դիկանդնին ադոնց։

Եվ տխուր հո՞ն է, որ ժողովրդային զարգացման այդպիսի թշնամի մըն է, որ ներկայիս պատիվը կվայելե Ուսումնական խորհուրդի, այսինքն հանրային լուսավորության հոգը ունեցող մարմնի մը ատենապետությունը մարելու...

Կեցցե՛... ազգային հառաջդիմությունը»[43]։

Արիստակես Գասպարյան իսկույն հերքում մը փութացուց թերթին, ըսելով որ դիմող անձնավորությունը պատրիարքական առտոնագիր մը կամ անոր նմանող որևէ թուղթ չուներ ի ձեռին, իսկ Կոմիտաս վարդապետ անձամբ կամ գրավորապես դիմած չէր ինքը և նմանօրինակ դիմում մը պաշտոնապես հանձնարարված չէր Ազգային ժողովի ելնմտից հանձնախումբին, և որ հետևաբար ինքը անձնապես չէր կրնար ուզված արտոնությունը տալ։ Ի վերջո նոյեմ. ի, որ կանոնական ձեականությանը թերության և թյուրիմացության պատճառով Կոմիտաս վարդապետը հուզման մատնված է[44]։

---

[43] «Ազատամարտ», 1910 նոյեմբեր 7/20, թիվ 433։

[44] «Ազատամարտ», 1910 նոյեմբեր 10/23, թիվ 435։

Թերթը, փաստեր մատնանշելե հետո, իր կարգին կավելցներ.

«Կոմիտաս վարդապետ իրավամբ վրդովված է իրեն նկատմամբ ցույց տրված այս ընթացքներեն, ինքը՝ որ Եվրոպայի մեջ օտար հարկեր, համալսարանի սրահներ բաց գտած է իր գասախոսություններուն առջև, և հիմա հոս, Պոլսո մեջ, բուռ մը հետադիմականներ իրեն դեմ կգոցեն գերազանցապես ազգային սրահ մը...»։

Այսպես էր, որ վիժեցավ Կոմիտասի գասախոսությունը։ Ան այլևս առեն չունեցավ նոր սրահ փնտռելու, քանի որ արդեն կմոտենային իր առաջին համերգին օրերը։

...Ինչ ընենք, որ Արիստակես Գասպարյան Պոլսո մտավորականության հետ մեկտեղ գնաց նահատակվիլ ինքն ալ 1915-ի սարսափներուն միջոցին։ Պատմությունը պետք է որ բոլո՛ր ճանչնա Կոմիտասը գառնացողներեն։ Ուսումնական խորհուրդի ատենապետը մեկն էր անոնցմե։

VIII.— Գումգափուն և իր հավարը

Առանց խոչընդոտներու չէ, որ Կոմիտասի առաջին համերգը տեղի ունեցավ։ Հետադիմությունը հոդ ալ կեցեր էր իր ճամբուն վրա...

Քրթմնջյուններ Կոմիտաս սկսեր էր Կովկասեն քաղել։ Իր առաջին համերգն իսկ էջմիածնի մեջ, 1904-ին, թեր ու դեմ հոսանքներ ստեղծեր էր իր շուրջը։ Այդ տարակարծությունները հետզհետե սաստկացան, երբ տարի մը հետո, 1905-ին, Կոմիտաս Թիֆլիսի իր առաջին համերգը կուտար, ան ալ թատերական բեմի մը վրա։ Նույնիսկ խծբծանքի առարկա ընողներ եղան իր արվեստն ու ձեռնհասությունը։

«Առաջին անգամ, երբ Վագներին ներկայացրին Պարիսում,—կգրեր Տիգրան Չավեն «Մուրճ»-ի մեջ,—նրա հանճարը ողջունվեց շվոցներով և անարգանքով։ Նա գտավ նույն վերաբերմունքը գրեթե ամեն տեղ, Ավստրիայում, Իտալիայում և մինչև անգամ իր հայրենի երկրում։ Հետևաբար շատ բնական էր, որ հայ հասարակությունը չդնահատեր տաղանդավոր վարդապետին գործը, այնպես՝ ինչպես որ պետք է։ Նա գալիս էր մեզ մոտ մի նոր արվեստով, մի նոր դպրոցով, որը գիտակցելով կատարելու համար, անհրաժեշտ էր նրա հետ մոտից ծանոթանալ ու փնտռել, գտնել ու ճշտել նրա հիմքերն ու ղեկավարող օրենքները»։

Հետագային, Կոմիտասի մասին անոր ժամանակակիցներու հուշերը հատորի մը մեջ ամփոփելու առթիվ, սապես պիտի գրեր հայ հեղինակ մը, ակնարկելով այն դառնություններուն, զորս մեծ արվեստագետը ստիպված էր եղեր ճաշակել Կովկասի իր համերգներուն առթիվ ալ.

«Թեև Կոմիտասի ամեն մի համերգի առթիվ հայ և օտար մամուլում լույս էին տեսնում սրտաբեկ դրվատումներով հոդվածներ, ուր Կոմիտասը մեծարվում էր թե՛ որպես կոմպոզիտոր, թե՛ որպես խմբավար և թե՛ որպես կատարող, սակայն, այնուամենայնիվ, հետադիմական բուրժուական մամուլն ու կղերապահպանողական խավերի ձայնը փորձում էր ստվերապատել նրա անձն ու տաղանդը։ Ի՞նչ «ամբարշտությամբ Կոմիտասը «հանդգնում» էր հավաքել հայ գեղջուկ երգը հայ գյուղերից և անցկացնելով այն դերազանց արվեստի բովից՝ վերընծայել նորից իր հարազատ տիրոջը՝ հայ ժողովրդին։ Ի՞նչ «սրբապղծություն» էր այն, որ Կոմիտասը բեմ էր բարձրացնում աշխարհիկ զգացումներ ու ապրումներ արտահայտող այդ երգերը։ Ի՞նչ «անարգանք» էր կղերականի հոշման ու սքեմի նկատմամբ այն, որ նա երգում էր «սեր» ու «յար» և այլն։

Հետադիմական մամուլն ու կղերապահպանողական խավերը հասան մինչև այնտեղ, որ փորձեցին նույնիսկ կասկածի տակ առնել Կոմիտասի երաժշտական այնքան վավերական տաղանդն ու հմտությունը։ Հայտնի է, որ կոմիտասի ժամանակակիցը, միջազգային համբավի հասած խոշորագույն երաժշտագետներն անգամ զարմացած էին մնում նրա երաժշտական տաղանդի ու հմտության առջև։ Չնայած դրան, հայ հետադիմական մամուլը գրում էր, թե «երբեք ու կեստարվան մեջ կոշկակարություն անգամ չի կարելի սորվիլ, ոչ թե երաժշտություն»։

Ի պատիվ Կոմիտասի տաղանդի խորությանն ու նրա նկարագրի մեծությանը, պետք է նշել, որ կղերապահպանողական ու բուրժուական հետադիմական այդ խավերին որքան էլ որ հաջողվեց ստվերապատել Կոմիտասի անձնական կյանքն ու ծանրացնել այն հուզումներով ու վշտերով, այնուամենայնիվ, նրանք չկարողացան նվազեցնել նրա ստեղծագործական եռանդը, շեղել նրան իր միսիայից»[45]։

* * *

Հավար Պոլիսն ալ տվավ։ Բայց այս անգամ ուղղակի տիրացուները չէին, որ ազդանշանը պիտի տային։

Ճիշտ է, որ սահմանադրութենեն անմիջապես հետո, Իզմիրլյանի երկրորդ պատրիարքության շրջանին, վերակազմվեր էր երաժշտական քննիչ հանձնաժողովը և իր կազմին մեջ մտեր էին Սուքիաս Պալրքճյան քա-

[45] Գ. Հ. Գասպարյան, «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», Երևան, 1960, էջ 19—20։

հանան, ինչպես նաև Լեոն Խանչյան, Գրիգոր Զուլհայան և Համբարձում Գրիգորյան իրեն երաժշտագետ, որոնց վրա պիտի ավելնար 1911-ին Խորեն քահանա Հարությունյանը։ Տիրացուները այլևս չէին կրնար կոթնիլ սակայն այս հանձնաժողովին վրա, ինչպես կոթներ էին «Հուրրիեթ»-են առաջ։ Հիմա ուրիշ հենարաններ պետք էին անոնց՝ կովելու համար նոր մտայնությանց դեմ, որոնց նպատակն էր այլևս վերջ տալ իրենց սանձարձակ տիրապետությանը հայ եկեղեցիներու մեջ։

Պոլսո հետադիմությունը չէր կրնար սակայն ետ մնալ Կովկասիենեն։ Ան ալ փորձեց պուտ մը լեղի խմցնել հայոց կռունկին՝ հայ ժողովուրդի հոգիին խորերեն եկող անուշ ձայնը մեր կոնծած հոգիներուն բերելե առաջ։

Այս անգամ լեղին հայոց Պատրիարքարանն էր, որ կհրամցներ անոր։

Եվ ահա առաջին համերգեն քիչ առաջ, որ նշանակված էր 1910 նոյեմբեր 21-ին (4 դեկտեմբեր), Կոմիտաս հետևյալ գիրը կստանար.

«Գերաշնորհ Տ. Կոմիտաս ծ. վ. Սողոմոնյան, ի Կ. Պոլիս.

Կցավինք ի տեղեկություն հաղորդել Ձեր դերապատվության, որ Հայոց Եկեղեցվո սրբազան օրինաց և կարգաց բացարձակ հակառակ է եկեղեցվո սուրբ պատարագի երգեցողությունը աշխարհիկ թատերական վրայեն, որպիսին է Բրտի-Շանի բեմեն երգելը։ Հետևաբար կարգիլենք Ձեր հայտագրին Ա մասը ի գործ դնել ի բուժումն դայթակղյալ մտաց և կարտոնենք Բ մասը՝ ի գոհացումն Ձեր անդուգական տաղանդավոր երգեցողության հետաքրքիրներուն։

Պատրիարքական փոխանորդ
ՂԵՎՈՆԴ Ծ. Վ. ԴՈՒՐՅԱՆ»

Այն օրերուն մեզ մութ մնացին, թե որո՞նք էին եղեր Պատրիարքարանը սայթաքեցնողները։ Մեր զգացած զայրույթին մեջ հետամուտ չեղանք իսկական թելադրիչները որոնելու։ Մեր զայրույթը կրկնապատկող պարագան ան էր, որ այդ պահուն Պատրիարքական Աթոռին վրա կրազմեր Հայ եկեղեցվո ամենեն անբասիր և ամենեն լայնախոհ դեմքերեն մեկը, Հայ եկեղեցվո իսկական մեկ պարծանքը՝ Եղիշե Դուրյան, և մեզ համար անբացատրելի կմնար, թե ինչպես կրնար թելադրած ըլլալ ան իր փոխանորդին նման գիր մը շարադրել ու ղրկել։

Եվ ավա՜ղ, այս ապաշնորհ գիրը Կոմիտասի ձեռքը հասավ համերգեն քիչ առաջ, մինչ արդեն լուրը տարածված էր հասարակության մեջ՝ ցասման փոթորիկ մը ստեղծելով։ Հայ մտավորականներու խումբ մը Կոմիտասի մոտ խուժեց սրտապնդելու համար զայն, և թելադրելու համար անոր, որ արհամարհե Պատրիարքարանեն ստացած գիրը։

Թեմ վազեր էինք նաև երիտասարդ լրագրողներու, ու Կոմիտասը տեսանք զայրույթի իր այդ վսեմ պահուն։ Ամբողջ մարմնով կդողար, ու կպոռար միևնույն ատեն, թե նման գրեր չեն կրնար ետ կեցնել զինքը իր ճանապարհեն, թե էջմիածնի միաբան է ինքը և Բույլտվություն ունի Հայոց Հայրիկեն՝ Հայ եկեղեցվո երգերուն քաղցրությունը ցույց տալ նույնիսկ աշխարհիկ կարծված բեմերու վրա։

Թե միայն Պատրիարքարանեն չէր դար այս զզվելի խաչակրությունը և թե դավադիրներու չար խմբակ մը կար, որ ամեն միջոց կփորձեր խութեր ստեղծել՝ պարզ եղավ անկե, որ կարգ մը ստահակներ գացեր էին իմաց տալու Բերայի ոստիկանության, թե այդ օրը հեղափոխական երգեր պիտի երգվին Բրտի-Շանի բեմին վրա։ Խումբ մը մայրիկ ալ ստիպվեցան ոստիկանության վազել իսկույն, հայտնելու համար, որ խռովարարներու սադրանքն են իրեն հասած այդ շարամիտ շշուկները։

Ըսենք սակայն, որ Կոմիտասի համերգը խանգարելու այս փորձերը անակնկալ մը չէին այդ օրը։ Արդեն քանի մը օրե ի վեր պրոլյցներ կային, թե դավեր կնյութվին և թե Պատրիարքարանն ալ անոնց գործիք է։ Այնպես որ հայ մտավորական շրջանակներու մեջ սրտմտություն մը ծավալիլ սկսած էր արդեն, ու բողոքները Պատրիարքարան տեղալ սկսեր էին։ Նույնիսկ մամուլը կդգացներ, թե դավեր դարբնվելու վրա են, և զգուշության հրավեր կկարդար։ Բժիշկ Բաղիր խան, որ մեկն էր Կոմիտասի ամենեն ջերմ համակիրներեն, համերգեն օր մը առաջ հոդված մը գրած էր «Բյուզանդիոն»-ի մեջ՝ «Որը դուզտս կլանէք և դմժդուկս բամէք» խորագրին ներքև, ակնարկելով տարածված բամբասանքներուն։ Այդ բամբասանքներեն մեկն ալ այն էր, թե Հայ եկեղեցվո վարդապետ մը ի՞նչպես կրնա երևալ աշխարհիկ բեմի մը վրա, ան ալ հոգևորական տարազով...

Կոմիտաս՝ այդ օրը զգաց, թե ամբողջ ժողովուրդ մը իր կողքին ունի, և թե անոր կրոնված, կրնա այլևս արհամարհել ամեն խութ ու խոչընդոտ։

(Շարունակելի)

---

46 Արիստակես Բաճանա Էիսարլյան, «Ընդարձակ տարեցույց», 1927, էջ 254։

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Կառավարական նոր նախագծումներ.— Անցյալ դեկտեմբերի 20—23-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Գերագույն սովետի հերթական նստաշրջանը, որ հաստատվեցին հանրապետության 1966 թվականի բյուջեն և ժողովրդական տնտեսության զարգացման պլանը:

Հանրապետության այս տարվա պետական բյուջեն կազմում է, ինչպես եկամուտների այնպես էլ ծախսերի գծով 643 000 543 ռուբլի: Դա 4,6 տոկոսով ավելի է, քան 1965 թվականի բյուջեն: Նախատեսված ընդհանուր գումարից շուրջ 316 000 000 հատկացվելու է ժողովրդական տնտեսության հետագա զարգացմանը և շինարարությանը, մոտ 300 000 000 ռուբլի տրվելու է լուսավորության, առողջապահության, սոցիալական ապահովության կարիքներին:

Ըստ ժողովրդական տնտեսության զարգացման պլանի, 1966 թվականին հանրապետության ազգային եկամուտը նախորդ՝ 1965 թվականի համեմատությամբ, կաճի 10,5 տոկոսով, արդյունաբերության արտադրանքը՝ 11,4 տոկոսով, բնակարանային շինարարության ծավալը՝ 5,8 տոկոսով և այլն:

Կոմիտասի անվան քառյակի մեծարումը.— Լրացավ Կոմիտասի անվան քառյակի երաժշտական գործունեության 40 տարին: Այդ նշանակալից տարեթիվը ջերմորեն նշվեց Երևանի երաժշտասեր հասարակայնության կողմից:

Իր հոբելյանի առթիվ քառյակը արժանացավ պետական մրցանակի Հայաստանի կառավարության կողմից: Մրցանակը հանձնվեց հանդիսավոր իրադրության պայմաններում, խուռներամ բազմության ներկայությամբ, Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում: Վաստակավոր երաժշտական քառյակին ջերմորեն ողջունեցին մայրաքաղաքի երաժշտական կազմակերպությունների և կառավարական մարմինների ներկայացուցիչները: Ստացվել էին բազմաթիվ շնորհավորական հեռագրեր Սովետական Միության տարբեր քաղաքներից: Հանդիսավոր երեկոյի վերջում տեղի ունեցավ ճոխ հաղորդ՝ քառյակի և Երևանի լավագույն ուժերի մասնակցությամբ:

Կոմիտասի անվան քառյակը կազմակերպվել է 1925 թվականին Մոսկվայի երաժշտանոցի հայ ուսանողների կողմից: Այն ժամանակ քառյակի մեջ էին մտնում Ա. Գաբրիելյանը, Լ. Օհանջանյանը, Մ. Տերյանը և Ս. Ասլամազյանը: 40 տարվա ընթացքում քառյակը հանդես է եկել Սովետական Միության բոլոր քաղաքներում և աշխարհի ամենատարբեր երկրներում, ամենուրեք արժանանալով բարձր գնահատականի և մեծ հաջողության:

Հանդիսավոր երեկոյին պետական մրցանակի վկայագրեր հանձնվեցին քառյակի ներկա կազմի անդամներին՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստներ Ա. Գաբրիելյանին, Ս. Ասլամազյանին, Ռ. Դավթյանին և Գ. Թալալյանին:

Հովհաննես Աբելյանի ծննդյան 100-ամյակը.— Վերջերս Հայաստանի արվեստի աշխատողները, հատկապես թատերասեր հասարակայնությունը, ջերմորեն նշեցին ժողովրդական դերասան Հովհաննես Աբելյանի ծննդյան 100-ամյակը (մահացած 1935 թվականին):

Հովհաննես Աբելյանը հայ բեմի հանճարեղ հսկաներից էր, նման Պ. Ադամյանի ու Ամիրանուշի: Նա այն շողշողուն աստղերից էր, որոնց շնորհիվ հայ թատրոնը փայլեց տասնամյակներ շարունակ, դուրս գալով մեծ արվեստի ուղիները: Իր տաղանդի հզորության շնորհիվ, Հովհաննես Աբելյանը միևնույն հաջողությամբ հանդես է եկել թե՛ արևմտաեվրոպական դասական հերոսների և թե՛ իր ժամանակի հայ հերոսների թատերական գործերի կատարմամբ:

Հովհաննես Աբելյանը իր շուրջ 50-ամյա թատերական գործունեության ընթացքում շրջել է Անդրկովկասի, Ռուսաստանի և արտասահմանյան շատ երկրների հայաշատ կենտրոնները և իր հյուրախաղերով հիացմամբ պատճառել հանդիսականներին: Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո, 1923 թվականին, վերադառնալով հայրենիք, իր ամբողջ ուժերը ի սպաս դրեց հայրենի մշակույթի զարգացմանը:

Հայաստանի մամուլը ևս լայնորեն նշեց Հովհաննես Աբելյանի ծննդյան 100-ամյակը: Արվեստի ինստիտուտում, թատրոններում և ակումբներում տեղի ունեցան հոբելյանական երեկոներ:

Երևանի օպերային թատրոնում տեղի ունեցավ կառավարական հանդիսավոր երեկո՝ նվիրված մեծ դերասանին: Երեկոյին ներկա էին պետական, արվեստի աշխատողների, Ադրբեջանի և Վրաստանի թատերական աշխատողների ներկայացուցիչներ: Հանդիսավոր երեկոն ջերմ ու բարձր գնահատանքի խոսքերով բացեց մշակույթի մինիստր Ռ. Խաչատրյանը:

Հովհաննես Աբելյանի կյանքի և գործունեության մասին բանախոսեց արվեստի վաստակավոր գործիչ Ս. Մելիքսեթյանը: Այնուհետև հանդես եկան Ադրբեջանի վաստակավոր դերասանուհի Ս. Սադիխովան, Վրաստանի ժողովրդական դերասան Վ. Նինիձեն, Հայաստանի ժողովրդական դերասանուհի Ժաստենը, ժողովրդական դերասան Գ. Ջանիբեկյանը և ուրիշներ:

Փանոս Թերլեմեզյանի ծննդյան 100-ամյակը.— Լրացավ հայ ականավոր գեղանկարիչ Փանոս Թերլեմեզյանի ծննդյան 100-ամյակը: Այդ առթիվ գիտությունների ակադեմիայի մեծ դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր երեկո: Փանոս Թերլեմեզյանի կյանքի և ստեղծագործության մասին ընդարձակ բանախոսություն կարդաց ժողովրդական նկարիչ Արա Սարգսյանը: Նա Թերլեմեզյանին բնորոշեց որպես հայ դասական գեղանկարչության խոշորագույն ներկայացուցիչներից մեկի, որի ստեղծած կտավները մտել են հայ ազգային նկարչության ոսկյա գանձարանը:

Երեկո նվիրված Ավետիք Իսահակյանին.— Մեծանուն բանաստեղծի ծննդյան 90-ամյակի կապակցությամբ, Հայֆիլարմոնիայի հանդեսային մեծ դահլիճում, շուրջ 1 500 հանդիսականների ներկայությամբ, տեղի ունեցավ գրական-գեղարվեստական երեկո: Դրագիրը կազմված էր բացառապես վարպետի ստեղծագործություններից: Կատարվեցին բազմաթիվ երգեր՝ գրված Իսահակյանի բանաստեղծությունների վրա, ինչպես նաև արտասանվեցին նրա լավագույն բանաստեղծությունները: Երեկոյին մասնակցեցին Երևանի թատերական և երաժշտական լավագույն ուժերը:

Լվովի գաղթօջախի պատմությունը.— Հայաստանի պատմության ինստիտուտի աշխատողների և առհասարակ պատմագիտների շրջանում մեծ հետաքրքրություն է առաջ բերել Լվովի պատմական թանգարանի գիտական աշխատող Ի. Կրիվոնոսի աշխատությունը Լվովի հայ գաղութի պատմության մասին: Նա 10 տարի զբաղվել է այդ հարցով և սկզբնաղբյուրների հիման վրա տվել այդ գաղութի ամբողջ պատմությունը:

ԺԷ դարում հաստատվելով Լվովում, հայ գաղթականները տնտեսական լայն կապեր են ստեղծել ոչ միայն հարևան երկրների, այլև Հնդկաստանի ու Մերձավոր Արևելքի երկրների հետ: Լվովում եղել են հայկական դպրոցներ, եկեղեցի, գրադարան, տպարան: Պատմաբանների կարծիքով, Ի. Կրիվոնոսի աշխատությունը առաջին լիարժեք ուսումնասիրությունն է Լվովի հայ գաղութի պատմության մասին:

Հետաքրքրական գիրք.— Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս է ընծայել «Հայ ժողովրդական հանելուկներ» արժեքավոր հատորը: Հանելուկները հավաքել ու կազմել է բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Հարությունյանը: Հատորը հեղինակի երկարամյա և քրտնաջան աշխատանքի արդյունքն է, որի մեջ նա աշխատել է ընդգրկել հայ ժողովրդական հանելուկների ողջ հարստությունը իր բազմակողմանիությամբ:

Հատորի մեջ հանելուկները դասավորված են ըստ թեմաների: Գիրքն ունի հարուստ ծանոթագրություններ:

Գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտը հատոր առ հատոր հրատարակել է և պիտի շարունակի հրատարակել հայկական հեքիաթներ, հանելուկներ և առածներ:

Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցը.— Լրացավ Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի 25-ամյակը: Այդ ժամանակամիջոցում դպրոցը տվել է ավելի քան 900 շրջանավարտ, որոնց թվում ականավոր դիրիժորներ, ջութակահարներ, կոմպոզիտորներ:

Այժմ դպրոցում սովորում է 850 աշակերտ, որոնք ընդգրկված են դաշնամուրի, թավջութակի և այլ դասարաններում:

Նոր կառուցումներ.— Ընթացիկ 1966 թվականին շինարարական աշխատանքները նոր ծավալ ու թափ կստանան Երևանում: Բացի արդյունաբերական, բնակարանային, դպրոցական, առողջապահական և այլ կարգի շենքերից, այս տարի սկսվելու է կառուցումը կարևոր նշանակություն ունեցող մի շարք հանրային մշակութային հաստատությունների:

Պոլիտեխնիկական ինստիտուտին կից կառուցվելու է էլեկտրոնիկայի խնդիրների ուսումնասիրությանը նվիրված խոշոր լաբորատորիա: Կսկսվի Կոմիտասի անվան պետական երաժշտանոցի նոր շենքի կառուցումը: «Հայֆիլմ» կինոստուդիան կունենա իր նոր հարմարավետ շենքը, որը հնարավորություն կտա ֆիլմերի նկարահանման հետ կապված բոլոր աշխատանքները կատարել տեղում: Ալեքսանդր Մասնիկյանի անվան հանրային գրադարանի համար Կսկսվի նոր, հարմարավետ շենքի կառուցումը: Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի 3 ինստիտուտները կունենան նորակառույց փառահեղ շենքեր:

Երևանում, Հրազդանի ափին, կսկսվի նոր մարզադաշտի (ստադիոնի) կառուցումը 75 հազար հանդիսականների համար:

Մարզական պալատ Երևանում.— Երևանում նախատեսված է կառուցել մարզական պալատ: Պալատի նախագիծը արդեն կազմված է և հաստատված: Կառուցումը սկսվելու է այս տարի: Պալատը կառուցվելու է Դիզեզնակարերդի բարձունքին:

Նախագծի համաձայն պալատը կունենա բոլորաձև հանդիսասրահ 10 000 հանդիսականների համար: Սրահի որոշ մասը կունենա շարժական հարմարանք, որի շնորհիվ, անհրաժեշտության դեպքում, կարելի է տեղերի քանակը ավելացնել ևս 1 600 աթոռով:

Հանդիսասրահից բացի, պալատը կունենա բաց լողավազան, փորձասենյակներ, մարզադահլիճներ և այլ հարմարություններ: Բացի մարզային մրցումներից, պալատում կարելի է տալ ներկայացումներ, անցկացնել ժողովներ ու հանդիսություններ:

Քիմիական նոր գործարան.— Երևանում գործարկվեց քիմիական ռեակտիվների գործարանի առաջին հերթը: Իր տեսակի մեջ գործարանը խոշորագույններից մեկն է Սովետական Միության մեջ: Գործարանի արտադրամասերը գրավում են 22 հեկտար տարածություն:

Մինչև ընթացիկ տարվա վերջը գործարանը կաշխատի ամբողջ կարողությամբ և կտա հարյուրավոր տոննա քիմիական բարդ միացություններից կազմված նյութեր:

Հրուշակեղենի գործարանում — Երևանի հրուշակեղենի գործարանը վերջերս սկսել է արտադրել նոր տեսակի բարձրորակ շոկոլատներ՝ «Զվարթնոց», «Աղթամար», «Սասունցի Դավիթ», «Տիեզերք», «Գայանե»: Նոր տեսակի շոկոլատները մեծ սպառում ունեն: Նրանք տեղավորված են գեղեցիկ ձևավորված տուփերի մեջ և անմիջապես գնորդի ուշադրությունն են գրավում:

Շոկոլատներից բացի գործարանը թողարկում է մեծ քանակությամբ կանապան քաղցրեղեններ ու բարձրորակ քաղցրավենիք:

Հայաստանի երկաթուղագծերի էլեկտրիֆիկացումը.— Մի քանի տարի է, ինչ Անդրկովկասյան երկաթուղային վարչությունը ձեռնամուխ է եղել Անդրկովկասյան, այդ թվում նաև Հայաստանի երկաթուղիների էլեկտրիֆիկացման աշխատանքներին: Օրերս ավարտվեց Երևանից դեպի Արաքս կայարանն ընկած հատվածի էլեկտրիֆիկացումը: Ներկայիս այդ աշխատանքները կատարվում են Արաքս—Լենինական հատվածում (շուրջ 65 կիլոմետր), որն ավարտվելուց հետո գնացքները կարող են երթևեկել Լենինգրադից մինչև Սևան:

Հետագայում էլեկտրական գնացքներ կաշխատեն Երևանից Ղափան տանող երկաթուղու վրա:

Բնակելի նոր թաղամաս Երևանում.— Երևանում կառուցվում է բնակելի մի նոր խոշոր թաղամաս, որն ընկած է Նորքի և Ավան գյուղի միջև գտնվող ամայի սարալանջին: Նոր թաղամասը կոչվում է Նորքի բնակելի թաղամաս: Վերջին մեկ ամսում այստեղ բնակարան են ստացել շուրջ 15 000 երևանցիներ: Կառուցումը լրիվ ավարտելուց հետո, թաղամասը կունենա 65 000 բնակչություն:

Նոր թաղամասը կունենա իր դպրոցները, հիվանդանոցը, մշակութային և կենցաղային սպասարկության հաստատությունները: Կառուցված են կոյուղու, ջրմուղի, գազի, էլեկտրական գծեր, կենտրոնական ջեռուցման հարմարություններ: Ավանի ամբողջ ծորի երկարությամբ անց է կացված լայն, ասֆալտապատ մայրուղի, որը նոր թաղամասը կապում է քաղաքի հետ:

Նոր ջրհան կայան.— Նոր տարվա նախօրյակին Նոյեմբերյանի շրջանի աշխատավորները հանդիսավոր իրադրության մեջ կատարեցին իրենց նորակառույց ջրհան կայանի բացումը:

Կայանը բարդ և հետաքրքրական կառույց է: Հզոր պոմպերի օգնությամբ, Դեբետ գետի ջուրը լայնալանջ անդնդախոր ձորից մղվելու է դեպի սարահարթերը, ավելի քան 400 մետր բարձրության վրա: Կայանը բաղկացած է 4 աստիճանից, այսինքն, յուրաքանչյուր 100 մետր բարձրությունից հետո ջուրը նոր մղում է ստանալու:

Հասնելով նախատեսված բարձրության, ջուրը հոսելու է 130 կիլոմետր երկարություն ունեցող ջրանցքով և ոռոգելու է ավելի քան 4 000 հեկտար անջրդի հողեր, որոնք ընկած են լեռնալանջերին և սարահարթերին: Հողերի մեծ մասը հատկացվելու են խաղողի և պտղատու այգիների:

Նոր անցուղի.— Նոր տարվա նախօրյակին Երևանում բացվեց նորակառույց անցուղին, որը մայրաքաղաքի Լենինյան շրջանը կարճ ճանապարհով միացնում է Օրջոնիկիձեի շրջանին:

Անցուղին սկիզբ է առնում Օրջոնիկիձեի և Կալինինի անվան փողոցների խաչմերուկներում, անցնում է երկաթուղային կայարանի գծերի վրայով և միանում Բաքվի փողոցին: Այսպիսով գործարանային թաղամասից դեպի կայարանամերձ թաղամասը տանող ճանապարհը 6 կիլոմետրով կրճատվում է:

Անցուղին ունի 334 մետր երկարություն և 27 մետր լայնություն: Նա ծգվում է 88 հատ երկաթ-բետոնյա սյուների վրայով, որոնք կապվում են 23 կամրջաթռիչքներ: Այս խոշոր կամրջի վրայով երթևեկելու են էլեկտրաքարշեր, տրոլեյբուսներ և ավտոմոբիլներ, իսկ տակով անցնելու են գնացքները:

Այս անցուղին և Ավանի ծորում կառուցված չալն բարեկարգ ճանապարհը այն երկու խոշոր ու կարևոր մայրուղիներն են, որոնք կառուցվել են Երևանում 1965 թվականին:

Ինքնաշարժների արտադրության գործարան Երևանում.— Կառավարական մարմինների որոշմամբ, Երևանում կառուցվում է ինքնաշարժների արտադրության գործարան: Գործարանը կառուցվում է Ջանաքեռի սարալանջին, Թրիլիսյան պողոտայի վրա: Հիմնական արտադրամասի շենքը, որը գրավում է 27 000 քառակուսի մետր տարածություն, արդեն պատրաստ է, ուր այժմ կատարվում է արտադրական հաստոցների տեղադրում: Գործարանը կգրավի 23 հեկտար տարածություն:

Մինչև ընթացիկ տարվա վերջը, գործարանը կսկսի թողարկել բեռնատար ինքնաշարժներ՝ մեկ տոննա բեռնատարողությամբ: Նրանց առավելագույն արագությունը լինելու է 110 կիլոմետր մեկ ժամում:

Գործարանի կառուցմանը տեխնիկական մեծ օժանդակություն են ցույց տալիս Ռիգա և Ուլյանովսկ քաղաքների ինքնաշարժների գործարանների մասնագետները: